Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2016

Սոցիոլոգիական հետազոտություն QoLI-7/16
Վերջնական զեկույց FR-22arm/17

Հեղինակ՝ սոց. գ. թ. Ս. Մանուկյան
«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական
խորհրդատվությունների ինստիտուտ
5 մայիսի 2017թ.

Ազատության պող. 27,
4-րդ հարկ, ս. 402,
Երևան, 0014, ՀՀ
+374 10 20 47 72
+374 10 20 47 71
info@ipsc.am
www.ipsc.am

FR-22arm/17 05.05.2017թ.

Հայաստանի Հանրապետությունում «Կյանքի որակի հետազոտություն» 2016թ.

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Վերջնական զեկույց ՁԼ-7/16

Հեղինակ՝ սոց. գ. թ. Ս. Մանուկյան,
«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական
խորհրդատվությունների ինստիտուտ

Հաստատված է

Կ.Տ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ..... - 5 -

«Կյանքի որակի» հետազոտությունները և դրանց նպատակները ..... - 5 -
Կյանքի որակ հասկացությունը և կյանքի որակի ինդեքսները ..... - 5 -
Իրավիճակը Հայաստանում կյանքի որակի ինդեքսների շրջանակում և դրանց դինամիկան ..... - 7 -
Կյանքի որակի առանձին բաղադրիչների օբյեկտիվ վիճակը և դինամիկան ..... - 9 -

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... - 23 -

2.1. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ և ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ և ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ... - 23 -
2.2. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԻՆԴԵՔՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... - 29 -
2.3. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔԸ ..... - 30 -
2.4. ՀԱՐՑՎՈՂԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... - 32 -
2.5. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ..... - 35 -

3. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ..... - 36 -

3.1. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՆԴԵՔՍԻ և ԵՆԹԱԻՆԴԵՔՍՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2010-2016 ..... - 37 -
3.2. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՆԴԵՔՍԸ և ԵՆԹԱԻՆԴԵՔՍՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ 2015-2016 ..... - 40 -
3.3. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԻՆԴԵՔՍԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՐԱՆԱԲՆԱԿՆԵՐԻ և ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ..... - 44 -
3.4. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 2015-2016 ԹԹ. ..... - 46 -
Կյանքի որակի հանրապետական մակարդակում ինդեքսի խնդրահարույց բաղադրիչները ..... - 46 -
Կյանքի որակի հանրապետական մակարդակում ինդեքսի բարձր գնահատված բաղադրիչները ..... - 49 -
Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի բաղադրիչների դինամիկան 2013-2016 թթ. - 49 -

4. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ ..... - 55 -

4.1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԻՆԴԵՔՍԸ և ԴՐԱ ԴԻՆԱՄԻԿԱՆ ..... - 55 -
4.2. ԱՌԱՆՁԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2013-2016 ԹԹ. ..... - 56 -
Վիճակի ընդհանուր գնահատականը 2016 թ.-ին ..... - 57 -
Ենթակառուցվածքների գնահատականների դինամիկան, 2013-2016 թթ. ..... - 58 -

5. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԱՆՁԻ/ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿ ..... - 63 -

5.1. ԱՆՁԻ/ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԻՆԴԵՔՍԻ ԱՐԺԵՔՆԵՐՆ ՈՒ ԴԻՆԱՄԻԿԱՆ ..... - 63 -
5.2. ԱՆՁԻ/ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԻՆԴԵՔՍԸ և ԵՆԹԱԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ ..... - 64 -
5.3. ԱՆՁԻ/ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԻՆԴԵՔՍԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, 2012-2016 ԹԹ. ..... - 66 -

6. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ..... - 69 -

6.1. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ..... - 69 -
Բնակարանների սեփականությունը և տեսակները ..... - 69 -
Բնակարանների ընդհանուր վիճակը ..... - 70 -
Բնակարանների վերանորոգման դինամիկան ..... - 72 -
Բնակարանի վիճակի առանձին բնութագրերը ..... - 74 -
6.2. ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ..... - 75 -
Կենցաղային գույք և տեխնիկա ..... - 75 -
Անշարժ և շարժական գույք ..... - 76 -
Մննդամթերք ..... - 77 -
Բնակչության եկամտի աղբյուրները ..... - 83 -

Ընտանիքի բարեկեցության փոփոխության ընկալումները, 2011-2016 թթ. - 86 -
Ընտանիքի բարեկեցության փոփոխության սպասումները, 2013-2016 - 89 -
Կենսամակարդակի ֆինանսական համարժեքը հասարակական գնահատականներում - 91 -
6.3. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ - 92 -
Զբաղվածներ, գործազուրկներ և տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն - 92 -
Զբաղվածության կատեգորիաները Հայաստանի հասարակությունում - 95 -
Աշխատանք գտնելու դյուրության ընկալումները - 97 -
Վարձու աշխատողների աշխատանքի բնութագրերը - 99 -
6.4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ և ՈՐԱԿ - 107 -
6.5. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ - 109 -
6.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ - 110 -
Շրջակա միջավայրն աղտոտող բաղադրիչները - 110 -
Թափառող և վնասակար կենդանիներ - 111 -
Բավարարվածությունը իշխանությունների բնապահպանական գործունեությունից - 114 -
6.7. ԺԱՄԱՆՑ - 116 -
Ազատ ժամանց - 116 -
Մարմնամարզություն և մարմնի խնամք - 117 -
Հանգիստ և տուրիզմ - 120 -
6.8. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԸ - 121 -
Սոցիալական հավասարություն - 121 -
Սոցիալական պաշտպանվածություն - 123 -
Սոցիալական լարվածություններ - 127 -
Սոցիալական կապիտալ - 129 -
Լավատեսությունը ապագայի նկատմամբ - 136 -
6.9. ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ և ԱՐՏԱԳԱՂԹ - 138 -
Արտագնա աշխատանքներ - 138 -
Արտագնա աշխատանքների ազդեցությունը կյանքի որակի բաղադրիչների վրա - 139 -
Արտագաղթի դիրքորոշումներ - 141 -
Արտագաղթի պատճառները - 146 -
Արտագաղթի պատճառների գործոնային կառուցվածքը - 150 -
Կյանքի որակի ինդեքսների ազդեցությունն ընդմիշտ արտագաղթի դիրքորոշման վրա - 151 -
6.10. ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՎԱՐՔ - 152 -
Ինֆորմացիայի հիմնական աղբյուրները - 152 -
Հեռուստադիտումներ - 154 -
Ինտերնետի օգտագործումը - 156 -
Ինտերնետային սոցիալական ցանցերի օգտագործումը - 161 -
6.11. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ - 163 -
Հասարակական-քաղաքական մասնակցության հիմնական բնութագրերը - 163 -
Քաղաքական լոյալությունը - 164 -
Աշխարհամակարգային գիտակցություն - 167 -
Հայաստանի կարևորագույն խնդիրները - 170 -

1. Հիմնական արդյունքներ

«Կյանքի որակի» հետազոտությունները և դրանց նպատակները

«Կյանքի որակի» հետազոտությունն իրականացվում է ՀՀ Կառավարության պատվերով: 2010-2016 թթ. ընթացքում իրականացվել է 7 հետազոտություն: Այդ տարիներին հետազոտությունն ունեցել է մեթոդական և բովանդակային զարգացումներ: Այնուամենայնիվ դրանք իրականացվել են այնպես, որպեսզի պահպանվի կյանքի որակի հիմնական ցուցանիշների համադրելիությունը:

Հետազոտությունների դաշտային փուլերը տեղի են ունեցել համապատասխան տարիների դեկտեմբեր ամիսներին: Հետազոտությունների ընտրանքների ծավալները կազմել են 1,997-2,027 հարցվող: Ընտրանքները ներկայացուցչական են ըստ մարզերի, բնակավայրի տիպերի՝ Երևան-քաղաք-գյուղ (Երևանում՝ նաև ըստ համայնքների), հարցվողների սեռի և տարիքի:

Հետազոտության նպատակներն են.

- Հասկանալ, թե ինչ մակարդակում են հասարակության և նրա առանձին շերտերի կենսապայմանները, այդ թվում՝ դրանց օբյեկտիվ վիճակը և հասարակության կողմից դրանց սուբյեկտիվ ընկալումները:
- Հասկանալ, թե ինչպես են փոխվում այդ կենսապայմանները ժամանակի ընթացքում:
- Բացահայտել առավել պրոբլեմատիկ կենսապայմանները և հասարակության, որ շերտերում են դրանք դիրքավորված:
- Հասկանալ, թե ինչ առաջնահերթ ուղղություններով պետք է բարելավել մարդկանց կենսապայմանները (ռազմավարական պլանավորում):
- Բացահայտել հասարակության կայունությանը սպառնացող վտանգները և դրանց չեզոքացման ուղիները:
- Վեր հանել կյանքի որակի հետ առնչվող և դրանք պայմանավորող հասարակական յուրահատուկ խնդիրները և ցույց տալ դրանց լուծման ուղիները պետական կառավարման մակարդակում:
- Աջակցել հասարակությունում և դրա առանձին շերտերում Կառավարության ռազմավարությունների մշակմանը:

Կյանքի որակ հասկացությունը և կյանքի որակի ինդեքսները

Կյանքի որակը մարդկանց կենսապայմանների ամբողջությունն է, որը ներառում է ինչպես նրանց **կենսամակարդակը** (այլ կերպ՝ նյութական բարիքների մատչելիությունն ու որակը), այնպես էլ նրա առողջության, շրջակա միջավայրի և սոցիալական միջավայրի վիճակը, հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարվածությունը, հոգեկան հավասարակշռության/հարմարավետության վիճակը, հոգևոր հանգստի/հարմարավետության զգացումը[1]:

Կյանքի որակի ինդեքսներն ընդհանրացված գնահատականներ են, որոնք արտացոլում են մարդկանց բավարարվածությունը իրենց կյանքի որակը պայմանավորող կենսապայմաններից:

[1] Философский энциклопедический словарь. –М.: Советская энциклопедия. Гл. редакция: Л. Ф. Ильичёв, П. Н. Федосеев, С. М. Ковалёв, В.Г.Панов. 1983.

Զեկույցում կառուցվել են Հայաստանի հասարակությունում կյանքի որակի ինդեքսները երեք մակարդակում՝ հանրապետական, համայնքային և անձի/ընտանիքի:

- **Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսը** և դրա բաղադրիչ ենթաինդեքսներն արտահայտում են Հայաստանի բնակչության բավարարվածությունը հանրապետական մակարդակում կյանքի որակը բնութագրող կենսապայմաններից:
- **Համայնքի մակարդակում կյանքի որակի ինդեքսը** արտահայտում է Հայաստանի բնակչության բավարարվածությունը համայնքային մակարդակում կյանքի որակը բնութագրող կենսապայմաններից:
- **Ընտանիքի/անձի մակարդակում կյանքի որակի ինդեքսը** և դրա ենթաինդեքսներն արտահայտում են Հայաստանի բնակչության բավարարվածությունը ընտանիքի կամ անձի մակարդակում կյանքի որակը պայմանավորող կենսապայմաններից:

Հետազոտությունում դիտարկվել են կյանքի որակը հանրապետական, համայնքային և անձի/ընտանիքի մակարդակում նկարագրող **63 կենսապայման** (տես՝ էջ - 25 -):

Կյանքի որակի հետազոտությունում հաշվարկվել են կյանքի որակի **3 հիմնական ինդեքս և դրանց 10 բաղադրիչ ենթաինդեքսներ**: Դրանք են.

1. **Կյանքի որակի ինդեքսը հանրապետական մակարդակում** (հաշվարկվել է 35 կենսապայմանների կիրառմամբ) և դրա **չորս բաղադրիչ ենթաինդեքս.**
   1.1. **Տնտեսական** (8 կենսապայման),
   1.2. **Սոցիալական** (9 կենսապայման),
   1.3. **Ենթակառուցվածքային** (8 կենսապայման) և
   1.4. **Կառավարման** (10 կենսապայման) ոլորտներում:
2. **Կյանքի որակի ինդեքսը համայնքային** մակարդակում (12 կենսապայման):
3. **Կյանքի որակի ինդեքսն անձի/ընտանեկան** մակարդակում (17 կենսապայման), որն ունի հինգ ենթաինդեքս.
   3.1. **Բարեկեցության** (5 կենսապայման),
   3.2. **Ապահովության** (3 կենսապայման),
   3.3. **Հեղինակության** (3 կենսապայման),
   3.4. **Ինքնաիրականացման** (3 կենսապայման) և
   3.5. **ժամանցի** (3 կենսապայման) ոլորտներում:

Ինդեքսների արժեքները տվյալ անձի համար կարող են գտնվել 0-100 միջակայքում: Ինդեքսները հաշվարկվել են որպես տվյալ համախմբության անդամների համապատասխան ինդեքսների միջին արժեքներ: Ինդեքսների արժեքների **ընդհանրացված մեկնաբանության** համար կիրառվել է հետևյալ սանդղակը: Համարվել է, որ ինդեքսը գտնվում է.

- «**Շատ բարձր**» արժեքների տիրույթում, եթե դրա արժեքը մեծ է կամ հավասար 80-ի:
- **«Բարձր»** արժեքների տիրույթում, եթե ինդեքսը գտնվում է [60; 80) միջակայքում:
- **«Միջին»** արժեքների տիրույթում, եթե ինդեքսը գտնվում է [40; 60) միջակայքում:
- **«Ցածր»** արժեքների տիրույթում, եթե ինդեքսը գտնվում է [20; 40) միջակայքում:
- **«Շատ ցածր»** արժեքների տիրույթում, եթե ինդեքսը գտնվում է [0; 20) միջակայքում:

Իրավիճակը Հայաստանում կյանքի որակի ինդեքսների շրջանակում և դրանց դինամիկան

2016թ.-ին Հայաստանում կյանքի որակի երեք ինդեքսների և 9 ենթաինդեքսների արժեքները տրված են Գծապատկեր 1-ում:

Հանրապետական մակարդակի կյանքի որակի ինդեքսը 2016 թ.-ին կազմել է 34.2, այն գտնվել է **ցածր** գնահատականների տիրույթում, սակայն բավական մոտ է միջին գնահատականների տիրույթի ներքին սահմանին (40):

Համայնքային մակարդակի կյանքի որակի ինդեքսի արժեքը կազմել է 69.4՝ գտնվելով բարձր գնահատականների տիրույթում [60; 80): Այն կրկնակի գերազանցել է հանրապետական մակարդակի ինդեքսին:

Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքը կազմել է 50.2՝ գտնվելով միջին գնահատականների տիրույթում [40; 60], մոտ 1.5 անգամ գերազանցելով հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքը:



Գծապատկեր 1. Հայաստանում կյանքի որակի ինդեքսներն ու ենթաինդեքսները, 2016 թ.:

Ինդեքսների արժեքների ստացված պրոֆիլը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ: Հայաստանի հասարակությունը, որպես ամբողջություն, իր **անձի/ընտանիքի** կյանքի որակն ընկալում է որպես «միջին մակարդակում գտնվող»: Այն, ինչ մարդիկ իրենց շուրջ տեսնում են և անմիջականորեն ընկալում, այլ կերպ՝ **համայնքային** ենթակառուցվածքները, որոնցից մարդիկ անմիջականորեն օգտվում են, նրանք բարձր են գնահատում, իսկ այն, ինչ իրենցից «հեռու» է և ինչի մասին նրանք տեղեկանում են ոչ անմիջականորեն (հիմնականում ինֆորմացիոն դաշտից) գնահատում են ցածր:

Ընդ որում, ինչպես երևում է Գծապատկեր 2-ից, ինդեքսների պրոֆիլը կայուն տեսք ունի՝ 2012-2016 թթ. ընթացքում **հանրապետական** մակարդակում կյանքի որակի ինդեքսը միշտ եղել է ամենացածրը՝ նվազելով 39.5-ից մինչև 34.2, **համայնքային** մակարդակում կյանքի որակի ինդեքսը եղել է ամենաբարձրը և 2013-2016 թթ. ընթացքում մոնոտոն աճել է 58.1-ից՝ 69.4, իսկ **անձի/ընտանիքի** մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքը գտնվել է հանրապետական և համայնքային

մակարդակի ինդեքսների միջև և գծապատկերում ներկայացված 5 տարիների ընթացքում տատանվել է 50 արժեքի շուրջը:



Գծապատկեր 2. Հանրապետական, համայնքային և անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսների դինամիկան, 2012-2016 թթ.:

Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի բաղադրիչներից ամենից ցածր արժեքներ ունեն **տնտեսական** բաղադրիչը՝ 21.4 և **կառավարման** բաղադրիչը՝ 27.1 (Գծապատկեր 1): Մի փոքր ավելի բարենպաստ է **սոցիալական** բաղադրիչը, որը չնայած գտնվում է ցածր գնահատականների տիրույթում՝ 36.9, սակայն շատ մոտ է միջին գնահատականների տիրույթին: Բաղադրիչներից ամենաբարվոք վիճակում է **ենթակառուցվածքների** բաղադրիչը՝ 51.3, որը գտնվում է միջին գնահատականների տիրույթում: Նշենք, որ այս արդյունքը հաղորդակցվում է համայնքային մակարդակում կյանքի որակի ինդեքսի բարձր արժեքի հետ, որը կազմավորվում է համայնքի մակարդակում ենթակառուցվածքների աշխատանքից բավարարվածության գնահատականներով:

Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի հինգ բաղադրիչներից առավել բարձր արժեքներ ունեն **ապահովության** (58.9) և **հեղինակության** (60.6) բաղադրիչները, համեմատաբար ցածր արժեքներ՝ **բարեկեցության** (41.7) և **ժամանցի** (41.5) բաղադրիչները: Այդ երկու զույգերի միջև է գտնվում **ինքնաիրականացման** բաղադրիչը (48.5):

Կյանքի որակի հանրապետական մակարդակի ենթաինդեքսների դինամիկան տրված է Գծապատկեր 6-ում (էջ - 37 -), իսկ անձի/ընտանիքի մակարդակում ինդեքսի բաղադրիչներինը՝ Գծապատկեր 26-ում (էջ - 64 -): Համայնքային մակարդակում կյանքի որակի ինդեքսը ենթաինդեքսներ չունի:

Ստորև թվարկված են հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի այն բաղադրիչները, որոնցից բավարարված են հանրապետության բնակչության ոչ ավելի, քան 25%-ը:

Դրանք այն բաղադրիչներն են, որոնցում իրավիճակի բարելավումը առաջնահերթ է հանրապետությունում կյանքի որակի բարձրացման, պետության նկատմամբ վստահության աճի և հասարակությունում սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավման տեսակետից:

Բաղադրիչները դասակարգված են ըստ տնտեսական, սոցիալական, ենթակառուցվածքների և կառավարման ոլորտների: Յուրաքանչյուր ոլորտում բաղադրիչները դասավորված են ըստ այդ ոլորտից անբավարարվածության աճի:

Առավել խնդրահարույց բաղադրիչները, որոնք գտնվում են **շատ ցածր** գնահատականների տիրույթում, նշված են **կարմիր գույնով**:

- Տնտեսական ոլորտ.
  - **Թոշակների չափը** **7.8%,**
  - **Աշխատատեղերի առկայությունը** **8.9%,**
  - **Բնակարանային վարկերի մատչելիությունը** **9.6%,**
  - **Ժողովրդի ընդհանուր կենսամակարդակը** **14.3%,**
  - Գների մակարդակը 16.1%,
  - Երկրի տնտեսական զարգացման տեմպերը 18.0%,
  - Աշխատողի իրավունքների պաշտպանվածությունը 20.0%,
  - Դոլարի կուրսի կայունությունը 25.1%:
- Սոցիալական ոլորտ.
  - **Դեղերի գների մատչելիությունը** **11.4%,**
  - **Առողջապահության ֆինանսական մատչելիությունը** **12.9%,**
  - Սպառողների իրավունքների պաշտպանվածությունը 23.0%:
- Ենթակառուցվածքների ոլորտ.
  - Երկաթուղու տոմսերի մատչելիությունը 21.7%,
  - Ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը 26.2%,
- Կառավարման ոլորտ.
  - **Ընտրությունների արդարության մակարդակը** **12.9%,**
  - **Կաշառակերության դեմ պայքարը** **15.3%,**
  - **Դատավորների արդարության աստիճանը** **15.4%,**
  - **Երկրում օրենքների կիրառելիությունը** **18.7%,**
  - **Կառավարության գործունեությունը** **19.0%,**
  - Մարդու իրավունքների պաշտպանվածությունը 21.0%,
  - Երկրում կարիերայի հնարավորությունները 23.1%:

Կյանքի որակի առանձին բաղադրիչների օբյեկտիվ վիճակը և դինամիկան

Օբյեկտիվ վիճակ հասկացությամբ նշանակված է կյանքի որակի տվյալ բաղադրիչի օբյեկտիվ վիճակը նկարագրող ցուցանիշների արժեքների խումբը, որոնք, **որպես կանոն**, կախված չեն հարցվողի սուբյեկտիվ գնահատականներից: Օրինակ, բավարարվածությունը բնակարանի ընդհանուր վիճակից՝ իրենից ներկայացնում է սուբյեկտիվ գնահատական, սակայն բնակվո՞ւմ է արդյոք անձը իրեն պատկանող բնակարանում, կամ վերանորոգե՞լ է արդյոք ընտանիքը իր բնակարանը վերջին մեկ տարվա ընթացքում, կամ ունի՞ արդյոք վարձու աշխատողը շաբաթական գոնե մեկ հանգստյան օր՝ օբյեկտիվ վիճակը նկարագրող ինդիկատորներ են:

Բնակարանային պայմաններ

Հայաստանում ընտանիքների 88.6%-ը բնակվում են իրենց պատկանող բնակարաններում, 6.3%-ը՝ ուրիշի տանը, սակայն առանց վարձ տալու, իսկ 5.0%-ը՝ ուրիշի տանը՝ վարձով: 2016 թ.-ին

Հայաստանում սեփական բնակարաններում բնակվողների քանակը վիճակագրորեն հավաստի նվազել է (Գծապատկեր 28, էջ - 69 -), ինչը վկայում է բնակչության աշխարհագրական մոբիլության աճի մասին (մարդիկ տեղափոխվել են այլ վայր և բնակվում են վարձով): Տվյալների ուսումնասիրությունը (Գծապատկեր 29, էջ - 70 -) ցույց է տվել, որ.

- **Հայաստանում 2016 թ.-ին աճել է ներքին միգրացիան՝ գյուղերից դեպի Երևան և քաղաքներ:**
- **Հայաստանում ընդհանուր առմամբ 2012-2016 թթ. ընթացքում բնակարանների ընդհանուր վիճակը դանդաղ բարելավվել է** (Գծապատկեր 30, էջ - 71 -)**:**

Այդ բարելավումն առավել ակնառու է գյուղերում (Աղյուսակ 11, էջ - 71 -) և բարձր բարեկեցությամբ ընտանիքների շրջանում (Աղյուսակ 12, էջ - 72 -):

- **2016 թ.-ին 2015 թ.-ի համեմատ Հայաստանում վատթարացել է ցածր բարեկեցությամբ ընտանիքների բնակարանների վիճակը:**

Տվյալների խորացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ.

- **Հայաստանում աճել է այն ընտանիքների քանակը, ովքեր համարում են, որ տան մակերեսը բավարար է իրենց ընտանիքի համար: Եթե 2012-2015 թթ. նրանք կազմել են 65.7%, ապա 2016 թ.-ին՝ 72.4%** (Գծապատկեր 34, էջ - 74 -):

Ընտանիքի տնտեսական վիճակը

Կենցաղային գույքի և տեխնիկայի առկայությունը

- **2015 թ.-ին՝ 2014 թ. համեմատ, երկարատև օգտագործման կենցաղային տեխնիկա (հարթ էկրանով հեռուստացույց, ջեռուցման համակարգ, օդորակիչ, նոթբուք, նետբուք, անհատական համակարգիչ և պլանշետ) ունեցող ընտանիքների քանակը էապես աճել էր: Սակայն, 2016 թ.-ին այդ աճը դանդաղել է** (Աղյուսակ 16, էջ - 76 -)**:**

Անշարժ և շարժական գույքի առկայությունը

Հայաստանի ընտանիքների գույքային բարեկեցության հարցում առկա են տարամետ միտումներ (Աղյուսակ 17, էջ - 77 -): Մասնավորապես.

- **2016 թ.-ին աճել է մարդատար ավտոմեքենա ունեցող ընտանիքների քանակը, հասնելով՝ 44.6%-ի:**
- **Աճել է գյուղատնտեսության համար անհրաժեշտ միջոցներ՝ հող և այգի, ունեցող ընտանիքների քանակը (հասնելով 35.4%-ի), անասուններ պահող ընտանիքների քանակը (52.9%): Սակայն, մյուս կողմից, նվազել է գյուղտեխնիկա՝ կոմբայն, տրակտոր, ունեցող ընտանիքների քանակը (3.3%):**
- **2012-2016 թթ. ընթացքում պահպանվել է փոքր բիզնեսի վարման համար օգտագործվող գույքի տեսակներ՝ արտադրական տարածք/պահեստ, և արտադրական տեխնիկա (հաստոցներ և մեքենա-սարքավորումներ) ունեցող ընտանիքների քանակը: 2016 թ.-ին այդ գույքն առկա էր համապատասխանաբար 2.2% և 1.2% ընտանիքներում: Մյուս կողմից, աճել է բեռնատար մեքենա ունեցող ընտանիքների քանակը հասնելով՝ 6.5%-ի:**

Սննդամթերքի ֆինանսական մատչելիություն և որակ

- **Հայաստանում 2016 թ.-ին, ընդհանուր առմամբ, սննդամթերքի ֆինանսական մատչելիությունը եղել է խնդրահարույց** (Գծապատկեր 35, էջ - 78 -)**:**
- **Հիմնական սննդամթերքի տեսակներից ձուկը և ձկնեղենը մատչելի է եղել բնակչության 49%-ին, միսը և թռչնամիսը՝ 59.4%-ին: Համեմատաբար ավելի բարվոք է մրգերի, բանջարեղենի, կաթի և կաթնամթերքի և ընդեղենի մատչելիությունը, որը գտնվել է մոտ 80%-ի սահմաններում:**
- **Առավել բարձր է եղել ձվի մատչելիությանը՝ 86.6%:**
- **Սննդամթերքի ֆինանսական մատչելիությունը հատկապես մտահոգիչ է ցածր բարեկեցությամբ ընտանիքների համար: Մասնավորապես, միսը և մսամթերքը մատչելի է նրանց 39%-ին, ձուկը՝ 30%-ին, կաթը՝ 65%-ին:**
- **Այնուամենայնիվ, 2016 թ.-ին Հայաստանում աճել է ընդեղենի, ձվի, կաթի և կաթնամթերքի և ձկան ֆինանսական մատչելիությունը, սակայն նվազել է մսի, մրգերի ու բանջարեղենի մատչելիությունը** (Աղյուսակ 19, էջ - 79 -)**:**
- **Հայաստանում բնակչության բավարարվածությունը սննդամթերքի որակից ընդհանուր առմամբ շատ բարձր է՝ կաթի, ձվի և ընդեղենի որակից բավարարված է բնակչության 90 և ավելի տոկոսը: Ձկնեղենի և միրգ/բանջարեղենի որակից՝ մոտ 90%-ը, իսկ մսի/մսամթերքի որակից՝ 83%-ը** (Աղյուսակ 22, էջ - 83 -)**:**
- **Չնայած ցածր բարեկեցությամբ խմբում մթերքի որակից բավարարվածությունն ավելի ցածր է (քանի, որ նրանք գնում են ավելի ցածր որակի մթերք), սակայն այդ տարբերությունը՝ մթերքի տարբեր տեսակների համար, չի գերազանցում 5%-ը:**
- **Սննդամթերքի որակից բավարարվածությունը 2011-2016 թթ. ընթացքում ունեցել է հիմնականում աճի միտում՝ չնայած 2016 թ.-ին 2015 թ. համեմատ այդ ցուցանիշները փոքր ինչ նվազել են:**

Ընտանիքների եկամուտների աղբյուրները

- **Հայաստանում բնակչության առավել տարածված եկամտի աղբյուրն աշխատավարձն է, որն ունի ընտանիքների 56.4%-ը: Սակայն աշխատավարձ ունեցող ընտանիքների հարաբերական քանակը նվազում է** (Աղյուսակ 24, էջ - 85 -)**:**
- **Տարածվածությամբ երկրորդ եկամտի աղբյուրը՝ պետական տրանսֆերտներն են, այդ թվում. տարիքային թոշակ ստացող անդամ ունի ընտանիքների 38.1%-ը, հաշմանդամության թոշակ՝ 19.6%-ը, ընտանեկան նպաստ է ստացել ընտանիքների 15.7%-ը: Թոշակ ստացող անդամ ունեցող ընտանիքների հարաբերական քանակը համարյա չի փոխվել, սակայն աճել է ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը[2]:**
- **Տարածվածությամբ երրորդը՝ ինքնազբաղվածությունն է.**
  - **Իրենց արտադրած գյուղմթերքը վաճառում են կամ օգտագործում տանը ընտանիքների՝ 26.1%-ը,**
  - **Ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածությունից եկամուտ ունեն՝ 20.6%-ը:**

[2] Զեկույցում, որպես կանոն ցուցանիշի աճը կամ նվազումը մեկնաբանվում է «հարաբերական քանակ» հասկացության շրջանակներում: Քանի որ վերջին 6 տարիների ընթացքում տարեկան Հայաստանից հեռանում է մոտ 40,000 անձ, որը, կոպիտ հաշվարկով, կազմում է մոտավորապես 10,000 ընտանիք, այդ պատճառով, օրինակ, «նպաստ ստացող ընտանիքների տոկոսային քանակի աճը», կարող է տեղի ունենալ նաև դրանց բացարձակ թվերով քանակի նվազման պայմաններում:

- **Մասնավոր տրանսֆերտներ են ստանում.**
  - **Արտագնա աշխատողից՝ 14.2% (2015 թ. համեմատ եկամտի այդ աղբյուրի տարածվածությունն աճել է 1.3%-ով),**
  - **Արտասահմանում բնակվող հարազատից/բարեկամից՝ 8.2%-ը,**
  - **Հայաստանում բնակվող հարազատից/բարեկամից՝ 3.8%-ը:**

Բարեկեցության փոփոխության ընկալումներ և սպասումներ

- **Հայաստանում 2014-2016 թթ. ընդհանուր առմամբ ընթացքում աճում է այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ իրենց ընտանիքի կենսամակարդակը չի փոփոխվում: Ընդ որում, այդ աճը տեղի է ունենում և՛ վիճակի վատթարացում, և՛ վիճակի բարելավում ընկալող անձանց քանակի նվազման հաշվին** (Գծապատկեր 39, էջ - 87 -)**:**
- **Տվյալների խորացված վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի բնակչության շրջանում 2012-2016 թթ. ընթացքում տեղի է ունենում իրավիճակի վատթարացման ընկալում** (Գծապատկեր 42, էջ - 89 -)**:**
- **Մյուս կողմից, Հայաստանի բնակչության շրջանում 2014-2016 թթ. նկատվում է ապագայի նկատմամբ դրական սպասումների աճ, որը նշանակալիորեն ավելի ընկալելի է 2016 թ.-ին** (Գծապատկեր 44, - 91 -)**:**

Կենսամակարդակի ֆինանսական համարժեքները

- **2016 թ.-ին Հայաստանում 4 անձից կազմված ընտանիքին «լավ ապրելու» համար ամսական միջին հաշվով անհրաժեշտ է մոտ 670 հազար դրամ, «նորմալ ապրելու» համար՝ մոտ 360 հազար դրամ, իսկ «աղքատ չհամարվելու» համար՝ մոտ 200 հազար դրամ** (Գծապատկեր 45, էջ - 92 -)**: Այդ գնահատականները 2015 թ. համեմատ էականորեն չեն փոխվել:**

Զբաղվածություն և գործազրկություն

Զբաղվածության և գործազրկության ընդհանուր նկարագիրը

- **Գործազրկության մակարդակը Հայաստանում 2013-2016 թթ. դեկտեմբեր ամիսներին (հետազոտության իրականացման ամիսներին) մոնոտոն աճել է 16.1%-ից մինչև 26.4%** (Գծապատկեր 48, էջ - 94 -)**: Դաշատ բարձր ցուցանիշ է: Ընդ որում, այդ տարիներին ոչ միայն աճել է գործազուրկների, այլև տնտեսապես ոչ ակտիվ բնակչության հարաբերական քանակը** (Գծապատկեր 47, էջ - 93 -)**:**
- **Սակայն, մյուս կողմից, հարցվածների կարծիքով, ավելի դյուրացել է «իրենց համայնքում» աշխատանք գտնելը** (բոլոր հարցվածներից, տես՝ Գծապատկեր 49, էջ - 97 -)**:**
- **Սա նշանակում է, որ Հայաստանի բնակչությունն աստիճանաբար ավելի բծախնդիր է դառնում փնտրվող/առաջարկվող աշխատանքի նկատմամբ: Դա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ արտասահմանում, հատկապես Ռուսաստանում, արդեն կազմավորվել է մեծաքանակ հայկական «նոր սփյուռք», ինչի հետևանքով աշխատունակ բնակչության նշանակալի հատվածի համար, Հայաստանում ապրելու և աշխատելու այլընտրանքներ են ինչպես արտագնա աշխատանքների մեկնելը, այնպես էլ արտագաղթելը** (տես, հաջորդիվ՝ «Արտագնա աշխատանքներ և արտագաղթ» հատվածը, էջ - 138 -)**:**

- **Ընդհանուր առմամբ վարձու աշխատանք կատարողների աշխատանքային պայմաններն անբարվոք են: Մասնավորապես.**
  - **Հայաստանի վարձու աշխատողների 62.8%-ը համարում է, որ աշխատում է լարված և նյարդային պայմաններում,**
  - **40.9%-ն համարում է, որ աշխատում է առողջության համար վնասակար պայմաններում,**
  - **41.1%-ը հաճախ մտածում է, որ կարող է կորցնել աշխատանքը,**
  - **Միայն 67.2%-ն է համարում, որ իր աշխատանքային իրավունքները պաշտպանված են,**
  - **Միայն 33.3%-ն է համարում, որ լավ է վարձատրվում,**
  - **Միայն 35.4%-ն է համարում, որ ունի աշխատավարձի բարձրացման լավ հնարավորություն,**
  - **Միայն 30.5%-ն է համարում, որ ունի պաշտոնի բարձրացման հնարավորություն,**
  - **Միայն 41.1%-ն է համարում, որ ունի մասնագիտական աճի հնարավորություն:**
- **Վարձու աշխատողների հարակից աշխատանքային պայմանները նույնպես անբարվոք են: Մասնավորապես.**
  - **Ունեն ընդմիջման համար կոնկրետ սահմանված ժամ վարձու աշխատողների 75.0%-ը,**
  - **Ունեն շաբաթական գոնե մեկ հանգստյան օր՝ 90.6%-ը,**
  - **Ունեն տարեկան մեկ անգամ վճարովի արձակուրդ՝ 67.0%-ը,**
  - **Ունեն հավելավճարներ՝ 43.9%-ը,**
  - **Ունեն արտոնություններ կամ սոցիալական փաթեթներ՝ 36.3%-ը:**

Առողջապահություն

- **Բուժհիմնարկներ դիմած անձանց գնահատականներով՝ 2016 թ.-ին 2015 թ. համեմատ բուժհաստատությունների ֆինանսական մատչելիությունն աճել է** (Աղյուսակ 28, էջ - 108 -)**:**
- **Այնուամենայնիվ, ինչպես ցույց են տվել կյանքի որակի նախորդ հետազոտությունները, բուժհիմնարկներ չդիմած բնակչությունը բուժհիմնարկների ֆինանսական ծառայությունները գնահատում է ավելի ցածր:**
- **Առողջապահական հիմնարկ դիմածների համար առավել մատչելի են պոլիկլինիկաները և ծննդատները: Ամենացածր մատչելիությունն ունեն հիվանդանոցները**:
- **Ընդհանուր առմամբ բնակչության բավարարվածությունը բուժհիմնարկների ծառայությունների որակից գտնվում է գնահատականների շատ բարձր և բարձր տիրույթում** (Աղյուսակ 29, էջ - 108 -)**:**
- **Առավել բարձր է բավարարվածությունը ատամնաբուժարանների և դիագնոստիկ կենտրոնների ծառայություններից:**

Կրթություն

- **Եթե 2011-2015 թթ. ընթացքում կրթական հիմնարկների ֆինանսական մատչելիությունն ուներ նվազման միտումներ, ապա 2016 թ.-ին դրանց ֆինանսական մատչելիությունն աճել է** (Աղյուսակ 31, էջ - 109 -)**:**

- **Բնակչությունն առավել մատչելի է համարում պետական մանկապարտեզները (այն մատչելի են համարել դրանցից օգտվողների 61.7%-ը), առավել դժվարամատչելի են պետական բուհերը (28.9%):**
- **Հարկ է նշել, որ հիմնական դպրոցների ֆինանսական մատչելիությունը պետք է համարել անբավարար, այն ֆինանսապես մատչելի են համարել այդ դպրոցներում սովորող աշակերտներ ունեցող ընտանիքների կեսից պակասը՝ 44.5%-ը:**

Շրջակա միջավայր

Օդի, ջրի, տարածքի մաքրություն, աղմուկ

- **2016 թ.-ին Հայաստանում էկոլոգիական վիճակը բնակչության ընկալումներում բարելավել է** (Գծապատկեր 59, էջ - 111 -)**:**
- **Հատկապես նշանակալի է փոշուց օդի աղտոտվածության նվազումը՝ 2015 թ. 56.4%-ից մինչև 38.6% 2016 թ.-ին:**
- **Նվազել է նաև տրանսպորտային աղմուկի, խմելու ջրի աղտոտվածության, ոռոգման ջրի աղտոտվածության ընկալումները և հաղորդումները կենցաղային աղբի կուտակումների մասին**:

Թափառող կենդանիներ

- **Հայաստանում շատ բարձր է իրենց տան շրջապատում թափառող կենդանիների, ինչպես նաև առնետների և մկների առկայության մասին հաղորդող բնակչության քանակը** (Գծապատկեր 60, էջ - 112 -)**:**
  - **Մասնավորապես, իրենց տան/շենքի շրջապատում շների առկայության մասին է հաղորդել Հայաստանի բնակչության 70%-ը:**
  - **Իրենց տան կամ շենքի շրջապատում դրանց առկայության մասին է հաղորդել Հայաստանի բնակչության 50%-ը:**
  - **Իրենց տանը կամ շենքի շրջապատում կարիճների, այլ թունավոր միջատների և օձերի առկայության մասին է հաղորդել Հայաստանի բնակչության 19-20%-ը**:
- **Սակայն, հարկ է նշել, որ Հայաստանում 2011-2016 թթ. ընթացքում նկատվում է թափառող կենդանիների, սողունների և թունավոր միջատների առկայության նվազման միտում:**

Բնակչության բավարարվածությունը պետության բնապահպանական գործունեությունից

- **2016 թ.-ին բնապահպանական խնդիրներին պետության հատկացրած ուշադրության գնահատականը գտնվում է «ցածր» գնահատականների տիրույթում՝ 29.9%** (Գծապատկեր 61, էջ - 115 -)**:**
- **Այնուամենայնիվ, այդ գնահատականը 2015 թ.-ի համեմատ նշանակալիորեն աճել է: 2015 թ.-ին այն կազմել է 22.5%: Այդ գնահատականը հաղորդակցվում է բնապահպանական խնդիրների ընկալման տարածվածության վերը նշված նվազման հետ:**

Ժամանց

Ազատ ժամանց

(Աղյուսակ 35, էջ - 116 -)

- **Հայաստանում մարդկանց ազատ ժամանցի առավել տարածված ձև է մնում տանը հեռուստացույցի դիտումը, որը նշել է հարցվածների 90.5%-ը:**

- **Առավել տարածված ժամանցի ձևերի երկրորդ խումբն են կազմում՝ շենքի բակում կամ թաղում հարևանների հետ շփվելը՝ 71.7% և գյուղամիջում համագյուղացիների հետ շփվելը՝ 68.5%:**
- **Հատկանշական է, որ դրսում՝ առողջության համար զբաղվում է մարմնամարզությամբ, թեթև քայլով, թեթև վազքով հարցվածների 27.3%-ը** :

Մարմնամարզություն և մարմնի խնամք

- **Հայաստանի բնակչության շատ փոքր հատվածն է օգտվում վճարովի մասնագիտացված մարմնամարզական օբյեկտներից՝ լողավազանից, մերսումների սրահից և ֆիթնես մարզասրահից** (Գծապատկեր 62-Ա,- 118 -): **Մասնավորապես, մարզասրահից օգտվում է 18-50 տարեկան բնակչության 14.5%-ը, ֆիթնես ակումբներից՝ 5.2%-ը**:
- **Չօգտվելու հիմնական պատճառն է Հայաստանի բնակչության համար այդ ծառայությունների բարձր վճարները, որը, տարբեր ծառայությունների համար նշում են հարցվածների 27-40%-ը: Չօգտվելու երկրորդ պատճառն է այդպիսի ծառայություններից օգտվելու սովորության բացակայությունը, որը տարբեր ծառայությունների համար նշում են հարցվածների 23-30%-ը:**
- **2016 թ.-ին նվազել է այդ վճարովի մասնագիտացված մարմնամարզական օբյեկտներից օգտվողների թիվը: Չի բացառվում, որ դա կապված է դրսում հանրային կամ՝ անվճար օգտագործման համար նախատեսված մարմնամարզական հնարավորությունների աճի հետ** (տես՝ Աղյուսակ 35, «Դրսում առողջության համար մարմնամարզությամբ զբաղվողների» թիվը)**:**
- **2012-2016 թթ. ընթացքում մոնոտոն աճել է մատնահարդարումից, դիմահարդարումից և պեդիկյուրից օգտվող մինչև 50 տարեկան կանանց թիվը:**
- **Մյուս կողմից, նվազել է ինչպես լողավազանից, մերսումների սրահից, ֆիթնես սրահից, այնպես էլ մատնահարդարումից, դիմահարդարումից և պեդիկյուրից ինտենսիվ կերպով (ամեն օր կամ շաբաթը մի քանի անգամ) օգտվողների թիվը** (Գծապատկեր 62-Բ)**:**

Հանգիստ և տուրիզմ

- **Հայաստանում հանգստի և տուրիզմի ձևերի տարածվածությունը շատ ցածր է** (Աղյուսակ 42, էջ - 121-)**: Հայաստանի կամ Արցախի հանգստյան տներում հետազոտության նախորդող տարվա ընթացքում հանգստացել է ընտանիքների միայն 10.8%-ի որևէ անդամ: Իսկ Վրաստանում՝ ծովափին 5.2% և արտասահմանյան այլ երկրում՝ 4.1%: Իսկ ընդամենը՝ արտասահմանում՝ 8.6%-ը (կան ընտանիքներ, որոնց անդամները հանգստացել են և՛ Վրաստանում՝ ծովափին, և՛ արտասահմանյան այլ երկրում):**
- **Այսինքն, Հայաստան կամ Արցախի հանգստյան տների օգտագործումը մնում է շատ ցածր մակարդակում:**
- **Հայաստանի բնակչության շրջանում առավել տարածված է ֆինանսապես անհամեմատ ավելի մատչելի՝ «արշավ բնության գրկում» հանգստի ձևը, որից օգտվել են հարցվածների կամ նրանց ընտանիքների 18.5%-ը:**
- **Եթե 2011-2015 թթ. ընթացքում նկատվում էր հանգստի և տուրիզմի հետազոտությամբ բոլոր դիտարկված ձևերի տարածվածության նվազում, ապա 2016 թ.-ին այդ միտումը դադարել է:**

Կյանքի որակի սոցիալ-հոգեբանական դետերմինանտները

Սոցիալական անհավասարության ընկալումները

- **Հայաստանում սոցիալական անհավասարությունը շատ լուրջ խնդիր է** (Գծապատկեր 63, էջ - 122 -)**:**
- **Համարում են, որ Հայաստանում մարդկանց հնարավորությունները հավասար են.**
  - **Ազգային Ժողովի պատգամավոր ընտրվելու հնարավորության տեսակետից՝ 6.4%,**
  - **Պետական պաշտոններում առաջընթացի հնարավորության տեսակետից՝ 10.3%**
  - **Բիզնես սկսելիս՝ 11.3%**
  - **Պետության հետ հարցեր առաջանալիս՝ 11.4%**
  - **Համայնքի ղեկավար ընտրվելիս՝ 11.7%**
  - **Դատարանում սեփական շահերը պաշտպանելիս՝ 12.7%**
  - **Ոստիկանության հետ հարցեր առաջանալիս՝ 13.4%**
  - **Խոշոր ձեռնարկություններում պաշտոնի բարձրացման տեսակետից՝ 15.0%**
  - **Հիվանդանոցում որակյալ բուժում ստանալու տեսակետից՝ 19.1%:**

Սոցիալական վտանգների ընկալումներ

- **Հայաստանի հասարակությունում արտաքին և ներքին հասարակական վտանգների, ֆիզիկական վտանգների, իրավական վտանգների և սոցիալական վտանգների զգացողությունը բարձր է** (Գծապատկեր 64, էջ - 125 -, Գծապատկեր 65, էջ - 126 -)**:**
- **Սակայն, եթե 2012-2015 թթ. ընթացքում հասարակությունում բոլոր դիտարկված վտանգների զգացողություններն աճում էին, ապա 2016 թ.-ին դիտարկված 13 վտանգներից 6-ի դեպքում նկատվել է դրանց տեղի ունենալու հավանականության ընկալման փոքրիկ նվազում:**
- **Ինչպես 2015 և 2016 թթ. հասարակությունում տեղի ունենալու ամենաբարձր հավանականությամբ վտանգն է ընկալվել պատերազմի վերսկսման վտանգը, որը հավանական են համարել բնակչության 77%-ը: Հարկ է նշել, որ 2012 թ.-ին այդ վտանգը հավանական էր համարել բնակչության միայն 22%-ը:**
- **Երկրորդ ամենաբարձր հավանականությամբ վտանգը բնակչությունը համարել է հասարակական անկարգությունների և բռնությունների վտանգը (63%): Սակայն, այդ վտանգի հավանականության ընկալումը 2015 թ. համեմատ նվազել է 5%-ով:**

Սոցիալական լարվածություններ

- **Հայաստանի հասարակությունում սոցիալական լարվածությունների ընկալումները շատ բարձր են** (Գծապատկեր 67, էջ - 128 -)**:**
- **Քաղաքական լարվածությունների տեսակետից՝ պետության և աշխատավորների միջև լարվածություն է ընկալում բնակչության 81.1%-ը, իսկ իշխանության և ընդդիմության միջև՝ 76.8%-ը:**
- **Դասակարգային լարվածության տեսակետից՝ հարուստների ու աղքատների միջև լարվածություն է ընկալում բնակչության 75.8%-ը, աշխատավորների և ձեռնարկատերերի միջև՝ 78.5%-ը, աշխատողների և նրանց անմիջական ղեկավարների միջև՝ 74.6%-ը:**
- **Հայաստանում բարձր է հայ ազգի երկու էթնոմշակութային խմբերի (Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության) միջև առկա լարվածության ընկալումը՝ 60.2%:**

- Մյուս կողմից, հարկ է նշել, որ եթե 2012-2014 թթ. դիտված լարվածություններն ունեին աճի միտումներ, ապա 2014-2016 թթ. ընթացքում դրանք սկսել են նվազել:

Սոցիալական կապիտալ

Սոցիալական կապիտալը հասարակության մասշտաբով դիտարկելիս առկա է հետևյալ պատկերը (Գծապատկեր 69, - 131 -).

- Հայաստանի հասարակությունը որպես ամբողջություն կամ միասնականություն, կիսով չափ է բավարարված իր կյանքով:
- Հայաստանի հասարակությունում մարդկանց (միմյանց) նկատմամբ վստահության մակարդակը ցածր է:
- Հայաստանի հասարակությունում մարդիկ միմյանց արդարամտության աստիճանը համարում են ցածր:
- Եթե Հայաստանի հասարակությունը ընկալենք որպես մեկ ամբողջություն, ապա այն համարում է, որ իր կյանքի ընթացքը «հավասարապես» կախված է և՛ իրենից, և՛ տարբեր հանգամանքներից (հասարակությունում կառավարման լոկուսը գտնվում է իր արժեքների դիապազոնի մեջտեղում):

Սոցիալական կապիտալը անձի մակարդակում

- Հայաստանում մարդկանց ընդգրկվածությունը սոցիալական փոխօգնության խմբերում շատ բարձր է (Գծապատկեր 71, էջ - 134 -):
- Բնակչության միայն 1.8%-ն է, որն ընդգրկված չէ ոչ մի սոցիալական փոխօգնության խմբում և 8.4%-ն է ընդգրկված միայն մեկ սոցիալական փոխօգնության խմբում: Այսինքն, Հայաստանի բնակչության մոտ 10%-ն է, որը չունի կամ ունի միայն մեկ փոխօգնության խումբ կամ՝ ունի սոցիալական կապիտալի տրված սահմանման շրջանակներում դրա «ցածր» մակարդակ:
- Հայաստանում ամենատարածված սոցիալական փոխօգնության խումբը ընտանիքն է՝ որը նշել է բնակչության 97%-ը (Գծապատկեր 70):
- Երկրորդը և երրորդը՝ բարեկամները և ընկերները, որոնք նշել է բնակչության համապատասխանաբար՝ 79.3% և 75.7%-ը:
- Հայաստանում ընտանիքի ամրությունը կոմպենսացնում է սոցիալական անբարվոք վիճակը, հետևաբար, ընտանիքի ամրության բարձր մակարդակի պահպանումը պետք լինի Հայաստանի սոցիալական քաղաքականության առաջին գերակայությունը:

Արտագնա աշխատանքներ և արտագաղթ

- Հայաստանում արտագնա աշխատանքի մեկնելու հնարավորությունը էականորեն մեղմում է Հայաստանի աշխատաշուկայի լարվածությունը և բարձրացնում է արտագնա աշխատողի ընտանիքի բարեկեցության մակարդակը:
- Մյուս կողմից, արտագաղթը Հայաստանից մնում է Հայաստանի հասարակության առավել սուր հարցերից մեկը: Հայաստանից մեկնածների և Հայաստան վերադարձածների բացասական կուտակային սալդոն 2010-2016 թթ, կազմել է մոտ 300,000 մարդ: Արտագաղթի նման տեմպերի (և ծնելիության առկա տեմպի) պահպանման դեպքում 2050 թվականին Հայաստանի բնակչությունը կկազմի 2 միլիոն: Այդքան բնակչություն ուներ Հայաստանը 1960-ականների սկզբին:

Արտագնա աշխատանքներ

- **2016 թ.-ին արտագնա աշխատող է ունեցել Հայաստանի ընտանիքների 20.4%-ը** (Գծապատկեր 75, էջ - 139 -)**: Արտագնա աշխատող ունեցող ընտանիքների հարաբերական քանակը համեմատաբար ավելի մեծ է գյուղերում՝ 27.5%** (2016 թ.), **քաղաքներում այդ թիվը 20.7% է, իսկ Երևանում՝ 12.2%** (Գծապատկեր 76, - 139 -)**:**
- **Արտագնա աշխատող ունեցող ընտանիքների քանակն ըստ բարեկեցության խմբերի էականորեն չի տարբերվում: Այդ ցուցանիշը մի փոքր ավելի ցածր է ցածր բարեկեցությամբ ընտանիքներում՝ 19.1%:**
- **Ընտանիքում արտագնա աշխատողի առկայությունը համակարգային կերպով բարձրացնում է ընտանիքի մակարդակում կյանքի որակի բաղադրիչներից բավարարվածության մակարդակը (Աղյուսակ 46):**
- **Ընտանիքում արտագնա աշխատողի առկայությունը համակարգային կերպով բարձրացնում է բավարարվածությունը հանրապետական մակարդակում կյանքի որակի համարյա բոլոր բաղադրիչներից: Ընդ որում՝ 2016 թ.-ին այդ դրական ազդեցությունն ավելի մեծ է եղել, քան 2013-2015 թթ.-ին (Աղյուսակ 45):**

Արտագաղթելու դիրքորոշումներ

- **Հայաստանում արտագաղթի դիրքորոշում ունեցող և այդ ուղղությամբ ինչ-որ քայլեր կատարող անձանց քանակը մնում է շատ բարձր** (Գծապատկեր 78, էջ- 142 -)**, համապատասխանաբար՝ 43.2% և 12.4%, հաշվարկված՝ չափահաս բնակչության քանակից:**
- **Արտագաղթի դիրքորոշումը սոցիալ-ժողովրդագրական խմբերում** (Գծապատկեր 79, էջ - 144 -).
  - **2016 թ.-ին ըստ տարիքի արտագաղթի դիրքորոշումն ամենից բարձրն էր 30-45 տարեկանների խմբում՝ 50.5%: Արտագաղթի դիրքորոշումն ունի նվազման միտում 18-29 տարեկանների խմբում, սակայն աճում է 40-60 տարեկանների խմբում:**
  - **Ըստ կրթամակարդակի արտագաղթի դիրքորոշումը ամենից բարձրն է միջնակարգ կրթությամբ անձանց շրջանում՝ 47.5%:**
  - **Ըստ բարեկեցության արտագաղթի դիրքորոշումը ամենաբարձրն է ցածր բարեկեցությամբ (46.0%) և միջին բարեկեցությամբ (44.3%) խմբերում:**
  - **Ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի արտագաղթի դիրքորոշումն ամենից բարձրն է գործազուրկների շրջանում՝ 49.8%:**
  - **Ըստ բնակավայրի տիպի և ըստ սեռի արտագաղթի դիրքորոշումների տարբերությունները փոքր են:**

Արտագաղթելու ուղղությամբ ինչ-որ քայլեր ձեռնարկած անձինք (Գծապատկեր 81 էջ - 146 -).

- **Արտագաղթելու ուղղությամբ ինչ-որ քայլեր ձեռնարկող անձանց քանակն ըստ զբաղվածության կարգավիճակների հարաբերականորեն ավելի մեծ թիվ է կազմում.**
  - **Ծառայությունների և արհեստների ոլորտում ինքնազբաղվածների (19.6%),**
  - **Մասնավոր ձեռնարկություններում վարձու աշխատողների (17.9%),**
  - **Գործատուների (16.7%),**
  - **Գործազուրկների (15.0%) և**
  - **Բուհի ուսանողների (14.9%) շրջանում:**

Արտագաղթելու պատճառները (Գծապատկեր 82, էջ - 147 -).

- 2012-2016 թթ. ընթացքում տնտեսական պատճառները որպես իրենց արտագաղթելու պատճառ են նշել հարցվածների 82-88%-ը:
- Սոցիալ-հոգեբանական պատճառներ են նշել՝ 2015 թ.-ին 82.4% իսկ 2016 թ.-ին՝ 92.7%:
- Հայաստանում 2016 թ.-ին 2015 թ. համեմատ կտրուկ աճել է սոցիալ-հոգեբանական պատճառների տարածվածությունը:

Կյանքի որակի ինդեքսների ազդեցությունը արտագաղթի դիրքորոշման վրա

- Կյանքի որակի բոլոր ինդեքսների և ենթաինդեքսների աճը համակարգային կերպով նվազեցնում է արտագաղթի դիրքորոշումները (Գծապատկեր 84, էջ - 152 -):

Ինֆորմացիոն վարք

- Հայաստանում հեռուստատեսությունը դեռևս հանդիսանում է ինֆորմացիայի ստացման առավել տարածված աղբյուր (Գծապատկեր 85, էջ - 153 -):
- 2016 թ.-ին այն որպես ինֆորմացիայի ստացման առաջին կամ երկրորդ առավել կարևոր աղբյուր են նշել բոլոր հարցվածների մոտ 85%-ը: Այդ ցուցանիշը 2013-2016 թթ. ընթացքում մնացել է գործնականում անփոփոխ:
- 2013-2016 թթ. ինտերնետը՝ որպես առաջին կամ երկրորդ առավել տարածված ինֆորմացիայի աղբյուր, նշողների թիվը աճել է 10%-ով՝ 49%-ից հասնելով մինչև 59%: Ընդ որում, 18-29 տարեկանների խմբում ինտերնետն արդեն ինֆորմացիայի ստացման առավել կարևոր աղբյուրն է (Գծապատկեր 86, էջ - 154 -):
- Միևնույն ժամանակ նվազել է միջանձնական շփումների նշանակությունը՝ 28.5%-ից նվազելով մինչև 20.9%:
- Շարունակաբար նվազել է նաև լրագրերի և ամսագրերի՝ առանց այն էլ ցածր տարածվածությունը՝ 2013 թ.-ին 7.6%-ից՝ նվազել է մինչև 4.7% 2016-ին:

Հեռուստադիտումներ

- Հայաստանում հեռուստացույց է դիտում չափահաս բնակչության 82.6%-ը:
- Հայաստանում այն անձինք, ովքեր դիտում են հեռուստացույց՝ օրական դրան են տրամադրում միջինը 3 ժամ 47 րոպե (Գծապատկեր 87, էջ - 155 -):
- Օրական միջին հաշվով ամենից երկար ժամանակ հեռուստացույց են դիտում 60 և ավելի տարեկանները՝ օրական 5 ժամ 25 րոպե, ցածր բարեկեցությամբ անձինք՝ 4 ժամ 10 րոպե, միջնակարգ կրթությամբ անձինք՝ մոտ 4 ժամ, միջին մասնագիտական կրթությամբ անձինք մոտ 4 ժամ 15 րոպե և գյուղաբնակները՝ 4 ժամ:
- «Արմենիա» հեռուստաալիքը որպես առաջին կամ երկրորդ առավել դիտվող հեռուստաալիք նշել են հարցվածների 62.3%-ը, Շանթը՝ 58.3%, Ֆ1-ը՝ 18.7% (Գծապատկեր 88, էջ - 155 -):
- Առավել դիտվող հեռուստաալիքների երկրորդ խումբն են կազմում՝ Կենտրոնը՝ 8.5% և ռուսաստանյան ОРТ Первый канал հեռուստաալիքը՝ 8.2%:

Ինտերնետի օգտագործում

- Տանն ինտերնետ ունի Հայաստանի բնակչության 75.7%-ը (Գծապատկեր 89, էջ - 157 -):
- Տանն ինտերնետ ունեցողների շրջանում հատկապես բարձր տոկոս է կազմում բարձր բարեկեցությամբ խումբը՝ 94.5%, բարձրագույն կրթությամբ անձինք՝ 89.3% և 18-29 տարեկանների խումբը՝ 86.9%:

- Հարկ է նշել, որ ինտերնետը տարածված է նաև ցածր բարեկեցությամբ բնակչության շրջանում՝ 63.1%:
- Համեմատաբար ավելի բարձր է նաև ինտերնետի առկայությունը երևանաբնակների (83.2%) և գյուղաբնակների շրջանում (68.8%):
- Ինտերնետի օգտագործման նպատակներն են (Գծապատկեր 90, էջ - 158 -).
    - Նորությունների և անձին հետաքրքրող տեղեկությունների ընթերցանությունը՝ այդ նպատակով 2016 թ.-ին ինտերնետ են օգտագործել հարցվածների 65.9%-ը,
    - Ինտերնետով երաժշտության ունկնդրումը (61.4%),
    - Շփումն արտասահմանում բնակվող հարազատների ու բարեկամների հետ (60.5%),
    - Ինտերնետով շփումն ընկերների հետ (53.7%), և
    - Կինոֆիլմի դիտումը (50.8%),
    - Ինտերնետով գնումներ է կատարում չափահաս բնակչության 8.7%-ը,
    - Հարկ է անհանգստացնող համարել, որ ինտերնետով խաղադրույքներ է կատարում չափահաս բնակչության 2.0%:

Ինտերնետային սոցիալական ցանցեր

- Սոցիալական ցանցերից օգտվողների քանակը 2015-2016 թթ. ընթացքում աճել է՝ 46.3%-ից մինչև 52.9% (Գծապատկեր 93, էջ - 161 -):
- Ընդ որում ինտենսիվ աճ՝ 6-8% տեղի է ունեցել բոլոր տարիքային խմբերում, բացի 60+ ավելի տարիքային խմբից:
- 2014-2016 թթ. ընթացքում առավել ինտենսիվ է աճել Facebook սոցիալական ցանցից օգտվողների քանակը՝ 28%-ից հասնելով 39%ի: Ներկայում Հայաստանում այդ ցանցն ամենատարածվածն է և գերազանցում է երկրորդ տեղում ընթացող Одноклассники ցանցին 6.5%-ով (Գծապատկեր 94, էջ - 162 -):
- Одноклассники ցանցից օգտվողների և ինտենսիվ օգտվողների (ամեն օր կամ շաբաթը մի քանի անգամ) քանակն այդ տարիներին մնացել է մոտավորապես նույն մակարդակի վրա՝ 2016 թ.-ին կազմելով համապատասխանաբար՝ 32.7% և 27.3%:
- Աճի միտումներ են ունեցել ВКонтакте և Linkdin ցանցերից օգտվողների քանակը, համապատասխանաբար՝ 4.4%-ից 6.1% և 3.4%-ից 5.1%:
- Շատ թույլ տեմպերով աճել է նաև Twitter-ից օգտվողների քանակը՝ 1.2%-ից մինչև 1.5%:

Քաղաքական մշակույթի հիմնական տարրերի դինամիկան

Հասարակական-քաղաքական մասնակցություն

- 2014-2016 թթ. ընթացքում հասարակական կազմակերպությունների անդամների քանակն ունեցել է աճի միտում և 2016 թ.-ին կազմել է 3.5% (Գծապատկեր 97, էջ - 164 -):
- 2016 թ.-ին 2015 թ. համեմատ աճել է նաև հասարակական նախաձեռնություններին աջակցող կամ մասնակցող անձանց քանակը և կազմել է 10.2%:
- Նույնպիսի միտում է ունեցել նաև որևէ կուսակցության անդամակցողների քանակը և կազմել է 12.1%:

Քաղաքական լոյալություն

- **Հասարակության ընդհանուր լոյալությունը Հայաստանի քաղաքական կուրսի նկատմամբ** (համարել են, որ Հայաստանն ընթանում է ճիշտ ուղղությամբ) **գտնվում է շատ ցածր մակարդակի վրա և 2016 թ.-ին կազմել է 18.6%** (Գծապատկեր 98, էջ - 165 -)**:**
- **Ընդ որում, եթե 2013-2015 թթ. ընթացքում այն ունեցել է թեթև աճի միտում, ապա 2016 թ.-ին նորից տեղի է ունեցել անկում:**
- **Ընդհանուր լոյալությունը շատ ցածր է բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերում** (Գծապատկեր 99, էջ - 166 -)**:**
- **Ընդհանուր լոյալությունը համեմատաբար ավելի ցածր է 18-29 տարեկանների, Երևանի բնակչության, բարձրագույն կրթությամբ անձանց և ցածր բարեկեցությամբ անձանց շրջանում:**

Վստահությունը քաղաքական և սոցիալական ինստիտուտներին

Վստահության մակարդակը քաղաքական և սոցիալական ինստիտուտների նկատմամբ չափվել է 0-10 սանդղակի կիրառմամբ, որտեղ 0 նշանակում է լիակատար անվստահություն, իսկ 10՝ լիակատար վստահություն:

- **Հայաստանի հասարակությունում վստահության մակարդակը քաղաքական ինստիտուտների նկատմամբ՝ ՀՀ Նախագահ, ՀՀ Ազգային Ժողով և ՀՀ Կառավարություն, շատ ցածր է և գտնվում է 2.2-2.7 միջակայքում (Error! Reference source not found.** Ա-Ե**):**
  - **Մասնավորապես, բոլորովին չեն վստահում Ազգային Ժողովին՝ (վստահության գնահատականը՝ 0) բնակչության 36%-ը, Նախագահին՝ 38%-ը, Կառավարությանը՝ 34%-ը:**
  - **Լիովին վստահում են Ազգային Ժողովին (վստահության գնահատականը՝ 10) 3%-ը, Նախագահին՝ 6%-ը, Կառավարությանը՝ 5%-ը:**
- **Հայկական բանակի նկատմամբ վստահության մակարդակը գտնվում է բարձր և շատ բարձր միջակայքի սահմանին՝ 7.7:**
- **Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ վստահության գնահատականները գտնվում են միջին գնահատականների տիրույթում՝ 5.4:**
  - **Շատ բարձր է վստահության մակարդակը բանակի նկատմամբ, մասնավորապես, վստահության մակարդակը գնահատել են 10 միավոր հարցվածների 55%-ը, իսկ Հայ Առաքելական Եկեղեցուն՝ 40%-ը:**

Վստահության մակարդակը սոցիալ-ժողովրդագրական խմբերում

- **Վստահության մակարդակը բոլոր դիտարկված ինստիտուտների նկատմամբ համեմատաբար ավելի ցածր է բարձրագույն կրթությամբ անձանց և Երևանի բնակչության շրջանում (Error! Reference source not found.**, էջ **Error! Bookmark not defined.):**
- **Վստահության մակարդակը բոլոր ինստիտուտների նկատմամբ համեմատաբար ավելի բարձր է գյուղերում և 18-29 տարեկանների շրջանում:**
- **Վստահության մակարդակը Հայկական բանակի նկատմամբ համեմատաբար ավելի բարձր է տղամարդկանց և 60-ից բարձր տարիքի բնակչության շրջանում:**

Աշխարհամակարգային գիտակցությունը Հայաստանի հասարակությունում

- **Հայաստանի հասարակությունը ադեկվատ է ընկալում արդի աշխարհամակարգի** (կապիտալիստական համակարգի) **կառուցվածքը և այդ համակարգի քաղաքական սուբյեկտների միջև գերակայությունների բաշխումը** (Գծապատկեր 101 –Ա, Բ, Գծապատկեր 102)**: Մասնավորապես.**
  - **Համարում են, որ «Իշխանությունը Հայաստանում պատկանում է մեծահարուստներին» հարցվածների 58%-ը, «պետական բարձրաստիճան պաշտոնյաներին» 17%-ը, «կուսակցական առաջնորդներին» նույնպես՝ 17%-ը: Սակայն «Իշխանությունը Հայաստանում պատկանում է ժողովրդին» համարում է միայն 3.5%-ը:**
  - **Համարում են, որ «Պետությունն առաջին հերթին պաշտպանում է մեծահարուստների շահերը» հարցվածների 54%-ը, «պետական պաշտոնյաներինը»՝ 26%-ը, «կուսակցական առաջնորդներինը»՝ 9%-ը, իսկ ամբողջ ժողովրդինը՝ 5.3%-ը:**
  - **Համարում են, որ «Մեծահարուստներն են իրենց կամքը թելադրում պետությանը» հարցվածների 71%-ը, իսկ հակառակ կարծիքը ունեն, այսինքն, որ «Պետությունն է իր կամքը թելադրում մեծահարուստներին»՝ 17%-ը: Ընդ որում, հարցվածների 7.3%-ը ինքնաբերաբար պատասխանել է, որ. «Դրանք նույնն են»:**

Հայաստանի առաջնահերթ խնդիրները

- **Հասարակության կարծիքով Հայաստանի առաջնահերթ խնդիրներն են.**
  - **առողջապահության մատչելիությունը, որը որպես երեք առաջնահերթությունների շարքում նշել է բնակչության 55%-ը, իսկ որպես առաջին առաջնահերթություն՝ 31%-ը** (Գծապատկեր 103, - 171 -)**:**
  - **Բանակի հզորացումը՝ համապատասխանաբար՝ 52% և 16.4%:**
  - **Արդար ընտրությունների իրականացումը՝ համապատասխանաբար 34% և 14%:**

Սպասումները Կարեն Կարապետյանի կառավարությունից

(**Error! Reference source not found.**, էջ **Error! Bookmark not defined.**)

- **Դրական սպասումները Կարեն Կարապետյանի կառավարումից գտնվում են բարձր գնահատականների տիրույթում՝ 64%:**
- **Համարում են, որ մինչև մեկ տարվա ընթացքում Կարեն Կարապետյանի կառավարումը կհանգեցնի այնպիսի հաջողությունների, որոնք կզգա ժողովուրդը բնակչության 22.4%-ը, իսկ զգալի հաջողությունները նկատելի կդառնան երեք կամ ավելի տարի հետո՝ համարում է բնակչության 44.7%-ը:**
- **Բնակչության միայն 18%-ն է կարծում, որ Կարեն Կարապետյանի կառավարման ընթացքում հասարակությունը էական դրական տեղաշարժեր չի զգա, այդ թվում՝ միայն 1.3%-ն է ենթադրում, որ Կարեն Կարապետյանի կառավարումը չի տևի մինչև դրական տեղաշարժերի առաջանալը:**
- **Դրական սպասումները հավասարաչափ են բաշխված սոցիալ-ժողովրդագրական խմբերում, այնուամենայնիվ, դրանք համեմատաբար ավելի բարձր են գյուղական բնակավայրերում, իսկ համեմատաբար ավելի ցածր՝ Երևանում:**

2. Հետազոտության մեթոդաբանությունը

2.1. Կյանքի որակի և կյանքի որակի ինդեքսների սահմանումները, կառուցվածքը և բովանդակությունը

Կյանքի որակը մարդկանց կենսապայմանների ամբողջությունն է, որը ներառում է ինչպես նրանց կենսամակարդակը (նյութական բարիքների մատչելիությունն ու որակը), այնպես էլ նրա առողջության վիճակը, շրջակա միջավայրի վիճակը, սոցիալական միջավայրի վիճակը, հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարվածությունը, հոգեկան հավասարակշռության/հարմարավետության վիճակը, հոգևոր հանգստի/հարմարավետության զգացումը[3]**:**

Կյանքի որակը, որպես կանոն, գնահատվում է որպես այդ կենսապայմաններից մարդկանց սուբյեկտիվ բավարարվածության աստիճան:

Զեկուցում Հայաստանի բնակչության կյանքի որակն ուսումնասիրվել է երկու տեսակետից.

1. Գնահատվել է բնակչության սուբյեկտիվ բավարարվածությունը կյանքի տարբեր ոլորտներից:
2. Գնահատվել է իրավիճակը կյանքի տարբեր ոլորտներում օբյեկտիվ ցուցանիշների միջոցով:

Օրինակ՝ մի կողմից գնահատվել է բնակչության սուբյեկտիվ ընդհանուր բավարարվածությունը Հայաստանում առողջապահության մատչելիության տեսակետից, իսկ մյուս կողմից ուսումնասիրվել է այն հարցը, թե արդյո՞ք իր կամ իր ընտանիքի համար մատչելի է բուժումը կոնկրետ բուժհաստատություններում:

Հետազոտությունում կյանքի որակն ուսումնասիրվել է երեք մակարդակներում.

- **Հանրապետական**,
- **Համայնքային,**
- **Անձի/ընտանիքի**:

Զեկույցում.

- **Կյանքի որակը հանրապետական մակարդակում** նշանակում է **բնակչության բավարարվածությունը համահանրապետական մակարդակի տարբեր ոլորտներում առկա իրավիճակից**:

Ակնհայտ է, որ առանձին անձի կողմից տրված այդ գնահատականները սուբյեկտիվ են: Դրանք օբյեկտիվանում են միայն ամբողջ հասարակության մասշտաբով ընդհանրացման դեպքում, ընդ որում՝ առավելապես որպես **հասարակական գիտակցության բնութագիր**: Կան ոլորտներ, որոնց հետ մարդը (մարդկանց մեծ մասը) ընդհանրապես չի շփվում, որի հետևանքով նրա՝ այդ ոլորտների մասին պատկերացումներն ու գնահատականները կազմավորվում են ոչ սեփական փորձի և գիտելիքների հիման վրա, այլ նրա կողմից յուրացվում են այդ ոլորտի վերաբերյալ ժամանակի ընթացքում հասարակությունում ձևավորված պատկերացումները, որոնց ազդեցությամբ էլ կազմավորվում է տվյալ ոլորտից բավարարվածության գնահատականը: Հետևաբար.

[3] Философский энциклопедический словарь. –М.: Советская энциклопедия. Гл. редакция: Л. Ф. Ильичёв, П. Н. Федосеев, С. М. Ковалёв, В.Г.Панов. 1983.

- **Համահանրապետական մակարդակի որևէ ոլորտում առկա օբյեկտիվ իրավիճակը և այդ իրավիճակի ընդհանուր ընկալումն ու գնահատականը հասարակական գիտակցությունում կարող են ինչպես համապատասխանել միմյանց, այնպես էլ՝ տարբերվել**:

Այսպիսով, հանրապետական մակարդակում կառավարումը պետք է բխի այն հարցին տրված պատասխանից՝ արդյո՞ք համընկնում են, թե ոչ ոլորտում առկա օբյեկտիվ իրավիճակը և ոլորտի վերաբերյալ հասարակական գիտակցությունում գերիշխող պատկերացումները: Հնարավոր են չորս տարբերակներ.

- իրավիճակն օբյեկտիվորեն «լավ է», իսկ հասարակական ընկալումները՝ դրական,
- իրավիճակն օբյեկտիվորեն «լավ է», իսկ ընկալումները՝ բացասական,
- իրավիճակը «վատ է», իսկ ընկալումները՝ դրական,
- իրավիճակը «վատ է», իսկ ընկալումները՝ բացասական:

Հարկ է նշել, որ հաճախ տեղի ունի այն դեպքը, երբ որոշակի ոլորտում վատ իրավիճակը հարատևել է, ինչի հետևանքով հասարակական ընկալումներում ձևավորվել են **կայուն բացասական գնահատականներ**, հետո իրավիճակը ոլորտում սկսել է բարելավվել, սակայն հասարակական կարծիքը երկար ժամանակ անհաղորդ է մնացել դրական տեղաշարժերի նկատմամբ՝ իրավիճակը տեղաշարժելով դեպի այն տարբերակը, երբ «իրավիճակն օբյեկտիվորեն լավ է, իսկ հասարակական գնահատականները՝ բացասական»: Նման դեպքերում անհրաժեշտ է փնտրել հասարակական կարծիքի իներցիոնության հաղթահարման ուղիներ[4]:

Համակարգային «վատ» իրավիճակներից դուրս գալու ընթացքում հազվադեպ չեն նաև այնպիսի իրավիճակներ, երբ ոլորտում օբյեկտիվորեն վատ իրավիճակի վերաբերյալ հասարակական ադեկվատ կարծիքը, որը ձևավորվել այն պատճառով, որ մարդիկ օբյեկտիվորեն հազվադեպ են շփվում տվյալ ոլորտին և չունեն սեփական կարծիք կազմելու համար բավարար տեղեկություններ, մակածվում է մեկ այլ՝ այնպիսի ոլորտի վրա, որտեղ իրավիճակը բարելավվում է կամ լավ է: Նման իրավիճակում արդյունավետ է կառավարման բարձրագույն օղակներում «թացը չորից զատելու» և հասարակությանը դրան **հաղորդակից դարձնելու** ռազմավարությունը: Ռազմավարության հաջողությունը պայմանավորված է թիմային համախմբվածության և անհատական պատասխանատվության միջև ադեկվատ բալանս ստեղծելու հմտությամբ:

Ձեկույցում.

- **Կյանքի որակը համայնքային մակարդակում** նշանակում է **բնակչության բավարարվածությունը համայնքային** (Երևանում՝ թաղային) **ծառայություններից**:

Համայնքային մակարդակում բնակչության բավարարվածությունը կյանքի որակի բաղադրիչներից ավելի մոտ է օբյեկտիվ իրավիճակին, քանի, որ դրանց հետ մարդիկ շփվում են անմիջականորեն:

Այնուամենայնիվ, երկու հարևաններից մեկը միևնույն [տեխնիկական բնութագրեր ունեցող] ծառայությունից կարող է բավարարված լինել, իսկ մյուսը՝ ոչ: Գնահատականների տարբերություններ կարող են առաջանալ տարբեր պատճառներով, օրինակ՝ բնակչության տարբեր խմբերի ենթամշակութային տարբերությունների կամ մարդկանց անհատական բնութագրերի տարբերությունների պատճառով, որոնք ունակ են բավական մեծ միջակայքում փոփոխել մարդկանց

[4] Խոսքը չի վերաբերում մանիպուլացիոն տեխնոլոգիաներին, երբ նպատակ է հետապնդվում հասարակական կարծիքը պահպանել դրական՝ բացասական կամ վատթարացող իրավիճակի պայմաններում:

ակնկալիքները և, հետևաբար, ստացած ծառայությունից բավարարվածության բնույթը (դրական կամ բացասական):

Հարկ է նշել, որ համայնքային մակարդակում կյանքի որակի բաղադրիչների գնահատականներն առավել օգտակար են, երբ ստացվում են կոնկրետ համայնքի կամ համանման պայմաններում գտնվող համայնքների խմբի, Հայաստանի նախկին շրջանների կամ ներկայիս մարզերի շրջանակում: Այդպիսի գնահատականները համահանրապետական մասշտաբի զանգվածային սոցիոլոգիական հետազոտություններում պահանջում են ընտրանքի շատ մեծ ծավալ[5]:

Ձեկույցում.

- **Կյանքի որակը ընտանիքի մակարդակում** նշանակում է **մարդու բավարարվածությունն իր և/կամ իր ընտանիքի կյանքի ու կենսագործունեության անմիջական պայմաններից**:

Այդպիսի բնութագրերի օրինակներ են բավարարվածությունը սեփական առողջական վիճակից, ունեցվածքից, աշխատանքից և այլն:

Յուրաքանչյուր մակարդակում կյանքի որակի սուբյեկտիվ ընկալումները ուսումնասիրելիս սահմանվել են առանձին բաղադրիչներ, որոնք խմբավորվել են ըստ ոլորտների և ենթաոլորտների:

Հանրապետական մակարդակում կյանքի որակը բնութագրող **34 բաղադրիչները**՝ խմբավորված ըստ ոլորտների, տրված են ստորև.

1. **Տնտեսական ոլորտ**, որի շրջանակներում գնահատվել է մարդկանց բավարարվածությունը հետևյալ բաղադրիչներից.
   1.1. դոլարի կուրսի կայունությունը,
   1.2. երկրում տնտեսական զարգացման տեմպերը,
   1.3. աշխատողի իրավունքների պաշտպանվածությունը,
   1.4. ժողովրդի ընդհանուր կենսամակարդակը,
   1.5. բնակարանային վարկերի մատչելիությունը,
   1.6. թոշակների մակարդակը (ավելացվել է 2013թ.),
   1.7. աշխատատեղերի առկայությունը,
   1.8. գների մակարդակը:
2. **Սոցիալական ոլորտ**, որի բաղադրիչներն են.
   2.1. Հայաստանի պաշտպանվածությունը պատերազմի վտանգից,
   2.2. երկրի պաշտպանվածությունը զանգվածային անկարգություններից,
   2.3. կրթության որակը,
   2.4. առողջապահության որակը,
   2.5. հանգստի/ժամանցի բազմազանությունը (ավելացվել է 2013թ.),
   2.6. սննդամթերքի որակը,
   2.7. սպառողների իրավունքների պաշտպանվածությունը,
   2.8. առողջապահության ֆինանսական մատչելիությունը,
   2.9. դեղերի մատչելիությունը (ավելացվել է 2013թ.):
3. **Ենթակառուցվածքների ոլորտ**, որի բաղադրիչներն են.

[5] Նման հետազոտություններ Հայաստանի մարզերի վերաբերյալ տես՝ «Համայնքային կարիքների գնահատման հետազոտությունները», որոնք իրականացվել են «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից, 2010-2014թթ. ընթացքում: Ինտերնետային ռեսուրս՝ http://gov.am/am/announcements/:

3.1. բանկային ծառայությունների որակը,
3.2. ինտերնետ կապի որակը,
3.3. առևտրում սպասարկման որակը,
3.4. Հայաստանից դեպի դուրս ավտոբուսային գների մատչելիությունը,
3.5. միջքաղաքային տրանսպորտի աշխատանքի որակը,
3.6. երկաթուղու տոմսերի մատչելիությունը,
3.7. միջքաղաքային ճանապարհների վիճակը,
3.8. ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը:

4. **Կառավարման ոլորտ**[6], որի բաղադրիչներն են.
   4.1. քաղաքացիական ազատությունների աստիճանը,
   4.2. տեղական իշխանությունների գործունեությունը,
   4.3. դատավորների արդարության աստիճանը,
   4.4. մարդու իրավունքների պաշտպանվածությունը,
   4.5. կառավարության գործունեությունը,
   4.6. երկրում օրենքների կիրառելիությունը,
   4.7. ընտրությունների արդարության մակարդակը,
   4.8. երկրում կարիերայի հնարավորությունները,
   4.9. կաշառակերության դեմ պայքարը,
   4.10. Լրատվամիջոցների ազատության աստիճանը (ավելացվել է 2016 թ.-ին):

Համայնքային մակարդակում կյանքի որակի բնութագրիչները դիտարկվել են որպես գնահատական հետևյալ ենթակառուցվածքային ծառայություններից.

1. էլեկտրամատակարարում,
2. գազամատակարարում,
3. խմելու ջրի մատակարարում,
4. տնային/ֆիքսված հեռախոսակապ,
5. բջջային հեռախոսակապ,
6. ինտերնետի որակ,
7. աղբահանություն,
8. փողոցային լուսավորություն,
9. բակի/փողոցի բարեկարգություն,
10. ներքաղաքային տրանսպորտ (միայն քաղաքներում),
11. մայրուղուն կապող ճանապարհների վիճակ (միայն գյուղերի համար),
12. գյուղամիջյան փողոցների վիճակ (միայն գյուղերի համար):

Ընտանիքի մակարդակում կյանքի որակի սուբյեկտիվ ընդհանուր գնահատականները ստացվել են՝ գնահատելով անձի ընդհանուր բավարարվածությունը կյանքի որակը բնութագրող հետևյալ բաղադրիչներից.

1. **Ապահովության բաղադրիչ.** բավարարվածությունը՝
   1.1. ընտանիքի անվտանգությունից,
   1.2. ընդհանուր հոգեվիճակից,
   1.3. ֆիզիկական առողջության վիճակից:
2. **Տնտեսական բաղադրիչ.** բավարարվածությունը՝

[6] Կյանքի որակի 2010 և 2011թթ. հետազոտություններում ոլորտն անվանված էր «Քաղաքական ազատություններ և կառավարման որակ»:

2.1. տան ունեցվածքից (կահույք, կենցաղային տեխնիկա, խոհանոցային տեխնիկա),
2.2. առկա սեփականությունից (բնակարան, հողամաս, ավտոմեքենա, ավտոտնակ),
2.3. բնակարանի վիճակից,
2.4. ներկա կենսամակարդակից, ապրելակերպից,
2.5. ընտանիքի ֆինանսական վիճակից:

3. **Ժամանցի և հանգստի բաղադրիչ.** բավարարվածությունը՝
   3.1. ընտանիքում ժամանակ անցկացնելու հնարավորությունից,
   3.2. տարվա ընթացքում հանգստանալու հնարավորություններից,
   3.3. ընկերների հետ ժամանակ անցկացնելու հնարավորությունից:
4. **Հեղինակության բաղադրիչ.** բավարարվածությունը՝
   4.1. ներկա աշխատանքից,
   4.2. ստացած կրթությունից,
   4.3. կյանքում հասած հաջողություններից:
5. **Ինքնաիրականացման բաղադրիչ.** բավարարվածությունը՝
   5.1. սեփական հասարակական դիրքից,
   5.2. թաղամասի կամ համայնքի հարցերի լուծմանը մասնակցելու հնարավորությունից,
   5.3. հասարակական կյանքին մասնակցությունից:

Վերոշարադրյալ մոտեցումը՝ մարդկանց բավարարվածության գնահատականների հավաքագրումը, վերլուծությունը և ընդհանրացումը կյանքի որակը բնութագրող հանրապետական, համայնքային և անձի/ընտանիքի մակարդակների բաղադրիչների կիրառմամբ, թույլ է տալիս ստանալ հասարակությունում առկա **կյանքի որակի սուբյեկտիվ ընկալման՝**

- ընդհանուր թվային պրոֆիլները (պատկերները),
- դրանց ժամանակային դինամիկան,
- այդ պրոֆիլների առանձին բաղադրիչների միջև շաղկապվածությունները և
- շաղկապվածությունների ժամանակային դինամիկան:

Ստացված արդյունքները կարող են կիրառվել հանրապետական մակարդակում ռազմավարական պլանավորման և կառավարման թիրախավորման խնդիրներում:

Մյուս կողմից՝ ցանկալի է, որպեսզի կյանքի որակի հետազոտությունը բացահայտի նաև **իրենց կյանքի որակից մարդկանց բավարարվածության կամ անբավարարվածության կոնկրետ բովանդակությունը**: Այդ կոնկրետ բովանդակության և կյանքի որակի բաղադրիչներից սուբյեկտիվ բավարարվածության միջև շաղկապվածության վերհանումն ու ուսումնասիրությունը կարող է բացահայտել բնակչության բավարարվածության կամ անբավարարվածության պատճառները, այսինքն պատասխանել այն հարցին, թե **ինչու՞** են մարդիկ բավարարված կամ անբավարարված կյանքի որակը բնութագրող այս կամ այն բաղադրիչից:

Այդ նպատակով հետազոտությունում նախատեսվել են անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակը բնութագրող մի շարք ոլորտներում կոնկրետ բովանդակային իրավիճակը բացահայտող հարցախմբեր: Մասնավորապես, դիտարկվել են անձի և ընտանիքի կյանքի և կենսակերպի հետևյալ ասպեկտների մի շարք բովանդակային բնութագրիչներ, որոնք տրված են ստորև.

Անձի/ընտանիքի մակարդակի առանձին ոլորտներ

1. Բնակարանի առկայությունը և պայմանները:
2. Ընտանիքի տնտեսական վիճակը, այդ թվում՝

2.1. Կենցաղային գույքի առկայությունը,
2.2. Անշարժ և շարժական գույքի առկայությունը,
2.3. Մենդամթերքի ֆինանսական մատչելիություն ու որակը,
2.4. Բնակչության եկամտի աղբյուրները,
2.5. Բարեկեցության փոփոխության ընկալումներն ու սպասումները:

3. Զբաղվածություն և գործազրկություն, այդ թվում՝
3.1. Զբաղվածության և գործազրկության ընդհանուր նկարագիրը,
3.2. Վարձու աշխատողների աշխատանքային պայմանների նկարագրությունը,
3.3. Սեփական համայնքում աշխատանք գտնելու դյուրության գնահատականները:

4. Առողջապահական հիմնարկների ֆինանսական մատչելիությունը և որակը:

5. Կրթական հիմնարկների ֆինանսական մատչելիությունը:

6. Շրջակա միջավայրի վիճակը, այդ թվում.
6.1. Շրջակա միջավայրն աղտոտող բաղադրիչները,
6.2. Թափառող կենդանիների, առնետների, մկների թունավոր միջատների և սողունների առկայությունը:

7. Բնակչության ժամանցը, այդ թվում՝
7.1. Ազատ ժամանցը,
7.2. Մարմնամարզություն և մարմնի խնամք,
7.3. Հանգիստ և տուրիզմ:

8. Կյանքի որակի սոցիալ-հոգեբանական դետերմինանտները, այդ թվում.
8.1. Սոցիալական անհավասարության ընկալումները,
8.2. Սոցիալական վտանգներից պաշտպանվածության ընկալումները,
8.3. Սոցիալական լարվածությունների ընկալումները,
8.4. Սոցիալական կապիտալի մակարդակը համահասարակական և անձի/ընտանիքի մակարդակում:

9. Արտագնա աշխատանքը և արտագաղթը, այդ թվում.
9.1. Արտագնա աշխատողներ ունեցող ընտանիքները,
9.2. Արտագնա աշխատողի առկայության ազդեցությունը կյանքի որակի վրա,
9.3. Արտագաղթի հակվածությունը,
9.4. Արտագաղթի պատճառները:

10. Հասարակության ինֆորմացիոն վարքը, այդ թվում.
10.1. Ինֆորմացիայի հիմնական աղբյուրները,
10.2. Հեռուստադիտումները,
10.3. Ինտերնետի օգտագործումը,
10.4. Ինտերնետային սոցիալական ցանցերի օգտագործումը:

11. Քաղաքական մշակույթ, այդ թվում.
11.1. Հասարակական-քաղաքական մասնակցություն,
11.2. Ընդհանուր քաղաքական լոյալությունը,
11.3. Վստահությունը քաղաքական և սոցիալական ինստիտուտներին,
11.4. Աշխարհամակարգային գիտակցությունը հասարակությունում,
11.5. Հայաստանի առաջնահերթ խնդիրները,
11.6. Սպասումները Կարեն Կարապետյանի կառավարումից:

Հետազոտությունում ցուցանիշները, որպես կանոն, դիտարկվել են ոչ միայն ամբողջ ընտրանքի համար, որի դեպքում ստացված գնահատականները կարելի է ընդհանրացնել որպես Հայաստանի ամբողջ հասարակության (18 և ավելի տարիքի անձանց) բնութագրեր, այլև ապա-ագրեգացվել են ըստ 7 սոցիալ-ժողովրդագրական խմբերի, մասնավորապես ըստ.

1. բնակավայրի տիպի՝ Երևան, մարզային քաղաքներ և գյուղեր,
2. բարեկեցության խմբերի՝ բարձր, միջին, ցածր,
3. տարիքային չորս խմբերի՝ 18-29, 30-45, 46-60 և 60-ից ավելի տարեկան,
4. սեռի,
5. կրթամակարդակի երեք խմբերի՝ միջնակարգ և ցածր, միջին մասնագիտական, բարձրագույն և ավելի բարձր (գիտական կոչումով),
6. տնտեսական ակտիվության՝ զբաղված, գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ,
7. ըստ զբաղվածության կատեգորիաների:

Տվյալների համադրելիության դեպքում, որպես կանոն, կյանքի որակի ցուցանիշները համեմատվել են նախորդ հետազոտությունների համապատասխան ցուցանիշների հետ, այդպիսով հնարավորություն է ստեղծվել դիտարկելու դրանց դինամիկան:

2.2. Կյանքի որակի ինդեքսի գնահատման մեթոդաբանությունը և դրանց մեկնաբանությունը

Հետազոտության ընթացքում հասարակության բավարարվածությունը կյանքի տարբեր ոլորտներից, ենթաոլորտներից և դրանց բաղադրիչներից չափվել է հարցաթերթային հարցերի հնարավորինս միասնական ձևակերպումներով (հաշվի առնելով հայերենի քերականական և ոճաբանական առանձնահատկությունները), և կիրառվել է հնարավորինս միասնական սանդղակ:

Հարցվողների դիրքորոշումների չափման համար հետազոտությունում կիրառվել են Լայկերտի սանդղակի տիպի քառաստիճան, առանց միջին կետի սանդղակներ: Կախված գնահատվող կոնցեպտի բովանդակությունից և բնույթից՝ դրանք ստացել են համապատասխան բառային ձևակերպումներ: Մասնավորապես, բավարարվածության աստիճանի գնահատման համար կիրառվել է. «**Որքանո՞վ եք բավարարված [ոլորտ/ենթաոլորտ/բաղադրիչ] [իրավիճակից]**» հարցը, իսկ սանդղակը ստացել է հետևյալ բառային ձևակերպումը.

1. «Ընդհանրապես բավարարված չեմ»,
2. «Ավելի շուտ բավարարված չեմ»,
3. «Ավելի շուտ բավարարված եմ»,
4. «Լիովին բավարարված եմ»:

Զեկույցը կազմավորվել է մեծածավալ հաշվարկների արդյունքում: Դրանց ներկայացումն ամբողջական տեսքով անխուսափելիորեն կծանրացներ արդյունքների ընկալումը: Այդ պատճառով արդյունքներն առավել ընկալելի դարձնելու համար, այն դեպքերում, երբ դա չէր աղավաղում տվյալների բուն բովանդակությունը, զեկույցի գծապատկերներում և աղյուսակներում միավորվել են պատասխանների դրական և բացասական բնույթ ունեցող տարբերակները: Մասնավորապես, **«Լիովին բավարարված եմ»** և **«Ավելի շուտ բավարարված եմ»** տարբերակները միավորվել են որպես բավարարվածություն արտահայտող պատասխաններ, իսկ բացասական բնույթի դիրքորոշումներ արտապատկերող աստիճանները՝ **«Ընդհանրապես բավարարված չեմ»** և «**Ավելի շուտ բավարարված չեմ**», միավորվել են՝ որպես անբավարարվածություն արտահայտող պատասխաններ: Դրանով իսկ աղյուսակներում և գծապատկերներում միայն միավորված դրական դիրքորոշումների ներկայացումը լիարժեք պատկերացում է տալիս ամբողջ բաշխման վերաբերյալ: Այդ մոտեցման կիրառման դեպքում հնարավոր է վերլուծությունների հիմքում ունենալ ոչ թե առանձին ցուցանիշներ, այլ **ենթաոլորտների և դրանց բաղադրիչների պրոֆիլները**, ինչը դյուրացնում է զեկուցվող տվյալների հնարավորինս ամբողջական խմբավորված ընկալումը: Բացի դրանից, պրոֆիլների ընկալումները

դյուրինացնելու համար երբեմն կիրառվել են աղյուսակի վանդակների գունավորումներ կամ գրաֆիկական միջոցներ:

Տվյալների ներկայացման նկարագրված մեթոդի կիրառման դեպքում զեկույցում բավարարվածության մակարդակներին կցվել է հետևյալ որակական (կարգային) սանդղակը.

- «**Շատ բարձր**», եթե տվյալ բաղադրիչի որակից «Լիովին բավարարված» կամ «Ավելի շուտ բավարարված» հարցվածների քանակը մեծ է կամ հավասար 80%-ի:
- **«Բարձր»**, եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [60%; 80%) միջակայքում:
- **«Միջին»**, եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [40%; 60%) միջակայքում:
- **«Ցածր»,** եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [20%; 40%) միջակայքում:
- **«Շատ ցածր»,** եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [0%; 20%) միջակայքում:

Զեկույցում հանրապետական, համայնքային և անձի/ընտանիքի մակարդակի կյանքի որակի ինդեքսները և դրանց ոլորտային բաղադրիչները հաշվարկվել են հետևյալ կերպ.

- Յուրաքանչյուր հարցվողի համար կառուցվող ինդեքսի արժեքը հաշվարկվել է որպես տվյալ մակարդակում կյանքի որակի դիտարկված բաղադրիչների գնահատականների միջին արժեք՝ առանց բացակայող արժեքների հաշվառման, որի նկատմամբ կիրառվել է գծային ձևափոխություն այնպես, որպեսզի ստացված արժեքը արտապատկերվի 0-100 սանդղակի վրա:
- Սանդղակում 0-ն նշանակում է ինդեքսի ամենափոքր արժեքը կամ լիովին անբավարարվածությունը, իսկ 100 արժեքը՝ ամենաբարձր աստիճանը կամ լիովին բավարարվածությունը:
- Կյանքի որակի ինդեքսը հարցվողների ամբողջ համախմբության կամ յուրահատուկ խմբերի համար հաշվարկվել է որպես առանձին հարցվողների ինդեքսների միջին արժեք ամբողջ ընտրանքում կամ համապատասխան ենթաընտրանքներում:

Հաշվարկվել են հետևյալ 13 ինդեքսները.

1. **Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքս,**
   1.1. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ենթաինդեքս՝ տնտեսական ոլորտ,
   1.2. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ենթաինդեքս՝ սոցիալական ոլորտ,
   1.3. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ենթաինդեքս՝ ենթակառուցվածքներ,
   1.4. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ենթաինդեքս՝ կառավարման ոլորտ:
2. **Համայնքային մակարդակում** կյանքի որակի ինդեքս
3. **Ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքս,**
   3.1. Ընտանիքի մակարդակում կյանքի որակի ենթաինդեքս՝ բարեկեցության բաղադրիչ,
   3.2. Ընտանիքի մակարդակում կյանքի որակի ենթաինդեքս՝ ապահովության բաղադրիչ,
   3.3. Ընտանիքի մակարդակում կյանքի որակի ենթաինդեքս՝ ժամանցի և հանգստի բաղադրիչ,
   3.4. Ընտանիքի մակարդակում կյանքի որակի ենթաինդեքս՝ հեղինակության բաղադրիչ,
   3.5. Ընտանիքի մակարդակում կյանքի որակի ենթաինդեքս՝ ինքնաիրականացման բաղադրիչ:

2.3. Զանգվածային հետազոտության ընտրանքը

Բոլոր հետազոտություններում **ընդհանուր համակցությունն** է եղել Հայաստանի 18 և ավելի տարիքի բնակչությունը:

Ընտրանքը քվոտային է: Այն **համամասնական** է ըստ սեռի, տարիքի, մարզերի, բնակավայրի տիպի (Երևան, քաղաքներ, գյուղեր): Քվոտաները սահմանվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության

(ԱԿԾ) տվյալների հիման վրա: 2010-2016 թթ. հետազոտությունների ընտրանքների ծավալները, դաշտային փուլերը, ընտրանքների բաշխումն ըստ բնակավայրի տիպերի տրված է Աղյուսակ 1-ում, իսկ 0.95 հավանականությամբ ընտրանքային սխալների հավաստիության միջակայքերը տրված են Աղյուսակ 2-ում:

Տարի	Դաշտային փուլը	Ընդամենը	Երևան	Քաղաք	Գյուղ
2010	2010թ. դեկտեմբեր	2,027	705	618	704
2011	2011թ. դեկտեմբեր	2,000	709	602	689
2012	2012թ. դեկտեմբեր	1,997	708	595	694
2013	2014թ. հունվար – փետրվար	2,003	708	587	708
2014	2014թ. դեկտեմբեր	2,000	721	619	660
2015	2015թ. դեկտեմբեր	2,011	715	612	684
2016	2016թ. դեկտեմբեր – 2017 թ. հունվար	2,018			

Աղյուսակ 1. Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում հետազոտությունների ընտրանքի ծավալները 2010-2015 թթ.

Տարի	Ընդամենը	Երևան	Քաղաք	Գյուղ
2010	±2.18	±3.69	±3.94	±3.69
2011	±2.19	±3.68	±3.99	±3.68
2012	±2.19	±3.68	±4.02	±3.68
2013	±2.19	±3.68	±4.04	±3.68
2014	±2.19	±3.65	±3.94	±3.81
2015	±2.19	±3.65	±3.94	±3.81
2016	±2.19	±3.65	±3.94	±3.81

Աղյուսակ 2. Ընտրանքի p=0.95 մակարդակում սահմանային սխալները 2010-2013 թթ.

2016 թ. հետազոտության ընտրանքի սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը ներկայացված են Աղյուսակ 3, Աղյուսակ 4, Աղյուսակ 5 և Աղյուսակ 6 -ում: Աղյուսակներում տրված են յուրաքանչյուր սոցիալ-ժողովրդագրական խմբի տոկոսային քանակն ընտրանքում, հարցվածների քանակը և տվյալ կատեգորիայում բնակչության քանակը:

Տարիք	Սեռ						Ընդամենը		
	Իգական			Արական					
	%	Քանակ	Բնակչ.	%	Քանակ	Բնակչ.	%	Քանակ	Բնակչ.
18-24	7.1%	143	163,125	6.0%	121	138,029	**13.1%**	264	301,154
25-29	7.9%	160	182,517	7.1%	143	163,125	**15.0%**	303	345,642
30-45	15.0%	302	344,501	14.3%	289	329,672	**29.3%**	591	674,173
46-60	16.1%	325	370,738	13.4%	270	307,998	**29.5%**	595	678,736
60 +	7.7%	155	176,814	5.5%	110	125,481	**13.1%**	265	302,294
Ընդամենը	**53.8%**	1,085	1,237,696	**46.2%**	933	1,064,304	**100.0%**	2,018	2,302,000

Աղյուսակ 3. Ընտրանքի սեռա-տարիքային բաշխումը

Տարիք	Բնակավայր									Ընդամենը		
	Երևան			Քաղաք			Գյուղ					
	%	Քանակ	Բնակչ.	%	Քանակ	Բնակչ.	%	Քանակ	Բնակչ.	%	Քանակ	Բնակչ.
18-24	4.7%	95	108,370	3.1%	62	70,725	5.3%	107	122,058	**13.1%**	264	301,154
25-29	5.6%	113	128,903	4.3%	86	98,103	5.2%	104	118,636	**15.0%**	303	345,642
30-45	9.9%	199	227,006	8.9%	180	205,332	10.5%	212	241,835	**29.3%**	591	674,173
46-60	10.1%	204	232,710	7.9%	160	182,517	11.4%	231	263,509	**29.5%**	595	678,736
60 +	5.8%	117	133,466	4.1%	82	93,540	3.3%	66	75,288	**13.1%**	265	302,294
Ընդ.	**36.1%**	728	830,454	**28.2%**	570	650,218	**35.7%**	720	821,328	100.0%	2,018	2,302,000

Աղյուսակ 4. Ընտրանքի բաշխումն ըստ բնակավայրի տիպի և տարիքի

Բարեկ.	Բնակավայր									Ընդամենը		
	Երևան			Քաղաք			Գյուղ					
	%	Քանակ	Բնակչ.	%	Քանակ	Բնակչ.	%	Քանակ	Բնակչ.	%	Քանակ	Բնակչ.
Ցածր	16.8%	339	386,709	18.5%	373	425,494	18.3%	370	422,071	**53.6%**	1,082	1,234,274
Միջին	11.8%	239	272,635	6.8%	137	156,280	12.4%	251	286,324	**31.1%**	627	715,240
Բարձր	7.4%	150	171,110	3.0%	60	68,444	4.9%	99	112,933	**15.3%**	309	352,487
Ընդ.	**36.1%**	728	830,454	**28.2%**	570	650,218	**35.7%**	720	821,328	100.0%	2,018	2,302,000

Աղյուսակ 5. Ընտրանքի բաշխումն ըստ տարիքի և բարեկեցության

Կարգավիճակ	%	Քանակ	Բնակչ.
Վարձու աշխատող պետական ձեռնարկությունում	15.4%	310	353,627
Պայմանագրով վարձու աշխատող մասնավոր ձեռնարկությունում	7.8%	158	180,236
Առանց պայմանագրի վարձու աշխատող մասնավոր ձեռնարկությունում	3.1%	63	71,866
Ինքնազբաղված մասնագետ՝ իրավաբան, բժիշկ, հաշվապահ, ճարտարապետ և այլն	0.9%	19	21,674
Ինքնազբաղված՝ արհեստավոր, առևտուր, տաքսի սերվիս, վարսավիր և այլն	7.7%	156	177,954
Ինքնազբաղված՝ գյուղատնտեսությունում	10.1%	204	232,710
Գործատու	0.6%	12	13,689
Տնային տնտեսություն վարող	14.0%	282	321,687
Բուհի ուսանող	3.4%	69	78,711
Այլ ուսումնական հաստատության սովորող	0.2%	4	4,563
Թոշակառու	10.8%	218	248,680
Չի աշխատում՝ աշխատանք չի փնտրում	9.3%	188	214,458
Չի աշխատում՝ աշխատանք է փնտրում	16.4%	331	377,583
Պատասխանը բացակայում է	0.2%	4	4,563
Ընդամենը	**100.0%**	**2,018**	**2,302,000**

Աղյուսակ 6. Ընտրանքի բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակների

2.4. Հարցվողի բարեկեցության գնահատման մեթոդաբանությունը

Սոցիոլոգիական հետազոտություններում առավել խնդրահարույց է բնակչության բարեկեցության դասակարգումն ըստ բարեկեցության մակարդակների:

Ստորև ներկայացված է այս հետազոտությունում հարցվածների բարեկեցության գնահատման և այդ գնահատականների հիման վրա նրանց դասակարգման մեթոդաբանությունը:

Հարցվածների բարեկեցությունը գնահատվել է **բարեկեցության ինդեքսի** կազմավորման միջոցով: Ինդեքսն իրենից ներկայացնում է ընտանիքի բարեկեցությունն արտապատկերող 24 փոփոխականների գումարային ինդեքս (մասնավորապես անշարժ գույքի, կենցաղային թանկարժեք գույքի, շարժական տեխնիկայի առկայությունը և եկամտի աղբյուրների ցանկը): Ընդամենը կիրառվել է 24 բնութագիր և, ըստ այդմ, ինդեքսի արժեքները փոխվում են 0-24 միջակայքում: Ինդեքսի արժեքների բաշխումը տրված է Գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. Բարեկեցության ինդեքսի բաշխումը

Ստացված ինդեքսի միջոցով հարցվածներին բարեկեցության խմբերի բաժանման համար կիրառվել է արտաքին վալիդացման մոտեցումը:

IPSC կազմակերպությունը 2016 թ. հոկտեմբերին ՀՀ Կենտրոնական Բանկի պատվերով իրականացրել է «ՏՏ ֆինանսական վարքի և պարտքերի ուսումնասիրություն»: Այդ հետազոտությունում տնային տնտեսությունների բարեկեցությունը գնահատվել է նրանց եկամուտների, ծախսերի և պարտքերի մանրամասն հաշվառման միջոցով, ինչը տալիս է բարեկեցության գնահատման բարձր ադեկվատություն: ԿԲ հետազոտությունում տնային տնտեսությունները դասակարգվել են բարեկեցության չորս խմբում.

- Ցածր բարեկեցությամբ խումբ՝ մեկ շնչի հաշվով 50,000 դրամից պակաս եկամուտ ունեցող տնային տնտեսություններ,
- Միջին բարեկեցությամբ խումբ՝ մեկ շնչի հաշվով 50,001-100,000 դրամ եկամուտ ունեցող տնային տնտեսություններ,
- Բարձր բարեկեցությամբ խումբ՝ մեկ շնչի հաշվով 100,001-150,000 դրամ եկամուտ ունեցող տնային տնտեսություններ,
- Շատ բարձր բարեկեցությամբ խումբ՝ մեկ շնչի հաշվով 150,000 դրամից ավելի եկամուտ ունեցող տնային տնտեսություններ:

Այդ խմբերի ծավալները ներկայացված են Գծապատկեր 4-Ա-ում:

Կյանքի որակի հետազոտության տվյալներով կառուցված բարեկեցության ինդեքսի միջոցով հարցվածները ստորաբաժանվել են չորս այնպիսի խմբերի որոնց ծավալները հնարավորինս ավելի մոտ են ՀՀ ԿԲ բանկի հետազոտությամբ ստացված բարեկեցության խմբերին: Լավագույն ստորաբաժանումը հետևյալն է.

- -Ցածր բարեկեցության խումբ՝ բարեկեցության ինդեքսի արժեքը գտնվում է [0; 7] միջակայքում,
- Միջին բարեկեցության խումբ՝ ինդեքսի արժեքը գտնվում է [8; 11] միջակայքում,
- Բարձր բարեկեցության խումբ՝ ինդեքսի արժեքը գտնվում է [12;14] միջակայքում,
- Շատ բարձր բարեկեցության խումբ՝ ինդեքսի արժեքը գտնվում է [14; 24] միջակայքում:

Այդ խմբերի ծավալները ներկայացված են Գծապատկեր 4-Բ-ում:

Գծապատկեր 4-Ա և Բ-ի համեմատությունը ցույց է տալիս, որ բարեկեցության խմբերի բաժանումը Կյանքի որակի հետազոտությունում մեծ ճշտությամբ կրկնում է ՀՀ ԿԲ բանկի հետազոտության բաշխումը:



Գծապատկեր 4. ՏՏ բարեկեցության գնահատականներն ըստ 2016 թ. հոկտեմբերի «ՏՏ ֆինանսական վարքի և պարտքերի ուսումնասիրության» և ըստ բարեկեցության ինդեքսի:

Քանի, որ Կյանքի որակի հետազոտություններում կիրառվել է հարցվածների ստորաբաժանում երեք բարեկեցության խմբերի, Գծապատկեր 4-Բ-ի բարձր և շատ բարձր բարեկեցության խմբերը միավորվել են և կիրառվել որպես Բարձր բարեկեցության խումբ: Ստացված Բարձր բարեկեցության խմբի ծավալը՝ 15.3% է:

Բարեկեցության խմբերի բաշխման դինամիկան 20147-2016 թթ. ընթացքում ներկայացված է Գծապատկեր 5-ում: Բաշխումների դինամիկան ցույց է տալիս բնակչության բարեկեցության դանդաղ նվազման միտում:



Գծապատկեր 5. Բարեկեցության խմբերի ծավալներն ընտրանքում

2.5. Հապավումներ

Զեկույցի աղյուսակներում և գծապատկերներում հաճախ տեխնիկական նկատառումներով կիրառվել են հապավումներ՝ շատ չփոքրացնելու համար տառատեսակը, որն անընթեռնելի կդարձներ գրառումը: Մասնավորապես.

- Կրթամակարդակի խմբերի անվանումներում.
  - «Միջնակարգ կամ ավելի ցածր» կրթամակարդակով խմբի համար կիրառվել է «Միջն.»,
  - «Միջին մասնագիտական» խմբի համար՝ «ՄՄ»,
  - «Բարձրագույն կամ ավելի (գիտական կոչումով)» խմբի համար «Բար.»:
- Բարեկեցության խմբերում.
  - «Ցածր բարեկեցությունը» փոխարինվել է «Ց»-ով,
  - «Միջին բարեկեցությունը»՝ «Մ»-ով,
  - «Բարձր բարեկեցությունը»՝ «Բ»-ով:
- Զբաղվածության խմբերում.
  - «Տնտեսապես ոչ ակտիվ»՝ «ՏՈԱ»:

3. Կյանքի որակի հանրապետական մակարդակի ուսումնասիրություն

Ընթերցողի հարմարության համար, նախքան հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի և դրա ենթաինդեքսների ուսումնասիրության արդյունքների ներկայացումը, ստորև նորից տրված են **հանրապետական մակարդակում** կյանքի որակի ինդեքսների համար կիրառված բաղադրիչները:

1. **Տնտեսական** ոլորտ.
   1.1. Դոլարի կուրսի կայունությունը,
   1.2. Երկրում տնտեսական զարգացման տեմպերը,
   1.3. Աշխատողի իրավունքների պաշտպանվածությունը,
   1.4. Ժողովրդի ընդհանուր կենսամակարդակը,
   1.5. Թոշակների մակարդակը (2010 աշխատավարձ),
   1.6. Բնակարանային վարկերի մատչելիությունը,
   1.7. Գների մակարդակը,
   1.8. Աշխատատեղերի առկայությունը:
2. **Սոցիալական** ոլորտ.
   2.1. Հայաստանի պաշտպանվածությունը պատերազմի վտանգից,
   2.2. Երկրի պաշտպանվածությունը զանգվածային անկարգություններից,
   2.3. Կրթության որակը,
   2.4. Առողջապահության որակը,
   2.5. Հանգստի/ժամանցի բազմազանությունը,
   2.6. Մենդամթերքի որակը,
   2.7. Սպառողների իրավունքների պաշտպանվածությունը,
   2.8. Առողջապահության մատչելիությունը,
   2.9. Դեղերի գների մատչելիությունը:
3. **Ենթակառուցվածքների** ոլորտ.
   3.1. Առևտրում սպասարկման որակը,
   3.2. Բանկային ծառայությունների որակը,
   3.3. Ինտերնետի որակը,
   3.4. Միջքաղաքային տրանսպորտի աշխատանքի որակը,
   3.5. Միջքաղաքային ճանապարհների վիճակը,
   3.6. Հայաստանից դեպի դուրս ավտոբուսային գների մատչելիությունը,
   3.7. Երկաթուղու տոմսերի մատչելիությունը,
   3.8. Ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը:
4. **Կառավարման** ոլորտ.
   4.1. Քաղաքացիական ազատությունների աստիճանը,
   4.2. Տեղական իշխանությունների գործունեությունը,
   4.3. Մարդու իրավունքների պաշտպանվածությունը,
   4.4. Դատավորների արդարության աստիճանը,
   4.5. Երկրում օրենքների կիրառելիությունը,
   4.6. Երկրում կարիերայի հնարավորությունները,
   4.7. Կառավարության գործունեությունը,
   4.8. Ընտրությունների արդարության մակարդակը,

4.9. Կաշառակերության դեմ պայքարը,
4.10. Լրատվամիջոցների ազատության աստիճանը:

3.1. Կյանքի որակի հանրապետական մակարդակի ինդեքսի և ենթաինդեքսների դինամիկան 2010-2016

Հայաստանում կյանքի որակի ընկալումները հանրապետական մակարդակում ըստ կյանքի որակի հանրապետական մակարդակի ինդեքսի և ենթաինդեքսների, ինչպես նաև դրանց դինամիկան 2010-2016 թթ. ընթացքում ներկայացված է Գծապատկեր 6-ում:

Ընդհանուր վիճակ.

Հանրապետական մակարդակի կյանքի որակի ինդեքսը 2016 թ.-ին կազմել է 34.2, այն գտնվել է **ցածր** գնահատականների տիրույթում, սակայն բավական մոտ է միջին գնահատականների տիրույթի ներքին սահմանին (40):

Համայնքային մակարդակի կյանքի որակի ինդեքսի արժեքը կազմել է 69.4, գտնվելով բարձր գնահատականների տիրույթում [60; 80): Այն կրկնակի գերազանցել է հանրապետական մակարդակի ինդեքսին:

Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքը կազմել է 50.2, գտնվելով միջին գնահատականների տիրույթում՝ [40; 60], մոտ 1.5 անգամ գերազանցելով հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքը:



Գծապատկեր 6. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի և նրա բաղադրիչների դինամիկան 2010-2015 թթ.

Վիճակի դինամիկան.

2010-2012 թթ. հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսը և դրա բաղադրիչներն ունեին աճի միտումներ, սակայն 2013 թ.-ին դրանք բոլորն կտրուկ անկում ունեցան: Դրանից հետո

ինդեքսի և ենթաինդեքսների արժեքները նորից սկսեցին նվազել և 2016 թ.-ին դրանց արժեքները համարյա հավասարվել են անկումային 2012 թ. արժեքներին:

Ըստ էության.

- **Հայաստանում հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսը և ենթաինդեքսներն ունեն «լճացման միտում», որը կարող է վերածվել հետընթացի:**
- **Հետընթացի հավանականությունը համեմատաբար ավելի բարձր է Կառավարման ոլորտի համար:**

Քննենք այն հարցը, թե որքանով է տարբերվում հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսը հիմնական սոցիալ-ժողովրդագրական խմբերում և ինչպիսին է եղել այդ տարբերությունների դինամիկան 2010-2016 թթ. ընթացքում:

Միտումներն ըստ բնակավայրի տիպի (Գծապատկեր 7): 2010-2016 թթ. ընթացքում հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսը միշտ ավելի բարձր է եղել գյուղերում, մի փոքր ավելի ցածր՝ քաղաքներում և ամենացածրը՝ Երևանում: 2014թ.-ին ինդեքսի արժեքները բնակավայրի տարբեր տիպերում առավելագույնս մոտեցան միմյանց, սակայն 2015-2016 թթ.-ին դրանք նորից սկսեցին միմյանցից հեռանալ:

- **Այդ տարամիտումը պայմանավորված է Երևանում կյանքի որակի ինդեքսի անկմամբ, իսկ գյուղերում և քաղաքներում ինդեքսի արժեքը վիճակագրորեն չի փոխվել:**

Միտումներն ըստ բարեկեցության (Գծապատկեր 8)**:** Ինչպես և սպասելի էր հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքներն 2010-2015 թթ. ընթացքում ամենաբարձրն են եղել բարձր բարեկեցության խմբում, որին հետևում է միջին բարեկեցության խումբը, իսկ ցածր բարեկեցության խմբում ինդեքսի արժեքները եղել են ամենացածրը:

2010-2012 թթ. առանձնահատկությունն այն էր, որ հանրապետական մակարդակում Կյանքի որակի ինդեքսն աճում էր ցածր բարեկցության խմբում, 2012 թ.-ին և անկումային 2013 թ.-ին ինդեքսի արժեքների տարբերությունը բարեկեցության խմբերում հասան նվազագույնի, սակայն 2014-2015 թթ. նորից սկսեցին տարամիտվել, սակայն առաջացավ նոր առանձնահատկություն՝ ինդեքսի արժեքները մոտենում էին միմյանց՝ բարձր բարեկեցության խմբում ինդեքսի անկման հետևանքով, իսկ միջին և ցածր բարեկեցության խմբերում ինդեքսի արժեքները համարյա չէին փոխվում: :

Միտումներն ըստ տարիքային խմբերի (Գծապատկեր 9)**:** Հանրապետական մակարդակում Կյանքի որակի ինդեքսի ստորաբաժանումն ըստ տարիքային խմբերի ունի այն առանձնահատկությունը, որ.

- **Որքան ավելի բարձր է տարիքային խումբը, այնքան ավելի ցածր է հանրապետական մակարդակում Կյանքի որակի ինդեքսի արժեքը:**

2014-2016 թթ. ընթացքում բոլոր տարիքային խմբերում ինդեքսի արժեքը համարյա անփոփոխ էր, սակայն անկում էր ապրում ամենաբարձր՝ 60 և ավելի տարիքային խմբում:

Միտումներն ըստ բնակչության կրթական մակարդակների (Գծապատկեր 10)**.**

2010-2016 թթ. ընթացքում հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքների պրոֆիլի և դինամիկայի առանձնահատկությունն այն է, որ.

- **Որքան ավելի բարձր է կրթամակարդակը, այնքան ավելի ցածր է հանրապետական մակարդակում կյանքի որակի ընկալումը:**

Այս արդյունքը հեշտ է բացատրվում՝ որքան ավելի բարձր է մարդու կրթական մակարդակը, այնքան ավելի քննադատաբար է նա գնահատում իրավիճակը հանրապետական մակարդակում: Այս փաստը, միաժամանակ, հիմնավորում է նաև հետազոտության մոտեցումը, որ կյանքի որակի գնահատականները պետք է հիմնված լինեն ոչ միայն մարդկանց սուբյեկտիվ ընկալումների, այլև իրավիճակի օբյեկտիվ գնահատականների վրա:



Գծապատկեր 7. Կյանքի որակի ինդեքսի դինամիկան ըստ բնակավայրի տիպերի 2010-2016 թթ.



Գծապատկեր 8. Կյանքի որակի ինդեքսի դինամիկան ըստ բարեկեցության 2010-2016 թթ.



Գծապատկեր 9. Կյանքի որակի ինդեքսի դինամիկան տարիքային խմբերում 2010-2016 թթ.



Գծապատկեր 10. Կյանքի որակի ինդեքսի դինամիկան ըստ կրթամակարդակի 2010-2015 թթ.

3.2. Կյանքի որակի հանրապետական մակարդակի ինդեքսը և ենթաինդեքսները ժողովրդագրական խմբերում 2015-2016

Գծապատկեր 11 և Գծապատկեր 12-ում ներկայացված է հանրապետական մակարդակում կյանքի որակի ենթաինդեքսների արժեքները սոցիալ-ժողովրդագրական խմբերում համապատասխանաբար 2015 և 2016 թթ.-ին:

Գծապատկերների ուսումնասիրությունն ու համադրումը ցույց է տալիս, որ.

- Սոցիալ-ժողովրդագրական խմբերում հանրապետական մակարդակում կյանքի որակի ենթաինդեքսների փոխադարձ հարաբերակցությունները 2015 և 2016 թթ. ունեն նույն

կերպարները, սակայն համապատասխան սոցիալ-ժողովրդագրական կատեգորիաներում դրանց արժեքները տարբերվում են:

- Սոցիալ-ժողովրդագրական խմբերում հանրապետական մակարդակում կյանքի որակի ենթաինդեքսների փոխադարձ հարաբերակցությունները կրկնում են այդ ինդեքսների հանրապետական մասշտաբով արժեքների փոխադարձ հարաբերակցությունը, այսինքն՝ ամենից բարձր արժեքներ ունեն ենթակառուցվածքների ինդեքսները, որոնց հետևում են սոցիալական և կառավարման ոլորտների ինդեքսները, իսկ ամենից ցածրն են տնտեսական ոլորտի ենթաինդեքսները:
- Հանրապետական մակարդակում կյանքի որակի բոլոր ենթաինդեքսները ամենից ցածրն են Երևանում և քաղաքներում, իսկ համեմատաբար ամենից բարձրն են գյուղերում:
- Տարիքի աճի հետ, որպես կանոն, ենթաինդեքսների արժեքները նվազում են:
- Բարեկեցության աճի հետ, ենթաինդեքսների արժեքներն աճում են:
- Կրթական մակարդակի աճի հետ ենթաինդեքսները նվազում են:
- Սոցիալ-ժողովրդագրական խմբերում ենթաինդեքսների մեծ մասը գտնվում է ցածր գնահատականների տիրույթում՝ [40; 60]:
- Շատ ցածր [20; 40] գնահատականների տիրույթում են տնտեսական ոլորտի ենթաինդեքսի արժեքները երևանաբնակների, 40-60 և 60+ տարիքային և բարձրագույն կրթությամբ խմբերում:
- Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսների փոխհարաբերակցությունը սոցիալ-ժողովրդագրական խմբերում վերահաստատում է այն դրույթը, որ հանրապետական մակարդակում սոցիալական դժգոհությունը դիրքավորված է առավելապես երևանաբնակների և բարձրագույն կրթությամբ անձանց խմբերում:



Գծապատկեր 11. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի և նրա ոլորտային բաղադրիչների արժեքները սոցիալ-ժողովրդագրական խմբերում, 2015 թ.



Գծապատկեր 12. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի և նրա ոլորտային բաղադրիչների արժեքները սոցիալ-ժողովրդագրական խմբերում, 2016 թ.

3.3. Կյանքի որակի ինդեքսի բաղադրիչների դինամիկան երևանաբնակների և բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում

Կյանքի որակի բոլոր 7 հետազոտությունները ցույց են տվել, որ.

- **Հանրապետական մակարդակում կյանքի որակի ընկալումներն առավել հզոր ազդեցությունն են թողնում Հայաստանում ներքին կայունության բնութագրերի վրա**:

Բացի դրանից, Հայաստանում իրականացված այլ հետազոտությունները, այդ թվում նաև կյանքի որակի ինդեքսի նախորդ տարիների արդյունքները, ցույց են տվել, որ.

- **Հայաստանում հասարակական դժգոհությունները համեմատաբար ավելի բարձր են Երևանում և բարձր կրթական մակարդակով անձանց շրջանում:**

Ընդ որում՝ առավել բացասական ազդեցություններ են թողնում դժգոհությունները կառավարման և տնտեսական ոլորտներում: Այդ պատճառով ինչպես նախորդ, այնպես էլ ներկայացվող զեկույցներում առանձին դիտարկվել է հանրապետական մակարդակում կառավարման և տնտեսական ոլորտների ենթաինդեքսների դինամիկան երևանաբնակների և բարձրագույն կրթությամբ անձանց խմբերում 2010-2015 թթ. ընթացքում:

Կյանքի որակի կառավարման ոլորտի ենթաինդեքսի դինամիկան Երևանում և բարձրագույն կրթությամբ խմբերում ներկայացված է Գծապատկեր 13-ում:



Գծապատկեր 13. Հանրապետական մակարդակում կառավարման ոլորտի ենթաինդեքսի դինամիկան երևանաբնակների և բարձրագույն կրթությամբ անձանց խմբերում, 2010-2016 թթ.

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Բարձրագույն կրթությամբ և երևանաբնակների շրջանում այդ ենթաինդեքսների արժեքները 2010-2016 թթ. ընթացքում (Գծապատկեր 13-ում համապատասխանաբար**

մանուշակագույն և երկնագույն գծերը) կրկնում են հանրապետական մասշտաբով ենթաինդեքսի դինամիկան՝ մնալով դրանից ավելի ցածր:

- Ընդ որում երևանաբնակների շրջանում ենթաինդեքսի արժեքները եղել են ավելի ցածր, քան բարձրագույն կրթությամբ անձանց խմբում:
- 2014-2016 թթ. այդ ենթաինդեքսի արժեքները երևանաբնակների և բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում ունեցել են անկման միտումներ:

Կյանքի որակի տնտեսական ոլորտի ենթաինդեքսի բաղադրիչների դինամիկան երևանաբնակների և բարձրագույն կրթությամբ անձանց խմբերում ներկայացված է Գծապատկեր 14-ում:

- Երևանում տնտեսական ոլորտի ենթաինդեքսների արժեքները 2010-2016 թթ. ընթացքում կրկնել են հանրապետական մասշտաբով ենթաինդեքսի դինամիկան՝ մնալով դրանից ավելի ցածր:
- Ընդ որում երևանաբնակների շրջանում ենթաինդեքսի արժեքները, չնայած եղել են ավելի ցածր, քան բարձրագույն կրթությամբ անձանց խմբում, սակայն համեմատած կառավարման ոլորտի ենթաինդեքսի, դրանց արժեքներն ավելի մոտ են եղել միմյանց:
- 2014-2016 թթ. այդ ենթաինդեքսի արժեքները երևանաբնակների շրջանում ունեցել է անկման միտումներ, սակայն բարձրագույն կրթությամբ անձանց շրջան մնացել է նույն մակարդակի վրա:



Գծապատկեր 14. Հանրապետական մակարդակում տնտեսական ոլորտի ենթաինդեքսի դինամիկան երևանաբնակների և բարձրագույն կրթությամբ անձանց խմբերում, 2010-2016 թթ.

3.4. Հանրապետական մակարդակում կյանքի որակի առանձին բաղադրիչները և դրանց փոփոխությունը 2015-2016 թթ.

Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի հաշվարկի համար կիրառված բաղադրիչներից բավարարվածության մակարդակները 2015 և 2016 թթ. տրված են համապատասխանաբար՝ Գծապատկեր 15 և Գծապատկեր 16-ում: Գծապատկերներում ներկայացված է «լիովին բավարարված» և «ավելի շուտ բավարարված» պատասխանների ընդհանուր քանակը: Նույն գրաֆիկների վրա՝ աջ կողմում ցուցադրված են այն անձանց քանակը, ովքեր դժվարացել են գնահատել հանրապետական մակարդակում կյանքի որակի տվյալ բաղադրիչը:

Գծապատկերների պրոֆիլների համեմատությունը 2015 և 2016 թթ. համար ցույց է տալիս, որ.

- **2015 և 2016 թթ. ընթացքում հանրապետական մակարդակում կյանքի որակի բաղադրիչներից բավարարվածության պրոֆիլները նման են միմյանց:**

Կյանքի որակի հանրապետական մակարդակում ինդեքսի խնդրահարույց բաղադրիչները

Տնտեսական ոլորտ. Գծապատկեր 15 և Գծապատկեր 16-ում ներկայացված դիրքորոշումների պրոֆիլները ակնառու կերպով ցուցադրում են Հայաստանի հասարակության ցածր բավարարվածությունը Հայաստանում **տնտեսական** ոլորտի բնութագրերից: Այս ոլորտում բոլոր բաղադրիչներից բավարարվածության մակարդակները ցածր են կամ շատ ցածր:

Ստորև թվարկված են հանրապետական մակարդակում Կյանքի որակի այն բաղադրիչները, որոնցից բավարարվածության մակարդակը փոքր է 26%-ից: Առավել խնդրահարույց բաղադրիչները, որոնք գտնվում են **շատ ցածր** գնահատականների տիրույթում նշված են **կարմիր գույնով**:

- Տնտեսական ոլորտ.
  - **Թոշակների չափը** **7.8%,**
  - **Աշխատատեղերի առկայությունը** **8.9%,**
  - **Բնակարանային վարկերի մատչելիությունը** **9.6%,**
  - **Ժողովրդի ընդհանուր կենսամակարդակը** **14.3%,**
  - Գների մակարդակը 16.1%,
  - Երկրի տնտեսական զարգացման տեմպերը 18.0%,
  - Աշխատողի իրավունքների պաշտպանվածությունը 20.0%,
  - Դոլարի կուրսի կայունությունը 25.1%:
- Սոցիալական ոլորտ.
  - **Դեղերի գների մատչելիությունը** **11.4%,**
  - **Առողջապահության ֆինանսական մատչելիությունը** **12.9%,**
  - Սպառողների իրավունքների պաշտպանվածությունը 23.0%:
- Ենթակառուցվածքների ոլորտ.
  - Երկաթուղու տոմսերի մատչելիությունը 21.7%,
  - Ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը 26.2%,
- Կառավարման ոլորտ.
  - **Ընտրությունների արդարության մակարդակը** **12.9%,**
  - **Կաշառակերության դեմ պայքարը** **15.3%,**
  - **Դատավորների արդարության աստիճանը** **15.4%,**
  - **Երկրում օրենքների կիրառելիությունը** **18.7%,**
  - **Կառավարության գործունեությունը** **19.0%,**
  - Մարդու իրավունքների պաշտպանվածությունը 21.0%,
  - Երկրում կարիերայի հնարավորությունները 23.1%:



Գծապատկեր 15. Հանրապետական մակարդակում կյանքի որակի գնահատված բաղադրիչները, 2015 թ.



Գծապատկեր 16. Հանրապետական մակարդակում կյանքի որակի գնահատված բաղադրիչները, 2016 թ.

Կյանքի որակի հանրապետական մակարդակում ինդեքսի բարձր գնահատված բաղադրիչները

- **Հանրապետական մակարդակում Կյանքի որակի բարձր գնահատված բաղադրիչները հասարակության հետ կառավարության հաղորդակցության գործընթացում հանրապետությունում առկա դրական տեղաշարժերը հիմնավորող թեմաներն են:**

Տնտեսական ոլորտում այդպիսիք չկան՝ բոլոր բաղադրիչները գտնվում են շատ ցածր և ցածր գնահատականների տիրույթում:

Սոցիալական ոլորտում, վերապահումներով, այդպիսիք կարող է լինել

- **կրթության որակը,** որը բավարար են գնահատել հարցվածների 53.5%-ը:

Նշենք, որ 2014 թ.-ին այդպիսիք էին՝ **Հայաստանի պաշտպանվածությունը արտաքին վտանգից,** որից բավարարված էր բնակչության 54.6%, ինչպես նաև **Երկրի պաշտպանվածությունը զանգվածային անկարգություններից,** որից բավարարված էր հասարակության 50.4%: Սակայն 2015-2016 թթ.-ին դրանց գնահատականները նվազել են և 2016 թ.-ին դարձել համապատասխանաբար՝ 37.2% և 39.0%:

Ենթակառուցվածքների ոլորտում բարձր գնահատականների տիրույթում են,

- **Առևտրում սպասարկման որակը**՝ 68.07% գնահատականով,
- **Բանկային ծառայությունների որակը**՝ 60.0%:
- **Ինտերնետի որակը՝** 60.3%,

Կառավարման ոլորտում, որոշակի վերապահումներով, այդպիսին կարող է լինել.

- **Լրատվամիջոցների ազատությունների աստիճանը՝** որից բավարարված է բնակչության 51.0%-ը:

Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի բաղադրիչների դինամիկան 2013-2016 թթ.

Տնտեսական ոլորտ

Հանրապետական մակարդակում կյանքի որակի **տնտեսական ոլորտի** բաղադրիչների փոփոխությունները 2013-2016 թթ. ընթացքում տրված են Գծապատկեր 17-ում: Գծապատկերից երևում է, որ.

- **Դրական տեղաշարժեր են տեղի ունեցել հետևյալ բաղադրիչներում.**
  - **2013-2016 թթ.-ին նշանակալիորեն աճել է բավարարվածությունը «դոլարի կուրսի կայունությունից»:**
  - **Աճել է բավարարվածությունը «գների մակարդակից», սակայն ցուցանիշը մնում է շատ ցածր գնահատականների տիրույթում՝ 16.1%:**
  - **Աճել է «աշխատատեղերի առկայությունից» բավարարվածության գնահատականը, սակայն այն մնում է շատ ցածր գնահատականների տիրույթում՝ 8.6%:**
- **2013-2015 թթ. դրական միտումներից հետո 2016 թ.-ին անկում է գրանցվել հետևյալ բաղադրիչներում.**

- **«Երկրում տնտեսական զարգացման տեմպերը»՝ 2016 թ.-ին գնահատականը կտրուկ նվազել է անցնելով շատ ցածր գնահատականների տիրույթ՝ 18.0%:**
- **«Ժողովրդի ընդհանուր կենսամակարդակը»՝ իջել է մինչև՝ 14.3%,**
- **«Բնակարանային վարկերի մատչելիությունը»՝ իջել է մինչև՝ 9.6%:**

- **2013-2016 թթ. մոնոտոն նվազում է դիտվել.**
  - **«Թոշակների մակարդակը» բաղադրիչում, որը 2016 թ.-ին դարձել է 7.8%:**

Սոցիալական ոլորտ

Սոցիալական ոլորտի բաղադրիչների դինամիկան 2013-2016 թթ. ընթացքում ներկայացված է Գծապատկեր 18-ում: Այս ոլորտում

- **2016 թ.-ին աճ է գրանցվել հետևյալ բաղադրիչներում.**
  - **«Սննդամթերքի որակը», որը մոնոտոն աճել է 2013-2016 թթ.** հասնելով՝ 48.2%-ի:
  - **«Սպառողների իրավունքների պաշտպանությունը»՝ շատ ցածր գնահատականների տիրույթից անցել է ցածր գնահատականների տիրույթ՝ 23.0%:**
  - **«Դեղերի գների մատչելիությունը», սակայն այն մնացել է շատ ցածր գնահատականների տիրույթում՝ 11.4%:**
  - **«Առողջապահության ֆինանսական մատչելիությունը», որը նույնպես մնացել է շատ ցածր գնահատականների տիրույթում՝ 12.9%:**
- **2013-2016 թթ. ընթացքում մոնոտոն և նշանակալի նվազման միտումներ են գրանցվել հետևյալ բաղադրիչներում.**
  - **Հայաստանի պաշտպանվածությունը պատերազմի վտանգից, որը 55.4%-ց նվազել է մինչև 37.2%:**
  - **Հայաստանի պաշտպանվածությունը զանգվածային անկարգություններից, որը նվազել է 50.5%-ից մինչև 39.0%:**
- **Մնացած բաղադրիչներում էական փոփոխություններ չեն գրանցվել:**

Ենթակառուցվածքների ոլորտ

Այս ոլորտի բաղադրիչների դինամիկան 2013-2016 թթ. ընթացքում ներկայացված է Գծապատկեր 19-ում: Այս ոլորտում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

- **Աճի միտում է ունեցել**
  - **«Ինտերնետի որակը» և**
  - **«Ինքնաթիռների գների մատչելիությունը» և**
- **Կտրուկ նվազել է 2015 թ. համեմատ 2016 թ.-ին.**
  - **«միջքաղաքային ճանապարհների որակը» և**
  - **«Միջքաղաքային ավտոբուսների աշխատանքի որակը»**
- **Մնացած բաղադրիչներում էական փոփոխություններ չեն գրանցվել:**

Կառավարման ոլորտ

Այս ոլորտում բաղադրիչների դինամիկան 2013-2016 թթ. ընթացքում ներկայացված է Գծապատկեր 20-ում: Այս ոլորտում

- **Աճի միտումներ են տեղի ունեցել.**
  - **«Երկրում կարիերայի հնարավորությունների» բաղադրիչում**
  - **«Կառավարության գործունեության» բաղադրիչում**

- Նվազում է տեղի ունեցել.
  - «Քաղաքացիական ազատությունների աստիճանը»,
  - «Տեղական իշխանությունների գործունեությունը»,
  - «Մարդու իրավունքների պաշտպանվածությունը»,
  - «Դատավորների արդարության աստիճանը» բաղադրիչներում:
- Մնացած բաղադրիչներում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:



Գծապատկեր 17. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի տնտեսական ոլորտի բաղադրիչների փոփոխությունը 2013 – 2016 թթ.



Գծապատկեր 18. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի սոցիալական ոլորտի բաղադրիչների փոփոխությունը 2013 – 2016 թթ.

Գծապատկեր 19. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի ենթակառուցվածքների ոլորտի բաղադրիչների փոփոխությունը 2013 – 2016 թթ.



Գծապատկեր 20. Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի կառավարման ոլորտի բաղադրիչների փոփոխությունը 2013 – 2016 թթ.

4. Կյանքի որակի համայնքային մակարդակ

Համայնքային (միջին) մակարդակում կյանքի որակի գնահատման համար կիրառվել հետևյալ ենթակառուցվածքներից բավարարվածության գնահատականները.

Համայնքային ենթակառուցվածքներ

1. Էլեկտրամատակարարում,
2. Գազամատակարարում,
3. Խմելու ջրի մատակարարում,
4. Տնային/ֆիքսված հեռախոսակապ,
5. Բջջային հեռախոսակապ,
6. Ինտերնետի որակ,
7. Աղբահանություն,
8. Փողոցային լուսավորություն,
9. Բակի/փողոցի բարեկարգություն,
10. Ներքաղաքային տրանսպորտ (միայն քաղաքների համար),
11. Մայրուղուն կապող ճանապարհների վիճակ (միայն գյուղերի համար),
12. Գյուղամիջյան փողոցների վիճակ (միայն գյուղերի համար):

4.1. Համայնքային մակարդակում կյանքի որակի ինդեքսը և դրա դինամիկան

Գծապատկեր 21-ում ներկայացված է համայնքային մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքը Հայաստանում և սոցիալ-ժողովրդագրական խմբերում 2013-2016 թթ.:

Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ այդ տարիների ընթացքում Հայաստանում տեղի է ունեցել ենթակառուցվածքների ընդհանուր զարգացում, որն արտապատկերվել է համայնքային մակարդակում կյանքի որակի ինդեքսի ընդհանուր աճի վրա ինչպես հանրապետության մասշտաբով (Գծապատկեր 21-ի «Ընդամենը» հատվածը), այնպես էլ բնակավայրի տարբեր տիպերում: Ենթակառուցվածքներից բավարարվածությունն աճել է բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերում, այդ թվում՝ բարեկեցության, տարիքային և կրթամակարդակի խմբերում (Գծապատկեր 21, 2016 թ. բոլոր ցուցանիշները, որոնք տրված են կարմիր գույնով ունեն ամենաբարձր արժեքները):

Այսպես, հանրապետության մասշտաբով 2013 թ-ին ինդեքսի արժեքը եղել է 58.1, 2014-ին՝ 63.5, իսկ 2015-ին՝ 65.4, իսկ 2016 թ.-ին՝ 69.4:

Համայնքային մակարդակում կյանքի որակի ինդեքսի առանձնահատկություններն են.

- **Ըստ բնակավայրի տիպի՝ ինդեքսի արժեքը նշանակալիորեն ավելի ցածր է գյուղերում:**
- **Ըստ բարեկեցության խմբերի՝ ինդեքսի արժեքը համեմատաբար ավելի բարձր է բարձր բարեկեցության խմբում:**
- **Ըստ տարիքային խմբերի՝ համայնքային ենթակառուցվածքներից բավարարվածությունն աճում է տարիքի աճին համեմատ և ունի ամենաբարձր արժեքը՝ 60 և ավելի տարիքային խմբում:**
- **Ըստ կրթամակարդակի խմբերի՝ բավարարվածությունը համայնքային ենթակառուցվածքներից համեմատաբար ավելի ցածր է ցածր կրթամակարդակով խմբում:**



Գծապատկեր 21. Կյանքի որակի ինդեքսը համայնքային մակարդակում 2012-2016 թթ. սոցիալ-ժողովրդագրական խմբերում

4.2. Առանձին ենթակառուցվածքներից բավարարվածության դինամիկան 2013-2016 թթ.

Համեմատելու համար համայնքային մակարդակում 2016 թ.-ին առանձին ենթակառուցվածքներից բավարարվածության աստիճանը Երևանում, քաղաքներում և գյուղերում այդ արժեքները ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Իսկ դիտարկելու համար համայնքային առանձին ենթակառուցվածքներից բավարարվածության դինամիկան Հայաստանում, Երևանում, քաղաքներում և գյուղերում, համապատասխան ցուցանիշները 2013-2016 թթ. ներկայացված են համապատասխանաբար Գծապատկեր 22, Գծապատկեր 23, Գծապատկեր 24 և Գծապատկեր 25-ում:

Վիճակի ընդհանուր գնահատականը 2016 թ.-ին

Աղյուսակ 7-ից երևում է, որ.

- **Ընդհանուր առմամբ Հայաստանում հասարակության բավարարվածությունը համայնքային մակարդակի ենթակառուցվածքներից բավական բարձր է՝ 12 ենթակառուցվածքներից 3-ի գնահատականները գտնվում է «շատ բարձր», 5-ինը՝ «բարձր» և 4-ինը՝ «միջին» գնահատականների տիրույթում:**
- **Հայաստանում ամենաբարձր բավարարվածությունն առկա է բջջային հեռախոսակապից և խմելու ջրի մատակարարումից: Դրանցից բավարարվածության մակարդակը գտնվում է «շատ բարձր» գնահատականների տիրույթում:**
- **Հայաստանում «բարձր» գնահատականների տիրույթում են գտնվում բավարարվածությունը էլեկտրամատակարարումից, գազամատակարարումից, աղբահանությունից, փողոցային լուսավորությունից և ինտերնետի որակից:**
- **Հայաստանում «միջին» բավարարվածության տիրույթում են բավարարվածությունը տնային/ֆիքսված հեռախոսակապից, բակի/փողոցի բարեկարգվածությունից և համայնքը մայրուղուն կապող ճանապարհներից:**
- **Իսկ ամենից ցածրն է բավարարվածությունը ներքաղաքային տրանսպորտի վիճակից և գյուղամիջյան փողոցներից:**

Ենթակառուցվածք	Երևան	Քաղաք	Գյուղ	ՀՀ
01. Էլեկտրամատակարարում	79.3%	81.8%	76.1%	78.9%
02. Գազամատակարարում	78.1%	78.9%	65.7%	73.9%
03. Խմելու ջրի մատակարարում	88.0%	80.7%	75.7%	81.5%
04. Տնային/ֆիքսված հեռախոսակապ	83.8%	55.9%	23.8%	54.5%
05. Բջջային հեռախոսակապ	92.0%	95.6%	95.3%	94.2%
06. Ինտերնետի որակ	73.7%	69.0%	57.2%	66.5%
07. Աղբահանություն	83.6%	83.0%	64.7%	76.7%
08. Փողոցային լուսավորություն	80.4%	77.9%	56.4%	71.1%
09. Բակի/փողոցի բարեկարգություն	61.8%	46.2%	55.2%	55.0%
10. Ներքաղաքային տրանսպորտ	51.5%	55.0%	-	53.0%
11. Մայրուղուն կապող ճանապարհներ	-	-	59.3%	59.3%
12. Գյուղամիջյան փողոցներ	-	-	43.3%	43.3%

Աղյուսակ 7. Համայնքային ենթակառուցվածքներից բավարարվածությունը 2016 թ.

Աղյուսակ 7-ի տվյալները թույլ են տալիս կատարել համայնքային ենթակառուցվածքների համեմատությունը ըստ բնակավայրի տիպերի.

- Բոլոր այն ենթակառուցվածքներից, որոնք գնահատվել են բնակավայրի բոլոր տիպերում բավարարվածությունը համեմատաբար ավելի ցածր է գյուղերում:
- Հատկապես մեծ է այդ տարբերությունը՝
  - Տնային/ֆիքսված հեռախոսակապի, փողոցների լուսավորության, աղբահանության դեպքում:
  - Երևանում ամենացածր բավարարվածությունը ներքաղաքային տրանսպորտից և բակերի բարեկարգվածությունից է:
  - Քաղաքներում նույնպես ամենից ցածրն է բավարարվածությունը ներքաղաքային տրանսպորտից և բակերի բարեկարգվածությունից:

- Գյուղերում ամենից ցածրն է բավարարվածությունը՝ տնային ֆիքսված հեռախոսակապից և գյուղամիջյան փողոցների վիճակից:

Ենթակառուցվածքների գնահատականների դինամիկան, 2013-2016 թթ.

Գծապատկեր 22-Գծապատկեր 25-ի տվյալները ցույց են տալիս հետևյալը.

- **Ընդհանուր առմամբ Հայաստանում 2013-2016 թթ. ընթացքում բարելավում է տեղի ունեցել.**
  - **Էլեկտրամատակարարման, խմելու ջրի մատակարարման, աղբահանության, բակերի և փողոցների բարեկարգման տեսակետից:**
- **Երևանում 2013-2016 թթ. ընթացքում բարելավում է տեղի ունեցել.**
  - **Էլեկտրամատակարարման,**
  - **Գազամատակարարման,**
  - **Խմելու ջրի մատակարարման,**
  - **Աղբահանության տեսակետից:**
- **Երևանում նվազել է բավարարվածությունը.**
  - **Ֆիքսված հեռախոսակապի,**
  - **Ինտերնետի որակի որակից:**
- **Քաղաքներում 2013-2016 թթ. ընթացքում բարելավվել է.**
  - **Էլեկտրամատակարարումը,**
  - **Գազամատակարարումը (սակայն 2016 թ.-ին՝ 2015 թ.- ի համեմատ բարելավումը դադարել է),**
  - **Խմելու ջրի մատակարարումը,**
  - **Աղբահանությունը:**
- **Քաղաքներում 2016 թ.-ին նվազել է բավարարվածությունը.**
  - **Ֆիքսված հեռախոսակապից,**
  - **Ինտերնետի որակից,**
  - **Ներքաղաքային տրանսպորտի աշխատանքից:**
- **Գյուղերում 2013-2016 թթ. բարելավվել է.**
  - **Էլեկտրամատակարարումը,**
  - **Գազամատակարարումը (2016 և 2015 թթ. ցուցանիշների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ),**
  - **Խմելու ջրի մատակարարումը,**
  - **Բջջային հեռախոսակապից,**
  - **Աղբահանությունը,**
  - **Փողոցների լուսավորությունը,**
  - **Փողոցների բարեկարգվածությունը,**
- **Գյուղերում 2016 թ.-ին նվազել է բավարարվածությունը.**
  - **Ֆիքսված հեռախոսակապից,**
  - **Ինտերնետի որակից,**
  - **Ներքաղաքային տրանսպորտի վիճակից:**



Գծապատկեր 22. Համայնքային մակարդակում ընդհանուր ենթակառուցվածքներից բավարարվածության աստիճանը 2013 - 2015 թթ., Հայաստան



Գծապատկեր 23. Համայնքային մակարդակում ընդհանուր ենթակառուցվածքներից բավարարվածության աստիճանը 2013 - 2016 թթ., Երևան



Գծապատկեր 24. Համայնքային մակարդակում Ընդհանուր ենթակառուցվածքներից բավարարվածության աստիճանը 2013 - 2015 թթ., քաղաքներ



Գծապատկեր 25. Համայնքային մակարդակում ընդհանուր ենթակառուցվածքներից բավարարվածության աստիճանը 2013 - 2016 թթ., գյուղեր

5. Կյանքի որակի անձի/ընտանիքի մակարդակ

Կյանքի որակի անձի/ընտանիքի մակարդակի ինդեքսը կազմված է հետևյալ ենթաինդեքսներից և դրանց բաղադրիչներից:

1. **Տնտեսական ենթաինդեքս,** որի կազմում են հետևյալ բաղադրիչները. **մարդու** բավարարվածությունը՝
   1.1. բնակարանի վիճակից,
   1.2. տան ունեցվածքից (կահույք, կենցաղային տեխնիկա, խոհանոցային տեխնիկա),
   1.3. առկա սեփականությունից (բնակարան, հողամաս, ավտոմեքենա, ավտոտնակ),
   1.4. ներկա կենսամակարդակից, ապրելակերպից,
   1.5. ընտանիքի ֆինանսական վիճակից:
2. **Ապահովության ենթաինդեքս.** բավարարվածությունը՝
   2.1. իր և ընտանիքի անվտանգությունից,
   2.2. իր ընդհանուր հոգեվիճակից,
   2.3. իր ֆիզիկական առողջության վիճակից:
3. **Ժամանցի և հանգստի ենթաինդեքս.** բավարարվածությունը՝
   3.1. ընտանիքում ժամանակ անցկացնելու հնարավորությունից,
   3.2. տարվա ընթացքում հանգստանալու հնարավորություններից,
   3.3. ընկերների հետ ժամանակ անցկացնելու հնարավորությունից,
4. **Հեղինակության ենթաինդեքս.** բավարարվածությունը՝
   4.1. սեփական հասարակական դիրքից,
   4.2. ներկա աշխատանքից,
   4.3. ստացած կրթությունից,
5. **Ինքնաիրականացման ենթաինդեքս,** բավարարվածությունը՝
   5.1. թաղամասի կամ համայնքի հարցերի լուծմանը մասնակցելու հնարավորությունից,
   5.2. հասարակական կյանքին մասնակցությունից:
   5.3. կյանքում հասած հաջողություններից:

5.1. Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքներն ու դինամիկան

- **Հայաստանում անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսը 2014-2016 թթ. գտնվել է իր արժեքների միջակայքի համարյա ուղիղ մեջտեղում՝ 50-51 սահմաններում** (Գծապատկեր 26)**:**
- **2016 թ.-ին Այդ ինդեքսի բոլոր ենթաինդեքսները գտնվել են գնահատականների «միջին» արժեքների միջակայքում՝ [40; 60]:**
- **Ամենից բարձր արժեքներ են ունեցել ապահովության և հեղինակության բաղադրիչները՝ 59 միավոր:**
- **Ամենից ցածր արժեքներ են ունեցել բարեկեցության և ժամանցի բաղադրիչները՝ մոտ՝ 41.5 միավոր:**
- **Դրանց միջև է գտնվել Ինքնաիրականացման բաղադրիչը՝ 48.5 միավոր արժեքով:**

Անձի/ընտանիքի մակարդակում Կյանքի որակի ինդեքսի ենթաինդեքսների փոփոխությունները 2012-2016 թթ. ընթացքում շատ թույլ են արտահայտված: Դրանց փոփոխությունները, որպես կանոն,

տարեցտարի գտնվել են վիճակագրական հավաստիության սահմանին և ունեցել են տատանողական բնույթ:

- 2016 թ.-ի տեղի է ունեցել երկու վիճակագրորեն նշանակալի փոփոխություն.
  - Աճել է ապահովության բաղադրիչի գնահատականը՝ 55.8-ից մինչև 58.9,
  - Նվազել է ժամանցի բաղադրիչի գնահատականը՝ 47.6-ից մինչև 41.5:



Գծապատկեր 26. Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսը և ենթաինդեքսները, 2012 - 2015 թթ.

5.2. Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսը և ենթաինդեքսները սոցիալ-ժողովրդագրական խմբերում

Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսներն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի ներկայացված են Աղյուսակ 8-ում (2015 թ. տվյալները) և Աղյուսակ 9-ում (2016 թ. տվյալները):

Աղյուսակի տվյալների ընկալումը դյուրացնելու համար կիրառվել է վանդակների գունավորում: Յուրաքանչյուր սյունում կանաչ գույնի են ինդեքսի կամ ենթաինդեքսի երկու ամենաբարձր արժեքներ պարունակող վանդակները և կարմիր գույնի են երկու ամենափոքր արժեքներ պարունակող վանդակները:

Բնութագիր	Կատեգորիա	Ինդեքս, 2015	Ապահովություն	Բարեկեցություն	Ժամանց	Հեղինակություն	Ինքնաիրականացում
Բնակավայրի տիպ	Երևան	50.7	56.3	45.5	50.2	60.9	39.8
	Քաղաքային	49.4	56.6	42.6	47.0	59.2	41.2
	Գյուղական	49.5	54.6	41.4	45.6	59.6	46.2
Սեռ	Արական	50.8	57.7	42.7	48.6	58.6	46.2
	Իգական	49.1	54.2	43.7	46.8	61.1	39.1
Տարիք	18-29	57.4	71.2	50.6	53.2	64.1	48.0
	30-45	49.3	56.5	41.0	46.5	58.4	43.7
	46-60	45.4	47.4	39.3	44.6	56.9	38.3
	60+	47.4	45.1	43.5	47.0	62.4	38.0
Կրթություն	Միջն.	48.5	54.7	41.2	47.0	55.9	43.1
	ՄՄ և ԹԲ	47.7	52.8	41.4	45.0	59.1	40.1
	Բարձր.	54.2	60.5	48.1	51.2	67.3	43.6
Բարեկեցություն	Ցածր	44.5	49.1	36.9	43.3	55.2	37.6
	Միջին	51.8	58.5	45.8	48.5	61.8	44.1
	Բարձր	62.2	70.5	57.0	59.1	70.5	53.3
Ընդամենը		**49.9**	**55.8**	**43.2**	**47.6**	**59.9**	**42.4**

Աղյուսակ 8. Ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսը և ենթաինդեքսները սոցիալ-ժողովրդագրական խմբերում, 2016 թ.

Բնութագիր	Կատեգորիա	Ինդեքս, 2016	Ապահովություն	Բարեկեցություն	Ժամանց	Հեղինակություն	Ինքնաիրականացում
Բնակավայր	Երևան	50.2	59.1	42.6	41.9	60.5	46.9
	Քաղաք	49.7	59.4	40.7	40.1	60.1	48.2
	Գյուղ	50.6	58.1	41.4	42.2	60.9	50.5
Սեռ	Իգական	49.7	56.5	42.7	40.4	61.2	47.9
	Արական	50.8	61.5	40.4	42.8	59.8	49.3
Տարիք	18-29	60.1	75.9	52.4	52.0	66.3	53.8
	30-45	49.6	60.6	39.6	39.0	59.8	48.9
	46-60	45.1	48.9	37.2	37.5	57.0	45.2
	60+	44.4	44.3	36.2	36.7	59.4	45.2
Կրթություն	Միջ	48.9	58.4	40.2	41.1	57.0	47.6
	Մ. մաս.	47.3	53.7	39.5	38.2	57.7	47.4
	Բար.	55.5	64.6	46.4	45.5	69.7	51.3
Բարեկ.	Ցածր	43.5	52.1	32.3	35.1	55.2	42.8
	Միջին	54.9	63.2	49.0	45.5	64.0	52.7
	Բարձր	64.3	73.4	59.6	55.8	72.4	60.4
ՀՀ		50.2	58.8	41.6	41.5	60.5	48.5

Աղյուսակ 9. Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսը և ենթաինդեքսները սոցիալ-ժողովրդագրական խմբերում, 2015 թ.

Երկու աղյուսակների դիտարկումը ցույց է տալիս, որ դրանց ընդհանուր պատկերները, մասնավորապես, ինդեքսի և ենթաինդեքսների արժեքների փոխհարաբերությունները սոցիալ-ժողովրդագրական խմբերում 2015 և 2016 թթ. նման են միմյանց:

Իսկ ընդհանուր եզրակացությունները հետևյալն են.

- **Համեմատաբար ավելի բարձր են անձի/ընտանիքի մակարդակում ինդեքսի և նրա ենթաինդեքսների արժեքները՝ ամենաերիտասարդ՝ 18-29 տարեկանների և ամենաբարձր բարեկեցությամբ խմբերում:**

- **Համեմատաբար ավելի ցածր են անձի/ընտանիքի մակարդակում ինդեքսի և նրա ենթաինդեքսների արժեքները՝ ամենաավագ՝ 60 և ավելի տարեկանների և ամենացածր բարեկեցությամբ խմբերում:**
- **Ինդեքսի և ենթաինդեքսի համեմատաբար ցածր արժեքներ են առկա նաև 46-60 տարեկանների խմբում:**

5.3. Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի բաղադրիչները և դրանց փոփոխությունը, 2012-2016 թթ.

Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի բաղադրիչների արժեքները 2016 թ.-ին ներկայացված են Գծապատկեր 27-ում:



Գծապատկեր 27. Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի բաղադրիչների արժեքները, 2016 թ.: Տրված է տվյալ բաղադրիչի տեսակետից բավարարված անձանց քանակը:

Գծապատկերի տվյալներից հետևում է, որ.

- **Հայաստանում ամենաբարձրն է իր և իր ընտանիքի անվտանգությամբ բավարարվածությունը, որը գտնվում է «շատ բարձր» գնահատականների տիրույթում՝ 81.9%:**
- **Բարձր գնահատականների տիրույթում են.**
  - **հեղինակության ինդեքսի բաղադրիչները՝ բավարարվածությունը հասարակական դիրքով, ստացած կրթությամբ և աշխատանքով,**
  - **ինքնաիրականացման ենթաինդեքսի կյանքում հասած հաջողություններով բավարարվածության բաղադրիչը,**
  - **հանգստի/ժամանցի ենթաինդեքսի՝ ընտանիքում ժամանակ անցկացնելու բաղադրիչը:**
- **Շատ ցածր արժեքների տիրույթում է՝ Հանգստի/ժամանցի ենթաինդեքսի տարվա ընթացքում հանգստանալու հնարավորությունից բավարարվածությունը՝ 15.2%**
- **Ցածր գնահատականների տիրույթում է համայնքի հարցերին մասնակցության հնարավորությունից բավարարվածությունը՝ 29.4%:**
- **Ցածր և միջին գնահատականների սահմանագծի տիրույթում են (37-43%) բարեկեցության ենթաինդեքսի անշարժ գույքի, ապրելակերպի, բնակարանի և ֆինանսական վիճակի բաղադրիչներից բավարարվածությունը:**

Իսկ ինդեքսի և ենթաինդեքսի բաղադրիչների դինամիկան 2012-2016 թթ. ընթացքում ներկայացված է Աղյուսակ 10-ում:

Բավարարված են	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ						
Ձեր ընտանիքի անվտանգությամբ	79.9%	78.9%	82.4%	81.3%	81.9%	
Ձեր ֆիզիկական առողջության վիճակով	53.2%	51.6%	51.0%	51.2%	55.0%	
Ձեր ընդհանուր հոգեվիճակով	57.7%	53.3%	55.2%	54.9%	57.5%	
ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ						
Ձեր տան ունեցվածքով՝ կահույք, կենցաղային և խոհանոցային տեխնիկա	47.8%	44.1%	46.1%	44.6%	45.6%	
Ձեր ունեցվածքով՝ բնակարան, հողամաս, ավտոմեքենա, ավտոտնակ	44.6%	41.1%	41.7%	42.3%	39.6%	
Ձեր բնակարանի վիճակով	41.5%	37.7%	41.2%	41.0%	40.5%	
Ձեր ներկա կենսամակարդակով, ապրելակերպով	38.5%	34.4%	41.8%	41.9%	37.3%	
Ձեր ընտանիքի ֆինանսական վիճակով	32.4%	27.9%	51.6%	43.5%	43.5%	
ՀԱՆԳՍՏԻ/ԺԱՄԱՆՑԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ						
Ընտանիքում ժամանակ անցկացնելու հնարավորությամբ	76.3%	72.0%	76.7%	76.6%	68.1%	
Ընկերների հետ ժամանակ անցկացնելու հնարավորությամբ	53.6%	50.6%	56.8%	56.8%	45.2%	
Տարվա ընթացքում հանգստանալու հնարավորություններով	16.6%	14.2%	16.0%	16.7%	15.2%	
ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ						
Ձեր հասարակական դիրքով	68.9%	69.9%	70.8%	70.3%	72.9%	
Ձեր ստացած կրթությամբ	69.9%	66.7%	69.8%	72.1%	67.3%	
Ձեր ներկա աշխատանքով	54.3%	48.9%	57.9%	60.9%	63.2%	
ԻՆՔՆԱԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ						
Կյանքում հասած հաջողություններով	60.9%	62.2%	61.7%	64.1%	61.9%	
Ձեր՝ թաղամասի (համայնքի) հարցերի լուծմանը մասնակցելու հնարավորությամբ	23.0%	24.5%	28.7%	27.0%	29.4%	
Ձեր՝ հասարակական կյանքին մասնակցելու հնարավորությամբ	65.1%	50.5%	53.7%	57.5%	59.7%	

Աղյուսակ 10. Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի բաղադրիչներից բավարարվածությունը 2012-2016 թթ.: Տոկոս առկա պատասխաններից: «Տրենդ» սյունակում գրաֆիկների սյուների բարձրությունները համադրելի են միայն տվյալ տողի տվյալների համար:

Դիտարկման հարմարության համար աղյուսակի «տրենդ» սյունակում տրված է տվյալ տողի ցուցանիշի փոփոխության գրաֆիկական տեսքը 2012-2016 թթ. ընթացքում: Հարկ է նշել, որ «տրենդ» վանդակում սյուների բարձրության փոխհարաբերակցությունները վերաբերում են միայն տվյալ տողին: Ըստ տողերի գրաֆիկների սյուների բարձրությունները համադրելի չեն:

6. Կյանքի որակի օբյեկտիվ բնութագրերի ուսումնասիրություն

6.1. Բնակարանային պայմաններ

Բնակարանների սեփականությունը և տեսակները

Կյանքի որակի օբյեկտիվ ցուցանիշների շարքում կարևորագույներից է այն, թե արդյո՞ք ընտանիքն ունի **սեփական** բնակարան: Այն ոչ միայն մարդու հիմնարար պահանջմունքներից մեկն է, այլև Հայաստանի հասարակությունում մարդու սոցիալական կարգավիճակի ցուցանիշ է: Սեփական բնակարանի առկայությունը, մնացած հավասար պայմաններում, ավելացնում է այլ պահանջմունքների բավարարման համար ընտանիքի տնօրինվող ֆինանսական միջոցները: Մյուս կողմից, «ուրիշի» բնակարանում ապրելը ունի նաև հոգեբանական, որպես կանոն՝ ճնշող ազդեցություն:

2016 թ.-ին Հայաստանում սեփական բնակարաններում բնակվողների (այլ ոչ թե սեփական բնակարան ունեցողների) քանակը վիճակագրորեն հավաստի նվազել է (Գծապատկեր 28), ինչը վկայում է բնակչության աշխարհագրական մոբիլության աճի մասին: Այդ նվազումը տեղի է ունեցել բոլոր տիպի բնակավայրերում՝ Երևանում, մնացած քաղաքներում և գյուղերում:



Գծապատկեր 28. Սեփական բնակարաններում ապրողների քանակի փոփոխությունը, 2011-2016 թթ.

Գծապատկեր 29-ում ներկայացված է, թե 2015 և 2016 թթ. ուրիշի բնակարանում բնակվողների ո՞ր հատվածն է բնակվել վարձով և, որ հատվածը՝ առանց վարձ տալու: Տվյալները ցույց են տալիս, որ վարձով բնակվողների քանակն առավելապես աճել է Երևանում և քաղաքներում, ինչը վկայում է, որ.

- **Հայաստանում 2016 թ.-ին աճել է ներքին միգրացիան՝ գյուղերից դեպի Երևան և քաղաքներ:**



Գծապատկեր 29. Հարցվածների քանակը, ովքեր բնակվում են ուրիշի տանը՝ վարձով կամ առանց վարձ տալու, 2012-2016 թթ.

Բնակարանների ընդհանուր վիճակը

Բնակչության բնակարանների ընդհանուր վիճակը գնահատվել է հետևյալ հարցի միջոցով. «**Ինչպե՞ս կգնահատեք Ձեր բնակարանի ընդհանուր վիճակը**»: Պատասխանների տարբերակներն էին.

1. Բնակարանը պիտանի չէ բնակության համար անկախ վերանորոգումից,
2. Բնակարանն ունի կապիտալ վերանորոգման կարիք,
3. Բնակարանն ունի պարզ վերանորոգման կարիք,
4. Բնակարանը լավ կամ գերազանց վիճակում է:

Գծապատկեր 30-ում ներկայացված է Հայաստանում 2011-2016 թթ. ընթացքում բնակարանների ընդհանուր վիճակի փոփոխության միտումները: Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանում ընտանիքների բնակարանների վիճակը գտնվում է «շատ ցածր» գնահատականների տիրույթում՝ լավ կամ գերազանց վիճակում են ընտանիքների միայն 19%-ի բնակարանները:**
- **Մյուս կողմից՝ կապիտալ վերանորոգման կարիք ունի բնակչության մոտ 50%-ի բնակարանները:**

Տվյալները ցույց են տալիս, որ, եթե մինչև 2015 թ. Հայաստանում տեղի է ունեցել կապիտալ վերանորոգման կարիք ունեցող բնակարանների հարաբերական քանակի նվազում, պարզ վերանորոգման կարիք ունեցող բնակարանների հարաբերական քանակի աճ և լավ կամ գերազանց վիճակում գտնվող բնակարանների աճ, այսինքն՝ ընդհանուր առմամբ բնակարանների վիճակի բարելավում, ապա 2016 թ.-ին բարելավման միտումները դադարել են:



Գծապատկեր 30. Բնակարանի ընդհանուր վիճակի գնահատականները

Բնակարանների տվյալների մասին տվյալների ավելի մանրամասն դիտարկումն ըստ բնակավայրի տիպի (Աղյուսակ 11) ցույց է տալիս, որ

- **2016 թ.-ին Հայաստանում բնակարանների վիճակը բարելավվել է գյուղերում, որտեղ նվազել է կապիտալ վերանորոգման կարիք ունեցող բնակարանների թիվը:**
- **Քաղաքներում կապիտալ վերանորոգման կարիք ունեցող բնակարանների թիվն աճել է:**
- **Երևանում մնացել է մոտավորապես նույն մակարդակի վրա:**

Երևան	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Բնակարանը պիտանի չէ բնակության համար՝ անկախ վերանորոգումից	1.1%	1.3%	2.5%	1.1%	0.7%	
Բնակարանն ունի կապիտալ վերանորոգման կարիք	45.6%	45.1%	45.8%	40.4%	41.0%	
Բնակարանն ունի պարզ վերանորոգման կարիք	27.5%	29.9%	31.2%	31.7%	31.0%	
Բնակարանը լավ վիճակում է	22.0%	21.4%	18.6%	24.0%	24.2%	
Բնակարանը գերազանց վիճակում է	3.8%	2.3%	1.8%	2.8%	3.0%	
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	
Քաղաք	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**	**Տրենդ**
Բնակարանը պիտանի չէ բնակության համար՝ անկախ վերանորոգումից	2.4%	1.7%	0.6%	0.5%	0.2%	
Բնակարանն ունի կապիտալ վերանորոգման կարիք	47.2%	52.6%	50.5%	47.0%	49.0%	
Բնակարանն ունի պարզ վերանորոգման կարիք	30.6%	26.5%	27.1%	31.8%	30.8%	
Բնակարանը լավ վիճակում է	18.4%	17.1%	20.0%	19.2%	18.6%	
Բնակարանը գերազանց վիճակում է	1.4%	2.1%	1.8%	1.5%	1.2%	
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	
Գյուղ	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**	**Տրենդ**
Բնակարանը պիտանի չէ բնակության համար՝ անկախ վերանորոգումից	3.9%	1.6%	1.5%	0.7%	2.6%	
Բնակարանն ունի կապիտալ վերանորոգման կարիք	57.2%	63.8%	63.0%	62.9%	57.2%	
Բնակարանն ունի պարզ վերանորոգման կարիք	24.6%	25.9%	25.6%	27.0%	29.3%	
Բնակարանը լավ վիճակում է	14.0%	8.3%	9.2%	8.8%	10.1%	
Բնակարանը գերազանց վիճակում է	0.3%	0.4%	0.6%	0.6%	0.7%	
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	

Աղյուսակ 11. Բնակարանի ընդհանուր վիճակի գնահատականներն ըստ բնակավայրի տիպի, 2012-2016 թթ. («Ինչպե՞ս կգնահատեք Ձեր բնակարանի ընդհանուր վիճակը»)

Ըստ բարեկեցության խմբերի.

- **2016 թ.-ին բնակարանների կապիտալ վերանորոգման կարիք ունեցող բնակարանների թիվը նվազել է միջին և հատկապես բարձր բարեկեցությամբ ընտանիքներում (Աղյուսակ 12):**

Մյուս կողմից, եթե 2015 թ.-ին ցածր բարեկեցությամբ խմբի ընտանիքների կապիտալ վերանորոգման կարիք ունեցող բնակարանների քանակը նվազել էր 2014 թ. համեմատ, ապա 2016 թ.-ին՝ այդպիսի բնակարանների թիվը՝ 2015 թ. համեմատ աճել է:

- **2016 թ.-ին 2015 թ. համեմատ Հայաստանում վատթարացել է ցածր բարեկեցությամբ ընտանիքների բնակարանների վիճակը:**

Բարեկեցություն՝ Ցածր	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Բնակարանը պիտանի չէ բնակության համար՝ անկախ վերանորոգումից	4.1%	3.4%	2.0%	1.0%	1.7%	
Բնակարանն ունի կապիտալ վերանորոգման կարիք	70.1%	67.1%	63.0%	57.4%	60.3%	
Բնակարանն ունի պարզ վերանորոգման կարիք	19.7%	22.3%	23.5%	28.1%	27.2%	
Բնակարանը լավ վիճակում է	6.0%	7.0%	11.3%	12.7%	10.3%	
Բնակարանը գերազանց վիճակում է	0.2%	0.1%	0.2%	0.8%	0.6%	
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	
Բարեկեցություն՝ Միջին	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**	**Տրենդ**
Բնակարանը պիտանի չէ բնակության համար՝ անկախ վերանորոգումից	2.4%	0.6%	1.6%	0.6%	0.8%	
Բնակարանն ունի կապիտալ վերանորոգման կարիք	50.1%	57.4%	48.2%	45.5%	41.9%	
Բնակարանն ունի պարզ վերանորոգման կարիք	29.0%	25.5%	33.7%	31.2%	34.0%	
Բնակարանը լավ վիճակում է	17.2%	15.2%	15.0%	21.2%	21.2%	
Բնակարանը գերազանց վիճակում է	1.2%	1.4%	1.5%	1.5%	2.1%	
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	
Բարեկեցություն՝ Բարձր	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**	**Տրենդ**
Բնակարանը պիտանի չէ բնակության համար՝ անկախ վերանորոգումից	0.9%	0.5%	0.5%	0.6%	0.7%	
Բնակարանն ունի կապիտալ վերանորոգման կարիք	30.1%	37.2%	34.0%	37.0%	24.4%	
Բնակարանն ունի պարզ վերանորոգման կարիք	33.6%	34.8%	31.3%	34.3%	33.9%	
Բնակարանը լավ վիճակում է	31.2%	24.4%	29.7%	23.7%	36.2%	
Բնակարանը գերազանց վիճակում է	4.2%	3.2%	4.5%	4.4%	4.9%	
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	

Աղյուսակ 12. Բնակարանի ընդհանուր վիճակի գնահատականներն ըստ բարեկեցության, 2012-2016 թթ. («Ինչպե՞ս կգնահատեք Ձեր բնակարանի ընդհանուր վիճակը»)

Բնակարանների վերանորոգման դինամիկան

Բնակչության բարեկեցության վերաբերյալ տեղեկություններ է տալիս նաև այն, թե նրանց ո՞ր տոկոսն է նախորդ տարվա ընթացքում կատարել բնակարանի վերանորոգում (Գծապատկեր 31): Տվյալները ցույց են տալիս, որ.

- **2016 թ.-ին 2015 թ. համեմատ, իրենց բնակարանները մասնակի կամ ամբողջական վերանորոգած ընտանիքների քանակը մնացել է մոտավորապես նույն մակարդակի վրա (նվազել է 0.8%-ով):**



Գծապատկեր 31. Վերջին մեկ տարվա ընթացքում իրենց բնակարանի մասնակի կամ ամբողջական վերանորոգում կատարած բնակչությունը, 2014-2016 թթ.

- **Երևանում այդ քանակը նվազել է 4.7%-ով, քաղաքներում մոտավորապես մնացել է նույն մակարդակի վրա, իսկ գյուղերում՝ աճել է 2.7%-ով (Գծապատկեր 32):**



Գծապատկեր 32. Վերջին մեկ տարվա ընթացքում իրենց բնակարանի մասնակի կամ ամբողջական վերանորոգում կատարած բնակչությունը, 2014-2016 թթ., ըստ բնակավայրի տիպի

- **Ցածր բարեկեցությամբ խմբում իրենց բնակարանը վերանորոգած ընտանիքների քանակը նվազել է 1,6%-ով, միջին և բարձր բարեկեցությամբ խմբերում՝ աճել է 0.6%-ական տոկոսով:**



Գծապատկեր 33. Վերջին մեկ տարվա ընթացքում իրենց բնակարանի մասնակի կամ ամբողջական վերանորոգում կատարած բնակչությունը, 2014-2016 թթ.՝ ըստ բարեկեցության

Բնակարանի վիճակի առանձին բնութագրերը

Հայաստանում բնակչության բնակարանի վիճակի առանձին բնութագրիչների գնահատականները 2012-2016 թթ. ներկայացված են Գծապատկեր 34-ում: Դիտարկվել են բնակչության հետևյալ բնակարանային բնութագրերն ու խնդիրները.

- Արդյոք տան մակերեսն բավարար է ընտանիքի համար:
- Արդյոք բնակարանն ունի «եվրալուսամուտներ» (համարվել է, որ բնակարաններ ունեն «եվրալուսամուտներ», եթե այդպիսին են լուսամուտների կեսից ավելին):
- Արդյոք տարվա ցուրտ և խոնավ եղանակներին խոնավանում են տան պատերը, առաստաղը կամ հատակը:

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ.

- **2016 թ.-ին կտրուկ աճել է այն հարցվածների քանակը, ովքեր համարել են, որ տան մակերեսը բավարար է ընտանիքի անդամների համար և հասել է 72.4%:**
- **Մոնոտոն և նշանակալի աճել է «եվրալուսամուտներ» ունեցող բնակարանների քանակը՝ 2012 թ.-ին 32.8%-ից մինչև 52.6%՝ 2016 թ.-ին:**
- **Սակայն, ավելացել է նաև այն ընտանիքների քանակը, որոնք ունեն բնակարանները տաքացնելու խնդիրներ: եթե 2015 թ.-ին այդպիսիք էին հարցվածների 58.8%-ը, ապա 2016 թ.-ին՝ 61.0%-ը:**



Գծապատկեր 34. Բնակչության բնակարանի վիճակի բնութագրերը, 2012-2016 թթ.

Ըստ բնակավայրի տիպերի բնակարանային առանձին պայմաններն ունեն հետևյալ առանձնահատկությունները (Աղյուսակ 13).

- **Տան մակերեսը բավարար է ընտանիքի անդամների համար առավել հատկանշական է գյուղերի համար՝ 81.1%, երկրորդ տեղում են քաղաքները՝ 71.6% և երրորդ տեղում՝ Երևանը՝ 64.6%:**
- **«Եվրալուսամուտներ» առավելապես տեղադրված են Երևանում՝ 61.5%, հետո գյուղերում՝ 48.0% և քաղաքներում՝ 47.1%:**
- **Խոնավությունը ցուրտ եղանակին առավել տարածված է գյուղերում՝ 75.4%, հետո Երևանում՝ 53.9% և քաղաքներում՝ 52.0%:**

Տան մակերեսն բավարար է ընտանիքի համար	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Երևան	57.5%	56.8%	58.3%	59.0%	64.6%	
Քաղաք	64.5%	63.2%	65.3%	64.4%	71.6%	
Գյուղ	73.8%	77.0%	76.5%	73.8%	81.1%	
Ունեն «եվրալուսամուտներ»	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**	**Տրենդ**
Երևան	43.1%	49.9%	48.1%	57.5%	61.5%	
Քաղաք	29.1%	37.8%	43.0%	45.6%	47.1%	
Գյուղ	25.5%	34.5%	42.2%	44.5%	48.0%	
Տարվա ցուրտ և խոնավ եղանակներին տանը խոնավանում են պատերը, առաստաղը կամ հատակը	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**	**Տրենդ**
Երևան	45.2%	56.4%	46.7%	50.6%	53.9%	
Քաղաք	50.4%	58.1%	56.0%	50.7%	52.0%	
Գյուղ	67.1%	73.4%	73.2%	74.6%	75.4%	

Աղյուսակ 13. Բնակարանային խնդիրների տարածվածությունը տարբեր տիպի բնակավայրերում, 2012 – 2015 թթ.

Իսկ **ըստ բարեկեցության** (Աղյուսակ 14), ինչպես և սպասելի էր.

- Բոլոր դիտարկված բնութագրերն ավելի բարենպաստ են բարձր բարեկեցությամբ ընտանիքների համար, պակաս բարենպաստ՝ միջին բարեկեցությամբ և ամենից վատ վիճակում՝ ցածր բարեկեցությամբ ընտանիքների համար:

Տան մակերեսն բավարար է ընտանիքի համար	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Ցածր	57.9%	57.2%	61.4%	61.5%	69.2%	
Միջին	65.3%	63.5%	69.3%	67.2%	75.8%	
Բարձր	72.6%	76.8%	75.3%	75.3%	77.0%	
Ունեն «եվրալուսամուտներ»	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**	**Տրենդ**
Ցածր	15.4%	23.3%	36.2%	43.1%	41.0%	
Միջին	34.1%	40.7%	49.5%	54.3%	61.1%	
Բարձր	48.9%	58.8%	59.2%	59.2%	76.3%	
Տարվա ցուրտ և խոնավ եղանակներին տանը խոնավանում են պատերը, առաստաղը կամ հատակը	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**	**Տրենդ**
Ցածր	66.1%	70.3%	65.6%	65.0%	69.0%	
Ցածր	55.9%	64.1%	58.4%	57.6%	56.5%	
Բարձր	41.1%	54.3%	38.7%	42.4%	42.2%	

Աղյուսակ 14. Բնակարանային խնդիրների տարածվածությունը բարեկեցության խմբերում, 2012 – 2016 թթ.

6.2. Ընտանիքների տնտեսական վիճակը

Կենցաղային գույք և տեխնիկա

Աղյուսակ 15-ում ներկայացված է կենցաղային գույքի մի քանի տեսակների առկայությունը Հայաստանի ընտանիքներում 2012-2016 թթ. ընթացքում, իսկ Աղյուսակ 16-ում այն ընտանիքների քանակը, որոնք տվյալ գույքը գնել են դիտարկվող տարվա ընթացքում:

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **2016 թ.-ին կենցաղային գույքի դիտարկված տեսակներն ունեցող ընտանիքների քանակի աճը 2015 թ. համեմատ դանդաղել է:**

Կենցաղային գույքի տեսակ	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Հարթ (LCD) էկրանով հեռուստացույց	24.1%	34.8%	39.6%	51.5%	53.8%	
Ջեռուցման համակարգ՝ (օրինակ Baxi)	23.9%	25.3%	26.0%	31.6%	31.0%	
Օդորակիչ/կոնդիցիոներ	5.6%	6.2%	6.2%	7.3%	7.9%	
Նոթբուք, նետբուք	24.4%	32.4%	33.9%	33.8%	34.1%	
Համակարգիչ	41.8%	49.8%	49.8%	51.3%	47.8%	
Պլանշետ, iPad, GALAXY	5.0%	12.6%	17.2%	22.0%	23.1%	

Աղյուսակ 15. SS քանակը որոնք ունեն գույքի տեսակը, 2012-2016 թթ.: «Ունեն»՝ հաշվարկված է բոլոր հարցվածների քանակից

Կենցաղային գույքի տեսակ	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Հարթ (LCD) էկրանով հեռուստացույց	7.7%	12.3%	9.8%	10.9%	10.8%	
Ջեռուցման համակարգ՝ (օրինակ Baxi)	2.6%	2.3%	2.6%	2.3%	3.0%	
Օդորակիչ/կոնդիցիոներ	1.1%	0.9%	0.6%	0.7%	1.1%	
Նոթբուք, նետբուք	8.1%	8.1%	6.3%	3.9%	2.4%	
Համակարգիչ	7.6%	9.2%	4.4%	2.5%	1.5%	
Պլանշետ, iPad, GALAXY	3.1%	8.0%	8.8%	6.3%	4.8%	

Աղյուսակ 16. SS քանակը, ովքեր գնել են գույքը վերջին 1 տարվա ընթացքում, 2012-2016 թթ., հաշվարկված է բոլոր հարցվածների քանակից

Անշարժ և շարժական գույք

Ընտանիքների անշարժ և շարժական գույքի առկայությունը Հայաստանում 2011-2016 թթ. ներկայացված է Աղյուսակ 17-ում, իսկ 2016 թ.-ին՝ բարեկեցության խմբերում և բնակավայրերի տիպերում՝ Աղյուսակ 18-ում:

- 2016 թ.-ին աճել է մարդատար և բեռնատար ավտոմեքենա ունեցող ընտանիքների քանակը:
- Աճել է հող, այգի և անասուններ ունեցող ընտանիքների թիվը, սակայն նվազել է գյուղատնտեսական տեխնիկա ունեցող ընտանիքների թիվը:
- Անշարժ և շարժական գույքի առկայությունն առավել ցայտուն է արտահայտվել բարեկեցության տարբեր խմբերում:
- Անշարժ և շարժական գույքի առկայությունն ավելի բարձր է գյուղական ընտանիքներում և ոչ միայն այն պատճառով, որ հետազոտությամբ ուսումնասիրված գույքի ցանկում առկա են յուրահատուկ գյուղատնտեսական գույքի տեսակներ: Այստեղ հարաբերականորեն ավելի մեծ թիվ են կազմում ավտոտնակ, մարդատար և բեռնատար ավտոմեքենա, արտադրական կամ առևտրային տարածք ունեցող ընտանիքները, իսկ արտադրական տարածքի տեսակետից համարյա հավասար են Երևանին:
- Գյուղերում ավտոմեքենա ունի ընտանիքների՝ 54.6%, Երևանում՝ 43.3%, քաղաքներում՝ 33.7%:
- Գյուղերում բեռնատար ավտոմեքենա ունի ընտանիքների 13.3%, ինչը նշանակալիորեն գերազանցում են Երևանի և քաղաքների ցուցանիշներին, որոնք համապատասխանաբար հավասար են՝ 2.7% և 2.8%:

Անշարժ և շարժական գույք	2011	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Ավտոտնակ	32.6%	31.3%	31.4%	34.0%	31.5%	29.7%	
Ամառանոց	5.2%	4.7%	7.2%	8.2%	6.6%	6.0%	
Գյուղատնտեսական հող, այգի, խոտհարք (2010-2012թթ.՝ հողատարածք)	45.3%	48.4%	33.3%	32.8%	29.7%	35.4%	
Մարդատար ավտոմեքենա	35.8%	37.2%	38.2%	41.2%	41.2%	44.6%	
Բեռնատար ավտոմեքենա	5.7%	6.2%	5.3%	5.2%	5.9%	6.5%	
Գյուղատնտեսական տեխնիկա՝ կոմբայն, տրակտոր (միայն գյուղերում)	-	5.5%	5.8%	7.6%	7.2%	3.3%	
Արտադրական տեխնիկա՝ հաստոցներ, մեքենա-սարքավորումներ	2.0%	2.7%	2.1%	1.6%	1.8%	1.2%	
Արտադրական կամ առևտրային տարածք/պահեստ	2.6%	3.0%	3.0%	2.6%	2.4%	2.2%	
Անասուններ՝ կով ոչխար/խոզ/ ճագար (միայն գյուղերում)	-	53.8%	48.3%	50.6%	48.5%	52.9%	

*** - 2011թ. համարվել էր, որ գյուղացին զբաղվում է անասնապահությամբ, եթե նա ունի 2 կամ ավելի կով, 3 կամ ավելի խոզ, 5 կամ ավելի ոչխար կամ դրանց համարժեքը:**
2012 - 2015 թթ. գնահատվել է տնային կենդանիների առկայությունը:

Աղյուսակ 17. Անշարժ և շարժական գույքի առկայությունը, 2011-2016 թթ.

Անշարժ և շարժական գույք	Բարեկ.				Բնակավայր			
	Ցածր	Միջին	Բարձր	Գրաֆիկ	Երևան	Քաղաք	Գյուղ	Գրաֆիկ
Ավտոտնակ	16.5%	40.0%	55.0%		23.5%	23.5%	40.8%	
Ամառանոց	2.0%	6.7%	18.3%		6.3%	5.5%	0.0%	
Գյուղատնտեսական հող, այգի, խոտհարք (2010-2012թթ.՝ հողատարածք)	26.2%	44.4%	49.8%		12.0%	16.3%	74.3%	
Մարդատար ավտոմեքենա	26.1%	58.4%	81.6%		43.3%	33.7%	54.6%	
Բեռնատար ավտոմեքենա	2.4%	9.3%	15.5%		2.7%	2.8%	13.3%	
Գյուղատնտեսական տեխնիկա՝ կոմբայն, տրակտոր (միայն գյուղերում)	0.8%	4.9%	8.4%		0.3%	0.7%	8.3%	
Արտադրական տեխնիկա՝ հաստոցներ, մեքենա-սարքավորումներ	0.1%	1.4%	4.5%		1.9%	0.0%	1.4%	
Արտադրական կամ առևտրային տարածք/պահեստ	0.1%	1.9%	10.0%		2.1%	1.9%	2.5%	
Անասուններ՝ կով ոչխար/խոզ/ ճագար (միայն գյուղերում)	43.5%	61.7%	66.0%		-	-	52.7%	

Աղյուսակ 18. Սեփականության առկայությունն ըստ բարեկեցության և բնակավայրի տիպի, 2016 թթ.

Սննդամթերք

Բնակչության համար սննդամթերքի մատչելիության գնահատումը կատարվել է հետևյալ հարցի միջոցով. «**Արդյո՞ք կարողանում եք Ձեր ընտանիքի համար ձեռք բերել անհրաժեշտ չափով [սննդամթերքի տեսակը]**»: Պատասխանների տարբերակներն էին. 1. Միանշանակ ոչ, 2. Ավելի շուտ ոչ, 3. Ավելի շուտ այո, 4. Միանշանակ այո, 5. Չենք օգտագործում ֆինանսական անմատչելիության պատճառով, 6. Չենք օգատգործում այլ պատճառներով, 7. Օգտագործում ենք, բայց չենք գնում:

Սննդամթերքի ֆինանսական/ֆիզիկական մատչելիությունը

Գծապատկեր 35-ում ներկայացված է 2016 թ.-ին Հայաստանի բնակչության կողմից օգտագործվող սննդամթերքի այն հիմնական տեսակների ֆիզիկական/ֆինանսական մատչելիությունը, որոնք

անհրաժեշտ են բալանսավորված սննդակարգի ապահովման համար, իսկ մատչելիության փոփոխության միտումները 2012-2016 թթ. Աղյուսակ 19-ում:

Որպես սննդամթերքի մատչելիության ցուցանիշ է սահմանվել այն ընտանիքների քանակը, որոնք տվյալ սննդամթերքի վերաբերյալ. «**Արդյո՞ք կարողանում եք Ձեր ընտանիքի համար ձեռք բերել անհրաժեշտ չափով [սննդամթերքի տեսակը]**» հարցին պատասխանել են «Միանշանակ այո», «Ավելի շուտ այո», կամ՝ «օգտագործում ենք, սակայն չենք գնում»:

- **Բնական է, որպեսզի ժամանակակից երկրում հիմնական սննդամթերքի ֆինանսական/ ֆիզիկական մատչելիության նպատակային շեմն ընդունվի 100%-ը:**

Այսինքն՝ հիմնական սննդամթերքը անհրաժեշտ չափով պետք է մատչելի լինի ամբողջ բնակչությանը: Այդ պատճառով սննդամթերքի մատչելիության ընդհանուր գնահատման համար **չեն կիրառվել** էջ 5-ում սահմանված շեմային արժեքները:

- **Մատչելիության տեսակետից Հայաստանում առավել խնդրահարույց է ձկան/ ձկնեղենի (49.0%) և մսի/մսամթերքի (59.4%) մատչելիությունը:**
- **Ամբողջ Հայաստանի մասշտաբով 2016 թ.-ին նվազել է մսի/մսամթերքի, մրգերի և բանջարեղենի, ֆինանսական/ֆիզիկական մատչելիությունը**
- **Մյուս կողմից՝ 2016 թ.-ին աճել է ձկան/ձկնեղենի, կաթի և կաթնամթերքի, ձվի և ընդեղենի մատչելիությունը:**



Գծապատկեր 35. Սննդամթերքի մատչելիությունը Հայաստանում, 2016 թ.: Այն անձանց քանակը ում համար տվյալ սննդամթերքի տեսակը կամ՝ ֆինանսապես միանշանակ մատչելի է, կամ՝ ավելի շուտ մատչելի է, կամ՝ չեն գնում բայց օգտագործում են

Սննդամթերք	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Միս, թռչնամիս	66.0%	68.1%	61.4%	61.5%	59.4%	
Ձուկ/ձկնեղեն	53.6%	49.7%	43.5%	47.7%	49.0%	
Միրգ, բանջարեղեն	85.4%	82.2%	80.7%	83.9%	79.2%	
Կաթ, կաթնամթերք	79.1%	76.9%	75.1%	74.3%	77.9%	
Ձու	88.5%	85.6%	81.9%	82.4%	86.6%	
Ընդեղեն՝ լոբի, սիսեռ և այլն	83.2%	82.1%	79.1%	78.4%	81.6%	

Աղյուսակ 19. Սննդամթերքի մատչելիությունը Հայաստանում 2012-2016 թթ.: Այն անձանց քանակը ում համար տվյալ սննդամթերքի տեսակը կամ՝ ֆինանսապես միանշանակ մատչելի է, կամ՝ ավելի շուտ մատչելի է, կամ՝ չեն գնում բայց օգտագործում են

Սննդամթերքի ֆինանսական/ֆիզիկական մատչելիությունը 2016 թ.-ին ըստ բարեկեցության խմբերի ներկայացված է Գծապատկեր 36-ում, իսկ փոփոխության միտումները 2012-2016 թթ. ընթացքում՝ Աղյուսակ 20-ում: Սննդամթերքի մատչելիությունն ըստ բնակավայրի տիպի 2016 թ.-ին ներկայացված է Գծապատկեր 37-ում, իսկ դրա փոփոխության միտումները՝ Աղյուսակ 21-ում:



Գծապատկեր 36. Սննդամթերքի մատչելիությունն ըստ բարեկեցության խմբերի, 2016 թթ.: Այն անձանց քանակը ում համար տվյալ սննդամթերքի տեսակը կամ՝ ֆինանսապես միանշանակ մատչելի է, կամ՝ ավելի շուտ մատչելի է, կամ՝ չեն գնում բայց օգտագործում են

Սննդամթերք	Բարեկե-ցություն	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Միս, թռչնամիս	Ցածր	44.2%	51.0%	41.3%	43.7%	38.9%	
Միս, թռչնամիս	Միջին	69.7%	68.3%	73.3%	71.6%	78.5%	
Միս, թռչնամիս	Բարձր	84.2%	85.1%	95.7%	95.0%	92.2%	
Ձուկ/ձկնեղեն	Ցածր	34.3%	33.1%	23.6%	29.7%	29.2%	
Ձուկ/ձկնեղեն	Միջին	53.8%	48.7%	49.0%	54.4%	63.6%	
Ձուկ/ձկնեղեն	Բարձր	72.9%	67.5%	87.8%	88.2%	88.7%	
Միրգ, բանջարեղեն	Ցածր	74.9%	70.7%	67.4%	71.7%	66.5%	
Միրգ, բանջարեղեն	Միջին	87.1%	82.3%	90.8%	94.2%	91.7%	
Միրգ, բանջարեղեն	Բարձր	94.1%	93.5%	99.5%	100.0%	97.7%	
Կաթ, կաթնամթերք	Ցածր	63.8%	60.9%	57.1%	58.2%	64.6%	
Կաթ, կաթնամթերք	Միջին	82.9%	78.3%	90.3%	87.4%	91.2%	
Կաթ, կաթնամթերք	Բարձր	90.8%	91.6%	98.2%	96.8%	97.7%	
Ձու	Ցածր	78.9%	75.2%	68.4%	70.2%	78.1%	
Ձու	Միջին	90.8%	87.9%	93.3%	92.4%	95.2%	
Ձու	Բարձր	95.8%	93.8%	99.2%	99.1%	98.7%	
Ընդեղեն	Ցածր	71.3%	71.3%	67.1%	66.8%	71.1%	
Ընդեղեն	Միջին	87.2%	84.0%	87.8%	86.6%	92.3%	
Ընդեղեն	Բարձր	91.1%	91.1%	97.4%	97.3%	96.8%	

Աղյուսակ 20. Սննդամթերքի մատչելիությունն ըստ բարեկեցության խմբերի, 2012-2016 թթ.: Այն անձանց քանակը ում համար տվյալ սննդամթերքի տեսակը կամ՝ ֆինանսապես միանշանակ մատչելի է, կամ՝ ավելի շուտ մատչելի է, կամ՝ չեն գնում բայց օգտագործում են



Գծապատկեր 37. Սննդամթերքի մատչելիությունն ըստ բնակավայրի տիպի, 2016 թթ.: Այն անձանց քանակը ում համար տվյալ սննդամթերքի տեսակը կամ՝ ֆինանսապես միանշանակ մատչելի է, կամ՝ ավելի շուտ մատչելի է, կամ՝ չեն գնում բայց օգտագործում են

Սննդամթերք	Բնակավայր	2012	2013	2014	2015	20.16	Տրենդ
Միս, թռչնամիս	Երևան	69.2%	72.9%	63.4%	66.0%	65.1%	
Միս, թռչնամիս	Քաղաքներ	65.5%	62.7%	60.3%	61.2%	52.0%	
Միս, թռչնամիս	Գյուղեր	63.2%	67.8%	60.2%	57.1%	59.5%	
Ձուկ/ձկնեղեն	Երևան	57.9%	54.7%	45.3%	55.1%	56.8%	
Ձուկ/ձկնեղեն	Քաղաքներ	52.4%	49.3%	42.5%	46.2%	43.6%	
Ձուկ/ձկնեղեն	Գյուղեր	50.2%	45.1%	42.3%	41.1%	45.5%	
Միրգ, բանջարեղեն	Երևան	87.0%	84.7%	79.3%	85.7%	83.2%	
Միրգ, բանջարեղեն	Քաղաքներ	85.4%	78.0%	80.0%	83.3%	75.6%	
Միրգ, բանջարեղեն	Գյուղեր	83.7%	83.0%	82.9%	82.4%	78.0%	
Կաթ, կաթնամթերք	Երևան	80.2%	77.7%	72.9%	73.2%	79.3%	
Կաթ, կաթնամթերք	Քաղաքներ	75.3%	70.8%	72.7%	72.2%	72.8%	
Կաթ, կաթնամթերք	Գյուղեր	81.4%	81.1%	79.7%	77.3%	80.6%	
Ձու	Երևան	90.8%	86.7%	82.4%	84.3%	90.1%	
Ձու	Քաղաքներ	87.7%	82.8%	79.0%	82.5%	84.9%	
Ձու	Գյուղեր	86.7%	86.8%	83.9%	80.2%	84.4%	
Ընդեղեն	Երևան	83.7%	84.0%	78.4%	76.1%	82.9%	
Ընդեղեն	Քաղաքներ	81.7%	78.0%	77.3%	78.5%	79.0%	
Ընդեղեն	Գյուղեր	84.0%	83.6%	81.6%	80.9%	82.4%	

Աղյուսակ 21. Սննդամթերքի մատչելիությունը: Այն անձանց քանակը ում համար տվյալ սննդամթերքի տեսակը կամ՝ ֆինանսապես միանշանակ մատչելի է, կամ՝ ավելի շուտ մատչելի է, կամ՝ չեն գնում բայց օգտագործում են, 2012-2016 թթ.



Գծապատկեր 38. Սննդամթերքի մատչելիության դինամիկան ցածր բարեկեցության խմբում 2012-2016 թթ.: Այն անձանց քանակը ում համար տվյալ սննդամթերքի տեսակը կամ՝ ֆինանսապես միանշանակ մատչելի է, կամ՝ ավելի շուտ մատչելի է, կամ՝ չեն գնում բայց օգտագործում են

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Սննդամթերքի մատչելիության տարբերություններն ըստ բարեկեցության խմբերի շատ ավելի մեծ են, քան ըստ բնակավայրի տիպերի:**
- **Ըստ բարեկեցության խմբերի մատչելիության ամենամեծ տարբերությունն առկա է մսի/մսամթերքի և ձկան/ձկնամթերքի դեպքում:**
- **Ցածր և միջին բարեկեցության խմբերի միջև սննդամթերքի մատչելիության տարբերություններն ավելի փոքր են, քան միջին և բարձր բարեկեցության խմբերի միջև:**
- **Ցածր բարեկեցության խմբի համար 2014-2016 թթ. ընթացքում աճ ընդհանուր միտում են ունեցել ձվի, ընդեղենի, կաթ ու կաթնամթերքի մատչելիությունը, 2012-2016 թթ. ընթացքում ընդհանուր նվազման միտում է ունեցել մսի/մսամթերքի, ձկան/ձկնեղենի, մրգի և բանջարեղենի մատչելիությունը:**

Բավարարվածությունը սննդամթերքի որակից

Բնակչության բավարարվածությունը սննդամթերքի որակից գնահատվել է **«Որքանո՞վ եք բավարարված Ձեր կողմից օգտագործվող [սննդամթերք]-ի որակից»** հարցի միջոցով: Պատասխանների տարբերակներն էին. 1. Ընդհանրապես բավարարված չեք, 2. Ավելի շուտ բավարարված չեք, 3. Ավելի շուտ բավարարված եք, 4. Լիովին բավարարված եք:

2011-2016 թթ. ընթացքում տրված է Աղյուսակ 22-ում, իսկ Աղյուսակ 23-ում տրված է սննդամթերքի որակից բավարարվածությունն ըստ բարեկեցության խմբերի և բնակավայրի տիպի:

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանում բնակչության բավարարվածությունը սննդամթերքի որակից ընդհանուր առմամբ շատ բարձր է՝ կաթի, ձվի և ընդեղենի որակից բավարարված է բնակչության 90 և տոկոսը: Ձկնեղենի և միրգ/բանջարեղենի որակից՝ մոտ 90%-ը, իսկ մսի/մսամթերքի որակից՝ 83%-ը:**
- **Չնայած ցածր բարեկեցությամբ խմբում մթերքի որակից բավարարվածությունն ավելի ցածր է (նրանք գնում են ավելի ցածր որակի մթերք), սակայն տարբերությունը մթերքի տարբեր տեսակների համար չի գերազանցում 5%-ը:**
- **Սննդամթերքի որակից բավարարվածությունը 2011-2016 թթ. ընթացքում ունեցել է հիմնականում աճի միտում՝ չնայած 2016 թ.-ին 2015 թ. համեմատ այդ ցուցանիշները փոքր ինչ նվազել են:**
- **Հարկ է ուշադրություն դարձնել մրգի և բանջարեղենի որակի կտրուկ նվազմանը, որը հավանաբար կապված է արտահանման ծավալների աճի հետ, քանի որ, որպես կանոն արտահանվում է բարձր որակի միրգն ու բանջարեղենը:**
- **Սննդամթերքի որակից բավարարվածության տարբերությունները բարեկեցության խմբերում առավել ցայտուն են արտահայտված մրգերի ու բանջարեղենի դեպքում:**
- **Ըստ բնակավայրի տիպի սննդամթերքի որակից բավարարվածությունն ավելի բարձր է գյուղերում, որոնց զիջում են քաղաքները, իսկ ամենից ցածր է Երևանում: Դա պայմանավորված է նրանով, որ մի կողմից գյուղերում ընտանիքների նշանակալի մասն օգտագործում է իր արտադրած ավելի բարձր որակի սննդամթերքը, իսկ մյուս կողմից, չի բացառվում, որ Երևանում բնակչությունն ավելի բծախնդիր է, իսկ սննդամթերքի արտադրությունն ունի արտադրանքի որակի բարձրացման ռեզերվ:**

Սննդամթերք	2011	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Միս, թռչնամիս	70.3%	77.1%	81.3%	78.7%	79.3%	82.7%	
Ձուկ/ձկնեղեն (պահածո)	78.1%	90.0%	88.9%	87.8%	89.5%	88.9%	
Միրգ, բանջարեղեն	90.5%	94.9%	93.7%	92.9%	94.7%	89.0%	
Կաթ, կաթնամթերք	82.2%	89.1%	90.5%	88.5%	91.7%	90.7%	
Ձու	84.5%	89.6%	88.2%	87.5%	92.0%	90.1%	
Ընդեղեն՝ լոբի, սիսեռ և այլն	91.0%	97.0%	96.4%	94.7%	96.1%	92.7%	

Աղյուսակ 22. Բավարարվածությունը սննդամթերքի որակից, 2010-2016 թթ.

Սննդամթերք	Բարեկեցություն				Բնակավայր			
	Ցածր	Միջին	Բարձր	Գրաֆիկ	Երևան	Քաղաք	Գյուղ	Գրաֆիկ
Միս, թռչնամիս	82.0%	82.3%	84.5%		76.5%	85.0%	88.0%	
Ձուկ/ձկնեղեն (պահածո)	88.1%	88.8%	89.9%		87.9%	88.5%	90.4%	
Միրգ, բանջարեղեն	86.0%	90.6%	93.3%		88.9%	90.7%	87.9%	
Կաթ, կաթնամթերք	88.9%	92.1%	92.3%		86.5%	91.2%	94.8%	
Ձու	88.0%	91.4%	93.4%		88.1%	89.6%	92.8%	
Ընդեղեն՝ լոբի, սիսեռ և այլն	91.0%	93.9%	94.6%		93.2%	90.4%	93.9%	

Աղյուսակ 23. Բավարարվածությունը սննդամթերքի որակից ըստ բարեկեցության և բնակավայրի տիպի, 2016 թ.

Բնակչության եկամտի աղբյուրները

Աղյուսակ 24-ում ներկայացված է, Հայաստանի ընտանիքներում տարբեր տիպի եկամտի աղբյուրների տարածվածությունը (առկայությունը) 2011-2016 թթ.: Նույն տվյալներն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության խմբերի տրված են Աղյուսակ 25-ում:

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանի ընտանիքների եկամտի աղբյուրների կառուցվածքը բավական կայուն է:**
- **Եկամտի աղբյուրներից առավելապես տարածված են աշխատավարձը (այդպիսի եկամտի աղբյուր ունեն ընտանիքների 56.4%-ը:**
  - **Սակայն այդ եկամտի աղբյուր տարածվածությունը 2012-2016 թթ. ընթացքում նվազել է 61.9%-ից մինչև 56.4% կամ՝ 5.5%-ով:**
- Եկամտի երկրորդ առավել տարածված տեսակն է **պետական տրանսֆերտները**՝ տարիքային թոշակ ստացող է առկա ընտանիքների 38.1%-ում, հաշմանդամության թոշակ՝ 19.6%-ում, իսկ ընտանեկան նպաստ են ստացել ընտանիքների 15.7%-ը: Այլ թոշակ կամ նպաստ են ստանում ընտանիքների 4.8%-ը:
- Տարածվածությամբ երրորդ տեղում են եկամուտներն **ինքնազբաղվածությունից**, այդ թվում՝ **գյուղմթերք** են վաճառում կամ իրենց արտադրած մթերքն օգտագործում են տանը ընտանիքների 26.1%-ը, իսկ **ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածությունից** եկամուտ ունեն ընտանիքների 20.6%-ը:
  - **Գյուղմթերքի վաճառքից ստացվող եկամուտը 2013-2016 թթ. ընթացքում նվազել է 33.2%-ից մինչև 26.1% կամ՝ 7.1%-ով:**
- Եկամտի կարևոր աղբյուր են **մասնավոր տրանսֆերտները,** այդ թվում,

- **արտագնա աշխատողի** ուղարկած դրամ ստանում են ընտանիքների 14.2%-ը, **արտասահմանում բնակվող հարազատից/բարեկամից՝** 8.2%-ը,
- **Հայաստանում բնակվող հարազատից/բարեկամից՝** 3.8%-ը:

- **Արտագնա աշխատողի կողմից ուղարկված դրամ ստացող ընտանիքների քանակը 2016 թ.-ին՝ 2015 թ. համեմատ աճել է 1.3%-ով:**
- **Բիզնեսից եկամուտ** ունեն ընտանիքների 6.4%-ը:
  - **Բիզնեսից եկամուտ ունեցող ընտանիքների քանակը 2013-2016 թթ. ունեցել նվազման միտում և նվազել է 8.5%-ից մինչև 6.4% կամ՝ 2.1%-ով:**
- **Եկամուտներ վարձով տրված բնակարաններից կամ տարածքներից** ունեն ընտանիքների 2.1%-ը, իսկ **եկամուտներ արժեթղթերից՝** 0.7%-ը:

Ըստ բարեկեցության խմբերի եկամտի աղբյուրների տարածվածություն ունի հետևյալ առանձնահատկությունները (Աղյուսակ 25):

- **Բարձր բարեկեցության խմբում ցածր և միջին բարեկեցությամբ խմբերի համեմատ նշանակալիորեն ավելի տարածված են բոլոր տիպի եկամտի աղբյուրները՝ բացի պետական տրանսֆերտներից:**
- **Այնուամենայնիվ պետական տրանսֆերտների համակարգն ունի թիրախավորման բարձրացման կարիք: Այսպես՝ բարձր բարեկեցությամբ խմբում ընտանիքների 6.5%-ը ստանում է ընտանեկան նպաստ:**

Ըստ բնակավայրի տիպի եկամտի աղբյուրների առանձնահատկություններն են (Աղյուսակ 25).

- Գյուղական ընտանիքների միայն 63.5%-ն է եկամուտ ստանում գյուղմթերքի վաճառքից կամ տանն օգտագործելուց: Մյուս կողմից՝նրանց 37.6%-ն ունի աշխատավարձ:
- Գյուղերում արտագնա աշխատողների ուղարկած դրամ ստացող ընտանիքների քանակը (19.2%) նշանակալիորեն գերազանցում է քաղաքներում (14.1%) և հատկապես Երևանում (9.5%) այդպիսի ընտանիքների քանակից:
- Երևանում նշանակալիորեն ավելի մեծ թիվ են կազմում արտասահմանում բնակվող հարազատներից/բարեկամներից դրամ ստացող ընտանիքները (12.1%), քան քաղաքներում (8.4%) և գյուղերում (4.0%):
- Երևանում նշանակալիորեն ավելի մեծ թիվ են կազմում Հայաստանում բնակվող հարազատներից/բարեկամներից դրամ ստացող ընտանիքները (6.3%), քան քաղաքներում (3.7%) և գյուղերում (1.4%):
- Գյուղերում ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածությունից եկամուտ ստացող ընտանիքների հարաբերական քանակն ավելի բարձր է (22.8%), քան Երևանում (19.5%) և քաղաքներում (17.9%):

Եկամտի աղբյուր	2011	2012	2013	2014	2015	2016
1. Աշխատավարձ	59.0%	61.9%	60.4%	59.5%	59.2%	56.4%
2. Եկամուտ բիզնեսից	7.3%	7.4%	8.5%	7.0%	7.4%	6.4%
3. Եկամուտներ արհեստից/ ինքնազբաղվածությունից *	6.2%	10.6%	22.1%	19.9%	18.8%	20.2%
4. Գյուղմթերքի վաճառք կամ օգտագործում ընտանիքում **	16.3%	16.2%	33.2%	32.5%	28.8%	26.1%
5. Ընտանեկան նպաստ	-	12.0%	12.9%	12.6%	13.0%	15.7%
6. Տարիքային թոշակ ***	-	50.2%	36.0%	38.5%	39.6%	38.1%
7. Հաշմանդամության թոշակ	-	-	20.0%	20.2%	20.2%	19.6%
8. Այլ թոշակ կամ նպաստ	-	1.4%	6.0%	5.6%	5.7%	4.8%
9. Արտագնա աշխատողի կողմից ուղարկած դրամ	-	-	13.7%	16.0%	12.9%	14.2%
10. Արտասահմանում ապրող ընտանիքի անդամի կամ բարեկամի ուղարկած դրամ	-	-	10.0%	11.1%	7.6%	8.2%
11. Հայաստանում բնակվող հարազատի/բարեկամի դրամական օգնություն	-	-	5.2%	4.2%	3.3%	3.8%
12. Եկամուտ վարձով տրված գույքից/բնակարանից	2.3%	1.9%	2.1%	2.0%	1.6%	2.1%
13. Տոկոսներ ավանդներից / արժեթղթերից / բաժնետոմսերից	1.8%	0.9%	1.2%	0.9%	1.1%	0.7%
* 2011 և 2012թթ. հաշվառվել է միայն «եկամուտ արհեստագործությունից»						
** 2011 և 2012թթ. հաշվառվել է միայն գյուղմթերքի վաճառքը						
*** 2012թ. թոշակները հաշվառված էին համախառն						

Աղյուսակ 24. Եկամտի աղբյուրների տարածվածությունը Հայաստանում, 2011-2016 թթ.

Եկամտի աղբյուր	Բարեկ.				Բնակավայր			
	Ցածր	Միջին	Բարձր	Գրաֆիկ	Երևան	Քաղաք	Գյուղ	Գրաֆիկ
1. Աշխատավարձ	47.4%	62.4%	76.1%		70.2%	62.7%	37.6%	
2. Եկամուտ բիզնեսից	1.9%	5.8%	23.6%		7.4%	6.5%	5.3%	
3. Եկամուտներ արհեստից/ ինքնազբաղվածությունից *	15.2%	25.6%	27.2%		19.5%	17.9%	22.8%	
4. Գյուղմթերքի վաճառք կամ օգտագործում ընտանիքում **	20.1%	34.7%	30.1%		4.5%	6.5%	63.5%	
5. Ընտանեկան նպաստ	21.4%	10.5%	6.5%		7.8%	16.4%	23.3%	
6. Տարիքային թոշակ ***	34.2%	41.5%	45.0%		42.2%	34.7%	36.7%	
7. Հաշմանդամության թոշակ	21.5%	18.4%	15.3%		17.1%	20.7%	21.2%	
8. Այլ թոշակ կամ նպաստ	3.5%	4.0%	11.0%		5.5%	4.9%	4.0%	
9. Արտագնա աշխատողի կողմից ուղարկած դրամ	10.2%	18.4%	20.1%		9.5%	14.1%	19.2%	
10. Արտասահմանում ապրող ընտանիքի անդամի կամ բարեկամի ուղարկած դրամ	5.7%	9.4%	14.2%		12.1%	8.4%	4.0%	
11. Հայաստանում բնակվող հարազատի/բարեկամի դրամական օգնություն	4.7%	2.2%	3.9%		6.3%	3.7%	1.4%	
12. Եկամուտ վարձով տրված գույքից/բնակարանից	0.6%	1.6%	8.4%		3.7%	1.4%	1.0%	
13. Տոկոսներ ավանդներից / արժեթղթերից / բաժնետոմսերից	0.3%	0.3%	2.9%		1.1%	0.5%	0.4%	

Աղյուսակ 25. Եկամտի աղբյուրների տարածվածությունը Հայաստանում ըստ բնակավայրի տիպի 2016 թթ.

Ընտանիքի բարեկեցության փոփոխության ընկալումները, 2011-2016 թթ.

Կյանքի որակի հետազոտություններում գնահատվել է բնակչության կողմից՝ իրենց ընտանիքի բարեկեցության փոփոխության ընկալումները վերջին մեկ տարվա ընթացքում: Դրանք չափվել են. «**Ինչպե՞ս է փոխվել Ձեր ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը անցած մեկ տարվա ընթացքում**» հարցը: Պատասխանների տարբերակներն էին. 1. Վատացել է, 2. Ավելի շուտ վատացել է, 3. Չի փոխվել, 4. Ավելի շուտ բարելավվել է, 5. Բարելավվել է:

Հայաստանում իրենց ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի փոփոխության ընկալումները 2011-2016 թթ. ընթացքում ներկայացված է Գծապատկեր 39-ում:

- **Հայաստանում ընդհանուր առմամբ 2014-2016 թթ. ընթացքում աճում է այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ իրենց ընտանիքի կենսամակարդակը չի փոփոխվում: Ընդ որում, նվազում է և՛ վիճակի վատթարացում, և՛ վիճակի բարելավում ընկալող անձանց քանակը:**
- **2016 թ.-ին իրենց ընտանիքի վիճակը վերջին մեկ տարվա ընթացքում անփոփոխ են գնահատել հարցվածների 46.3%-ը, բարելավում են հաղորդել՝ 9.8%-ը, իսկ վատթարացում՝ 43.9%-ը:**



Գծապատկեր 39. Ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի փոփոխության ընկալումները վերջին մեկ տարվա ընթացքում, 2011-2016 թթ.

Իրավիճակի փոփոխության ընկալումները 2011-2016 թթ. ընթացքում բարեկեցության խմբերում ներկայացված է Գծապատկեր 40 - Ա, Բ, Գ-ում, իսկ բնակավայրի տիպերում՝ Գծապատկեր 41 - Ա, Բ, Գ-ում:

- **Գծապատկերներից ստացվող ընդհանրական արդյունքն այն է, որ բարեկեցության և բնակավայրի տիպերի բնակչության բոլոր երեք խմբերում ժամանակի ընթացքում աճել է իրավիճակի անփոփոխություն ընկալողների քանակը:**
- **Ցածր բարեկեցության խմբում իրավիճակի բարելավում ընկալողների քանակն ամենափոքրն է և 2013-2016 թթ. ընթացքում շարունակաբար նվազել է:**
- **Միջին և բարձր բարեկեցության խմբերում 2016 թ.-ին կտրուկ նվազել է վիճակի բարելավում ընկալած անձանց քանակը:**



Գծապատկեր 40. Բարեկեցության փոփոխության ընկալումները բարեկեցության խմբերում 2011-2016 թթ.



Գծապատկեր 41. Բարեկեցության փոփոխության ընկալումները բնակավայրերի տիպերում 2011-2016 թթ.

Ավելի ընդհանրացված և ակնառու դիտելու համար իրավիճակի փոփոխության ընկալումների համեմատական դինամիկան ըստ բնակչության տարբեր շերտերի, կազմավորվել է **«Բարեկեցության փոփոխության ընկալման ինդեքս»** (ԲՓԸԻ), որը իրենից ներկայացնում է հետևյալ հարաբերությունը.

ԲՓԸԻ = «Բարեկեցության բարելավում ընկալածներ»/«Բարեկեցության վատթարացում ընկալածներ»

- **Որքան ավելի մեծ է ինդեքսի արժեքը, այնքան ավելի բարենպաստ է փոփոխության ընկալումը:**

Երբ բարեկեցության բարելավում ընկալածների թիվը հավասար է իրավիճակի վատթարացում ընկալածների քանակին, ապա ինդեքսը հավասար է 1-ի:

Երբ բարեկեցության բարելավում ընկալածների թիվը մեծ է իրավիճակի վատթարացում ընկալածների քանակին, ապա ինդեքսը մեծ է 1-ից:

Երբ բարեկեցության բարելավում ընկալածների թիվը փոքր է իրավիճակի վատթարացում ընկալածների քանակին, ապա ինդեքսը փոքր է 1-ից:

Ինդեքսի դինամիկան բարեկեցության խմբերում և բնակավայրի տիպերում ներկայացված է Գծապատկեր 42-Ա, Բ-ում:

Գծապատկերներից երևում է, որ.

- **Հայաստանում բարեկեցության ընկալման ինդեքսն 2012-2016 թթ. ունեցել է նվազման միտում (**Գծապատկեր 42-Ա-ում՝ ընդհատ կարմիր գիծը**):**
- **Բարձր բարեկեցության խմբում իրավիճակի ընկալման ինդեքսը 2011 թ.-ին մոտ 12 անգամ գերազանցում էր ինդեքսի արժեքին ցածր բարեկեցության խմբում և մոտ 4.5 անգամ՝ միջին բարեկեցության խմբում (**Գծապատկեր 42-Ա**): Սակայն, 2011-2016 թթ. ընթացքում, բարձր բարեկեցության խմբում ինդեքսի արժեքը նվազել է մոտ երկու անգամ՝ 0.82-ից մինչև 0.47**

և 2016 թ.-ին արդեն ցածր բարեկեցության ինդեքսին գերազանցում էր 3.4 անգամ, իսկ միջին բարեկեցության խմբի ինդեքսին՝ 1.5 անգամ:

- **Ցածր և միջին բարեկեցության խմբերում 2013-2016 թթ. ընթացքում ինդեքսի արժեքը էապես չի փոխվել:**
- **Ինչ վերաբերվում է ինդեքսի արժեքին բնակավայրի տիպերում, ապա եթե 2012 թ.-ին քաղաքներում և գյուղերում այն էապես ավելի բարձր էր, քան Երևանում, ապա 2016 թ.-ին ինդեքսի արժեքները բոլոր բնակավայրի տիպերում մոտավորապես հավասարվել են** (Գծապատկեր 42-Բ):



Գծապատկեր 42. Իրավիճակի փոփոխության ընկալման ինդեքսը բարեկեցության խմբերում և բնակավայրի տիպերում, 2011-2016 թթ.

Ընտանիքի բարեկեցության փոփոխության սպասումները, 2013-2016

Իրենց ընտանիքի տնտեսական վիճակի փոփոխության սպասումները հաջորդ տարվա ընթացքում ուսումնասիրվել են. «**Ինչպե՞ս կփոխվի Ձեր ընտանիքի տնտեսական վիճակը հաջորդ մեկ տարվա ընթացքում**» հարցի միջոցով:

Այդ հարցին տրված պատասխանների բաշխումները ամբողջ Հայաստանում ներկայացված են Գծապատկեր 43-ում: Գծապատկերը ցույց է տալիս, որ.

- **Հետազոտությանը հաջորդող տարվա համար իրենց ընտանիքի տնտեսական վիճակի փոփոխության սպասումներում 2013-2016 թթ. ընթացքում մոնոտոն աճել է անորոշությունը («Դժվարանում եմ պատասխանել» պատասխանների քանակը) և վիճակի անփոփոխության սպասումները («Կմնա նույնը» պատասխանների քանակը):**
- **Միևնույն ժամանակ էապես նվազել են վատատեսական սպասումները (2013 թ.-ին 52.5%-ից մինչև 2016 թ.-ին 21.7%ը:**
- **Լավատեսական սպասումները 2016 թ.-ին 2014 և 2015 թ. համեմատ աճել են և վիճակագրորեն հավասարվել են 2013 թ. մակարդակին 26.5%:**



Գծապատկեր 43. Բարեկեցության փոփոխության սպասումները Հայաստանում, 2013-2016 թթ.

«Իրավիճակի փոփոխության ընկալման ինդեքսին» համանման կառուցվել է «**Բարեկեցության դրական փոփոխության սպասման (կամ՝ օպտիմիզմի) ինդեքս**» (ՕԻ), որը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

ՕԻ = «Բարեկեցության բարելավում սպասողներ»/«Բարեկեցության վատթարացում սպասողներ»

Այդ ինդեքսի դինամիկան 2013-2016 թթ. ըստ բարեկեցության խմբերի և բնակավայրի տիպերի տրված է Գծապատկեր 44-Ա,Բ-ում:

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանում 2013-2016 թթ. ընթացքում, անորոշության և փոփոխության բացակայության դիրքորոշումների աճի ֆոնին (**Գծապատկեր 43**), տեղի է ունեցել օպտիմիզմի ընդհանուր աճ, ինչպես բարեկեցության բոլոր խմբերում, այնպես էլ բնակավայրերի տիպերում:**
- **Օպտիմիզմի աճը առավելապես նկատվել է բարձր բարեկեցությամբ շերտում և գյուղերում:**



Գծապատկեր 44. Օպտիմիզմի ինդեքսը 2013-2016 թթ.

Կենսամակարդակի ֆինանսական համարժեքը հասարակական գնահատականներում

Հետազոտությամբ ուսումնասիրվել է Հայաստանի բնակչության գնահատականներում կենսամակարդակի տարբեր կատեգորիաների համար շեմային արժեքները: Դրա համար կիրառվել է «**Որքա՞ն գումար է անհրաժեշտ Ձեր ընտանիքի մեծության ընտանիքին Ձեր բնակավայրում ամսական «լավ» ապրելու / «նորմալ» ապրելու / աղքատ չհամարվելու համար**» հարցը:

2011-2016 թթ. տվյալները ներկայացված են Գծապատկեր 45:

- **Տվյալները ներկայացված են ստացված պատասխանները վերահաշվարկելով չորս անդամից կազմված ընտանիքների համար:**

Կենսամակարդակի կատեգորիաների շեմային ֆինանսական համարժեքների գնահատականների միջին արժեքները հաշվարկվել են հարցվողների կողմից նշված ամենափոքր և ամենամեծ գումարների 5%-ների հատումից հետո՝ նվազեցնելու համար պատասխանների ցրվածքը և բարձրացնելու համար հաշվարկված միջին արժեքների կայունությունը:

Գծապատկերի տվյալներից երևում է, որ.

- **2016 թ.-ին Հայաստանում չորս անձից կազմված ընտանիքին ամսական.**
  - **«Աղքատ չհամարվելու համար» անհրաժեշտ է միջինը 199,000 դրամ,**
  - **«Նորմալ ապրելու համար»՝ 358,000 դրամ,**
  - **«Լավ ապրելու համար»՝ 668,000 դրամ:**
- **«Լավ» և «Նորմալ» ապրելու համար հաշվարկված շեմային արժեքների գնահատականները 2014 թ. բարձրակետից հետո 2015 և 2016 թթ. համար էապես նվազել են:**

Կենսամակարդակների ֆինանսական համարժեքները բնակավայրի տիպերում 2015 և 2016թ. համար ներկայացված է Գծապատկեր 46-ում:



Գծապատկեր 45. Բնակչության գնահատականները, իրենց համայնքում 4 չորս անձից կազմված «լավ ապրելու», «նորմալ ապրելու» և աղքատ չհամարվելու համար, 2011-2015 թթ. (հազար դրամ, տրված են առավելագույն և նվազագույն գնահատականների 5%-ների հատումից հետո ստացված գնահատականները)



Գծապատկեր 46. Բնակչության գնահատականները, իրենց համայնքում 4 չորս անձից կազմված «լավ ապրելու», «նորմալ ապրելու» և աղքատ չհամարվելու համար ըստ բնակավայրի տիպի, 2015-2016 թթ. (հազար դրամ, տրված են առավելագույն և նվազագույն գնահատականների 5%-ների հատումից հետո ստացված գնահատականները)

6.3. Զբաղվածություն և աշխատանքային պայմաններ

Զբաղվածներ, գործազուրկներ և տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն

Հայաստանում չափահաս բնակչության բաշխումները 2011-2016 թթ. ընթացքում ըստ **տնտեսական ակտիվության կարգավիճակների՝** զբաղվածներ, գործազուրկներ և տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն, ներկայացված են Գծապատկեր 47-ում:

Տնտեսական ակտիվության ներկայացված ցուցանիշներն այլ աղբյուրներից ստացված տվյալների հետ համեմատելիս հարկ է հաշվի առնել, որ այդ ցուցանիշներն ունեն սեզոնային բնույթ՝ ձմռանը

տնտեսական ակտիվությունը նվազում է: Պարբերական ուսումնասիրություններ կատարելիս տարեկան գնահատականները միջինացվում են հիմք ընդունելով սեզոնային տվյալները: Բացի դրանից, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը զբաղվածության և գործազրկության գնահատականները հաշվարկում է 15 և ավելի տարեկան անձանց թվից, իսկ Կյանքի որակի հետազոտությունն իրականացվում է 18 և ավելի տարեկան անձանց շրջանում:

Կյանքի որակի հետազոտությունները իրականացվել են ձմռանը, մասնավորապես՝ 2011-2012 և 2014-2015թթ. հետազոտություններն իրականացվել են դեկտեմբերին, 2013թ. հետազոտությունը՝ հունվարին, 2016 թ. հետազոտությունը՝ 2016 թ. դեկտեմբեր - 2017 թ. հունվար ամիսներին:

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **2011-2013 թթ. ընթացքում բնակչության տնտեսական ակտիվությունը Հայաստանում աճում է, մասնավորապես՝ աճում էր զբաղվածների և նվազում էր՝ գործազուրկների և տնտեսապես ոչ ակտիվ անձանց քանակը:**
- **2013-2016 թթ. ընթացքում բնակչության տնտեսական ակտիվությունը մոնոտոն նվազել է, մասնավորապես՝ նվազել է զբաղվածների և աճել է գործազուրկների քանակը: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության քանակը նույնպես ունեցել աճի թույլ միտում:**
- **2015 թ.-ի դեկտեմբերին զբաղվածները կազմել են Հայաստանի չափահաս բնակչության 45.7%-ը, գործազուրկները՝ 16.4%-ի, իսկ տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը՝ 37.9%-ը:**



Գծապատկեր 47. Հայաստանի բնակչության բաշխումն ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակների, 2011-2016 թթ. (Տվյալները ներկայացնում են իրավիճակը տվյալ տարվա դեկտեմբերին)

Գործազրկության մակարդակը Հայաստանում, որը հաշվարկվում է որպես գործազուրկների թվաքանակի հարաբերություն՝ գործազուրկների և զբաղվածների թվաքանակին, ներկայացված է Գծապատկեր 48-ում, իսկ ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի՝ Աղյուսակ 26-ում:



Գծապատկեր 48. Գործազրկության մակարդակը Հայաստանում, 2011-2016 թթ., դեկտեմբեր

Գծապատկերից երևում է, որ.

- **2011-2013 թթ. ընթացքում գործազրկության մակարդակը Հայաստանում նվազում էր, իսկ 2013-2016 թթ. ընթացքում աճել է և 2016 թ. դեկտեմբերին կազմել է 26.4%:**
- **Գործազրկության այդ մակարդակը համարվում է շատ բարձր:**

2011-2016 թթ. գործազրկության ընդհանուր մակարդակը, անկախ դրա փոփոխության միտումներից, ցույց է տալիս, որ Հայաստանում առկա է շատ բարձր **կառուցվածքային գործազրկություն,** որը տվյալ դեպքում նշանակում է, ոչ միայն Հայաստանում տնտեսության և աշխատուժի կառուցվածքների անհամապատասխանություն, այլև, որ Հայաստանի տնտեսությունն ունի անհամեմատ ավելի փոքր ծավալ, քան անհրաժեշտ է բնակչության գործազրկությունը ֆոնային համարվող 5-7% մակարդակի վրա պահպանելու համար: Գործազրկության նման մակարդակը հանդիսանում է ոչ միայն արտագնա աշխատանքների, այլև արտագաղթի նշանակալի գործոն (տես՝ Գծապատկեր 79, էջ - 144 -):

Գործազրկության մակարդակը սոցիալ-ժողովրդագրական խմբերում 2011-2016 թթ. դեկտեմբերին ներկայացված է Աղյուսակ 26-ում:

- Գործազրկության մակարդակի միտումները սոցիալ-ժողովրդագրական խմբերում, որպես կանոն, կրկնում է հանրապետական միտումների կերպարը (Աղյուսակ 26, «Տրենդ» սյունը):
- **Հատկապես անհանգստացնող պետք է գնահատել գործազրկության շատ բարձր մակարդակը՝ 18-29 տարեկանների խմբում, որ 2016 թ.-ին կազմել է 36.6% և կտրուկ աճել է 2015 թ. համեմատ՝ 28.8%: Երիտասարդական գործազրկության նման բարձր մակարդակը հասարակական հուզումների դեպքում լուրջ վտանգ կարող է ներկայացնել հասարակության կայունության համար:**
- Գործազրկության մակարդակը շատ բարձր է եղել նաև տղամարդկանց շրջանում՝ 31.8%, ինչը կարող է բացատրվել նրանով, որ Հայաստանում են գտնվել արտագնա աշխատանքի մեկնող տղամարդիկ, ովքեր փորձել են ժամանակավոր աշխատանք գտնել Հայաստանում:
- Շատ բարձր է նաև գործազրկության մակարդակը միջնակարգ կրթությամբ (31.4%) և ցածր բարեկեցությամբ անձանց շրջանում (32.5%):

Բնութագիր	Գործազրկ. մակարդակը	2011	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Ընդամենը		27.3%	22.9%	16.1%	18.4%	24.8%	26.4%	
Բնակավայրի տիպ	Երևան	27.3%	26.0%	17.2%	21.9%	26.5%	28.0%	
	Քաղաք	34.3%	24.3%	23.1%	20.5%	25.6%	28.3%	
	Գյուղ	20.6%	18.5%	10.5%	13.1%	22.4%	23.5%	
Սեռ	Արական	25.8%	22.0%	16.9%	14.1%	19.5%	31.8%	
	Իգական	29.5%	24.4%	15.1%	24.1%	31.9%	22.7%	
Տարիք	18-29	33.0%	29.8%	25.4%	23.7%	28.8%	36.2%	
	30-45	21.9%	19.5%	13.2%	18.3%	27.1%	27.3%	
	46-60	28.2%	18.9%	13.9%	15.9%	20.3%	20.6%	
	60 +	21.4%	27.4%	4.8%	9.3%	18.0%	13.5%	
Կրթություն	Միջն.	31.3%	24.6%	16.1%	17.5%	29.7%	31.4%	
	ՄՄ կամ ԹԲ	29.1%	21.5%	19.4%	20.2%	27.1%	26.8%	
	Բար.	20.9%	22.4%	12.5%	17.4%	16.7%	18.8%	
Բարեկեցություն	Ցածր	41.0%	32.7%	26.0%	25.6%	27.5%	32.5%	
	Միջին	27.9%	21.3%	14.4%	15.9%	23.5%	21.5%	
	Բարձր	14.8%	16.5%	10.3%	16.2%	19.6%	17.4%	

Աղյուսակ 26. Գործազրկության մակարդակը ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրերի, 2011-2015 թթ.

Զբաղվածության կատեգորիաները Հայաստանի հասարակությունում

Աղյուսակ 27-ում ներկայացված է 2016 թ.-ին Հայաստանի բնակչության զբաղվածության կատեգորիաների բաշխումը Հայաստանում և առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբերում:

Աղյուսակի վանդակները գունավորված են: Կանաչ գույն ունեն այն վանդակները, որոնցում գտնվում են տվյալ տողի 4 ամենաբարձր արժեքները: Կարմիր գույն ունեն այն վանդակները, որոնցում են գտնվում տվյալ տողի 4 ամենացածր արժեքները: Այդ գունավորումը թույլ է տալիս արագորեն տեսնել, թե ո՞ր սոցիալ-ժողովրդագրական խմբին է համեմատաբար ավելի հատկանշական զբաղվածության տվյալ կատեգորիան:

Դիտարկեն աղյուսակի առավել հատկանշական տվյալները և թվային կերպարները:

- **Պետական ձեռնարկություններում վարձու աշխատողների** քանակը հարաբերականորեն ավելի բարձր է քաղաքային բնակչության, բարձր բարեկեցության, 46-60 տարեկանների և բարձրագույն կրթությամբ խմբերում և հարաբերականորեն ամենացածրն է գյուղական բնակչության, 18-29 և 60-ից ավելի տարեկանների և միջնակարգ կրթությամբ անձանց խմբերում:
- **Գործատուների** քանակը հարաբերականորեն ավելի բարձր է բարձրագույն կրթությամբ, բարձր բարեկեցությամբ, 46-60 տարեկան տղամարդկանց շրջանում:

Կարգավիճակ	ՀՀ	Բնակավայր			Բարեկ.			Տարիք				Կրթություն			Սեռ	
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր	18-29	30-45	46-60	60+	Միջ	Մ. մաս.	Բար.	Իգ.	Ար.
Վարձու աշխատող պետական ձեռնարկությունում	15.4%	16.2%	19.5%	11.3%	12.8%	17.2%	20.4%	10.7%	17.6%	18.7%	11.3%	8.2%	13.5%	30.1%	14.5%	16.4%
Պայմանագրով վարձու աշխատող մասնավոր ձեռնարկությունում	7.8%	11.1%	11.4%	1.7%	6.9%	8.1%	10.4%	8.7%	8.9%	7.1%	5.3%	4.8%	7.4%	13.7%	4.8%	11.4%
Առանց պայմանագրի վարձու աշխատող մասնավոր ձեռնարկությունում	3.1%	5.2%	2.1%	1.8%	2.4%	4.3%	3.2%	3.8%	3.7%	2.9%	1.1%	3.2%	2.5%	3.6%	2.4%	4.0%
Ինքնազբաղված մասնագետ՝ իրավաբան, բժիշկ, հաշվապահ, ճարտարապետ և այլն	0.9%	1.5%	1.1%	0.3%	0.5%	1.0%	2.6%	0.8%	1.1%	1.0%	0.8%	0.4%	0.6%	2.3%	0.8%	1.1%
Ինքնազբաղված՝ արհեստավոր, առևտուր, տաքսի սերվիս, վարսավիր և այլն	7.7%	7.0%	9.6%	6.9%	7.8%	7.8%	7.4%	7.5%	10.0%	7.9%	2.3%	9.6%	6.8%	5.3%	3.7%	12.4%
Ինքնազբաղված՝ գյուղատնտեսությունում	10.1%	0.5%	0.4%	27.5%	9.0%	13.9%	6.5%	6.1%	11.5%	13.8%	6.0%	14.7%	9.7%	2.1%	5.9%	15.0%
Գործատու	0.6%	1.1%	0.4%	0.3%	0.0%	0.3%	3.2%	0.4%	0.5%	1.2%	0.0%	0.1%	0.2%	1.9%	0.1%	1.2%
Զբաղված	45.7%	42.7%	44.4%	49.7%	39.4%	52.6%	53.7%	38.0%	53.1%	52.4%	26.8%	41.1%	40.6%	58.9%	32.2%	61.4%
Գործազուրկ	16.4%	16.6%	17.5%	15.3%	19.0%	14.4%	11.3%	21.6%	19.9%	13.6%	4.2%	18.8%	14.9%	13.6%	15.0%	18.0%
Տնային տնտեսություն վարող	14.0%	12.1%	14.2%	15.8%	15.0%	12.9%	12.9%	15.4%	15.3%	15.8%	4.2%	13.9%	19.3%	9.0%	23.5%	3.0%
Բուհի ուսանող	3.4%	4.8%	2.3%	2.9%	1.2%	4.1%	9.7%	13.7%	0.0%	0.0%	0.0%	6.0%	0.8%	1.3%	3.9%	2.9%
Այլ ուսումնական հաստատության սովորող	0.2%	0.4%	0.0%	0.1%	0.3%	0.2%	0.0%	0.8%	0.0%	0.0%	0.0%	0.3%	0.2%	0.0%	0.4%	0.0%
Թոշակառու	10.8%	13.9%	11.9%	6.7%	14.6%	7.0%	4.9%	0.2%	0.9%	7.7%	61.9%	9.4%	14.5%	9.6%	11.4%	10.0%
Չեմ աշխատում՝ աշխատանք չեմ փնտրում	9.5%	9.5%	9.6%	9.4%	10.5%	8.8%	7.4%	10.3%	10.7%	10.4%	3.0%	10.5%	9.7%	7.5%	13.6%	4.7%
Տնտեսապես ոչ ակտիվ	37.9%	40.7%	38.1%	35.0%	41.6%	33.0%	35.0%	40.4%	27.0%	33.9%	69.1%	40.1%	44.5%	27.5%	52.8%	20.6%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

Աղյուսակ 27. Բնակչության զբաղվածության տիպերը ժողովրդագրական խմբերում, 2016 թթ.

Մասնավոր ձեռնարկություններում առանց պայմանագրի աշխատողները հարաբերականորեն ավելի մեծ թիվ են կազմում երևանաբնակների, միջին բարեկեցությամբ, 18-29 տարեկանների և տղամարդկանց խմբերում, իսկ հարաբերականորեն ավելի փոքր քանակ՝ 60-ից բարձր տարիքի, տղամարդկանց, գյուղաբնակների և քաղաքաբնակների խմբերում:

- **Չեն աշխատում, աշխատանք չեն փնտրում** կատեգորիայի անձինք հարաբերականորեն ավելի մեծաթիվ են ցածր բարեկեցությամբ, 30-45 տարեկան, միջնակարգ կրթությամբ և կանանց խմբերում և հարաբերականորեն ավելի փոքրաթիվ՝ բարձր բարեկեցությամբ, 60 և ավելի տարեկան, տղամարդկանց խմբերում:
- **Ինքնազբաղվածները** (ոչ գյուղատնտեսական ոլորտներում) հարաբերականորեն ավելի մեծաթիվ են քաղաքաբնակ, 30-45 տարեկան, միջնակարգ կրթությամբ և տղամարդկանց խմբերում և հարաբերականորեն ավելի փոքրաթիվ՝ 60 և ավելի տարեկան, 60 և ավելի տարիք և կանանց խմբերում:

Աշխատանք գտնելու դյուրության ընկալումները

Հետազոտությամբ գնահատվել է, թե որքանով հեշտ կամ դժվար է համարում սեփական համայնքում աշխատանք գտնելը Հայաստանի բնակչությունը և դրա առանձին կատեգորիաները: Այդ դրույթը չափվել է հետևյալ հարցի միջոցով. «**Հետևյալ դատողություններից ո՞րն է ավելի լավ բնութագրում Ձեր դիրքորոշումը: Ձեզ նման մարդկանց՝ Ձեր բնակավայրում աշխատանք գտնելն. «անհնար է», «հնարավոր է, սակայն շատ դժվար», «հնարավոր է և ոչ այնքան դժվար», «հեշտ է»**: Այդ հարցին տրված պատասխանների ընդհանուր բաշխումները 2011-2016 թթ. ներկայացված են Գծապատկեր 49-ում: Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ.

- **2016 թ.-ին աշխատանք գտնելը 2014 և 2015 թթ. համեմատ դարձել է ավելի դյուրին:**
- **Կտրուկ նվազել է այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ իրենց համայնքում աշխատանք գտնելն անհնար է: Եթե 2015 թ.-ին այդպես էին համարում հարցվածների 35.0%-ը, ապա 2016 թ.-ին այդ քանակը նվազել է մինչև 23.0%:**



Գծապատկեր 49. Բնակչության ընկալումները սեփական համայնքում աշխատանք գտնելու տեսակետից, 2011-2015 թթ.



Գծապատկեր 50. Բնակչության այն խմբերը, որոնց համար իրենց համայնքում աշխատանք գտնելն համեմատաբար ավելի դժվար է (Պատասխանել են, որ իրենց համար իրենց բնակավայրում աշխատանք գտնելն «անհնար է»), 2014-2016 թթ.

Գծապատկեր 50-ում տրված է իրենց համայնքում աշխատանք գտնելն «անհնար» համարող անձանց քանակը սոցիալ-ժողովրդագրական խմբերում՝ 2014-2016 թթ. ընթացքում:

- **Համեմատաբար ավելի հեշտ են համարում իրենց համայնքում աշխատանք գտնելը.**
  - Երիտասարդների
  - Բարձրագույն կրթությամբ անձանց,
  - Բարձր բարեկեցությամբ անձանց և
  - Երևանաբնակների շրջանում:
- **Համեմատաբար ավելի դժվար է.**
  - 60 և ավելի տարեկանների,
  - Ցածր բարեկեցությամբ և
  - Գյուղաբնակների խմբերում:

Վարձու աշխատողների աշխատանքի բնութագրերը

Վարձու աշխատանքի ընդհանուր նկարագիրը

Մտավոր – ֆիզիկական աշխատանք. Հայաստանում վարձու աշխատողների 56.9%-ի աշխատանքը մտավոր կամ ավելի շուտ մտավոր բնույթի է (Գծապատկեր 51): Մտավոր կամ ավելի շուտ մտավոր բնույթի են համարել իրենց աշխատանքը պետական ձեռնարկություններում վարձու աշխատողների 63.4%, մասնավոր ձեռնարկություններում վարձու աշխատողների 51.6% և առանց պայմանագրի վարձու աշխատողների 37.7%-ը:

Ենթակա ունեցող և չունեցող աշխատատեղեր. Այս բնութագիրը թույլ է տալիս աշխատատեղերը ստորաբաժանել որպես կառավարչական և զուտ ենթակայական տիպերի:

Հայաստանում 2016 թ.-ին ենթակա աշխատողներ չուներ վարձու աշխատողների 68.6%-ը: 2015 թ.-ին այդ ցուցանիշը հավասար էր 73.2%-ի (Գծապատկեր 52):

Ներքին օղակի կառավարչական պաշտոններ (մինչև 10 ենթակա ունեցող պաշտոններ) են զբաղեցրել Հայաստանի վարձու աշխատողների 21.0%-ը կամ՝ յուրաքանչյուր 5-րդ վարձու աշխատողը: Մինչև 50 ենթակա ունեցող կառավարիչները կազմել են վարձու աշխատողների 7.6%-տ, իսկ 50-ից ավելի ենթակա ունեցող կառավարիչները կազմել են վարձու աշխատողների 2.8%-ը:



Գծապատկեր 51. Վարձու աշխատողների աշխատանքի բնույթը՝ մտավոր – ֆիզիկական



Գծապատկեր 52. Վարձու աշխատողների աշխատանքի բնույթը՝ չունեն ենթականեր – ունեն ենթականեր

Վարձու աշխատողների աշխատանքային պայմանները

Վարձու աշխատողների աշխատանքային պայմանների նկարագիրը ներկայացված է Գծապատկեր 53-ում, իսկ դրա փոփոխության դինամիկան 2012-2016 թթ. ընթացքում՝ Գծապատկեր 54-ում: Գծապատկերի ընդհանուր տեսքը ցույց է տալիս, որ.

- **Ընդհանուր առմամբ Հայաստանի տնտեսությունում վարձու աշխատողների աշխատանքային պայմանները անբարվոք են: Այսպես.**
  - **Հայաստանի վարձու աշխատողների 62.8%-ը համարում է, որ աշխատում է լարված և նյարդային պայմաններում,**
  - **40.9%-ն համարում է, որ աշխատում է առողջության համար վնասակար պայմաններում,**
  - **41.1%-ը հաճախ մտածում է, որ կարող է կորցնել աշխատանքը,**
  - **67.2%-ն է համարում, որ իր աշխատանքային իրավունքները պաշտպանված են,**
  - **Միայն 33.3%-ն է համարում, որ լավ է վարձատրվում,**
  - **Միայն 35.4%-ն է համարում, որ ունի աշխատավարձի բարձրացման լավ հնարավորություն,**
  - **Միայն 30.5%-ն է համարում, որ ունի պաշտոնի բարձրացման հնարավորություն,**
  - **Միայն 41.1%-ն է համարում, որ ունի մասնագիտական աճի հնարավորություն:**

Մյուս կողմից.

  - **Վարձու աշխատողների 85.7%-ը համարում է, որ կատարում է կարևոր աշխատանք:**
  - **18.5%-ը համարում է, որ իր աշխատանքը անհետաքրքիր է ու ձանձրալի:**

Վարձու աշխատողների աշխատանքային պայմանները 2016 թ.-ին ըստ տնտեսության պետական և մասնավոր սեկտորների ներկայացված է Գծապատկեր 55-ում: Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Պետական սեկտորում՝ մասնավոր սեկտորի պայմանագրային աշխատողների** համեմատ հարաբերականորեն ավելի բարենպաստ են.
  - աշխատանքային իրավունքների պաշտպանվածությունը,
  - աշխատողի մոտ իր աշխատանքի կարևորության զգացողությունը,
- Սակայն հարաբերականորեն ավելի անբարենպաստ է.
  - Բավարարվածությունը եկամտից,
  - Աշխատավարձի բարձրացման հնարավորությունը:

Մյուս դիտարկված բնութագրերի տեսակետից՝ պետական սեկտորում դրանք չնչին չափով են ավելի բարենպաստ, քան մասնավոր սեկտորի պայմանագրային աշխատողների շրջանում:



Գծապատկեր 53. Վարձու աշխատողների աշխատանքային պայմանները, 2016 թ.



Գծապատկեր 54. Վարձու աշխատողների աշխատանքային պայմանների հիմնական բնութագրերը, 2012-2015 թթ.



Գծապատկեր 55. Վարձու աշխատողների աշխատանքի հիմնական բնութագրերն ըստ տնտեսության պետական և մասնավոր սեկտորների, 2016 թ.

Ինչ վերաբերվում է **մասնավոր սեկտորում առանց պայմանագրի աշխատողներին,** ապա նրանց աշխատանքային պայմանները ավելի անբարենպաստ են և՛ պետական սեկտորի, և՛ մասնավոր սեկտորի պայմանագրային աշխատողների համեմատ:

Հայաստանում վարձու աշխատողների հարակից աշխատանքային պայմանների նկարագիրը տրված է 2012-2016 թթ. ընթացքում տրված է Գծապատկեր 56-ում:

- **Հարակից պայմաններ ասելով նկատի ունենք ընդմիջման ժամի, հանգստյան օրվա, արձակուրդի հավելավճարների և սոցիալական փաթեթների առկայությունը:**

Ընդհանուր առմամբ.

- **Հայաստանում վարձու աշխատողների սոցիալական երաշխիքների առկայության տեսակետից իրավիճակն անբարվոք է:**

Այսպես, 2016 թ.-ին՝

- Ունեին ընդմիջման համար կոնկրետ սահմանված ժամ վարձու աշխատողների 75.0%-ը,
- Ունեին շաբաթական գոնե մեկ հանգստյան օր՝ 90.6%-ը,
- Ունեին տարեկան մեկ անգամ վճարովի արձակուրդ՝ 67.0%-ը,
- Ունեին հավելավճարներ՝ 43.9%-ը,
- Ունեին արտոնություններ կամ սոցիալական փաթեթներ՝ 36.3%-ը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ 2012-2016 թթ. ընթացքում վարձու աշխատողների սոցիալական երաշխիքների տեսակետից տեղի են ունեցել դրական տեղաշարժեր: Մասնավորապես.

- Ավելացել է կոնկրետ ընդմիջման ժամ ունեցող աշխատողների քանակը՝ 2013 թ. 58.9%-ից, մինչև 75.0% 2016 թ.-ին:
- Ավելացել է արտոնություններ կամ սոցիալական փաթեթ ունեցող աշխատողների քանակը՝ 2012 թ. 23.7%-ից, մինչև 36.3% 2016 թ.-ին:

Վարձու աշխատողների աշխատանքի սոցիալական երաշխիքների տարբերությունները 2016 թ.-ին ըստ պետական և մասնավոր հատվածի ներկայացված են Գծապատկեր 57-ում:

- **Պետական հատվածում աշխատանքի սոցիալական երաշխիքներն ավելի բարձր են, քան մասնավոր հատվածում, մասնավորապես.**
    - Պետական հատվածում ունեն շաբաթական գոնե մեկ հանգստյան օր 94.2%-ը, իսկ մասնավոր հատվածում՝ 85.4%-ը (ընդ որում և՛ պայմանագրով, և՛ առանց պայմանագրի աշխատողները:
    - Ունեն տարեկան վճարովի արձակուրդ պետական սեկտորում աշխատողների 81.9%-ը, իսկ մասնավոր սեկտորում՝ 58.2%-ը[7]: Ընդ որում, տարեկան վճարովի արձակուրդ ունեն առանց պայմանագրի աշխատողների միայն 15.9%-ը:
    - Ունեն արտոնությունների և սոցիալական փաթեթ պետական սեկտորի աշխատողների 49.4%-ը, իսկ մասնավոր սեկտորում՝ 22.8%-ը: Ընդ որում, առանց պայմանագրի աշխատողների միայն 6.3%-ը (այս կատեգորիայի աշխատողների համար խոսքը վերաբերվում է արտոնություններին):

[7] Ըստ երևույթին՝ պայմանագրային վարձու աշխատողների նշանակալի մասն աշխատում է մեկ տարվա պայմանագրով, որի պատճառով չունեն վճարովի արձակուրդ:



Գծապատկեր 56. Աշխատանքի սոցիալական երաշխիքների առկայությունը, 2012-2016 թթ.



Գծապատկեր 57. Աշխատանքի սոցիալական երաշխիքների առկայությունն ըստ տնտեսության սեկտորի, 2016թ.

6.4. Առողջապահության ֆինանսական մատչելիություն և որակ

Բուժհիմնարկների մատչելիությունը.

Բուժհիմնարկների դիմելիությունը 2016 թ.-ին ներկայացված է Գծապատկեր 58-ում:

- **2016 թ.-ին պոլիկլինիկա է դիմել Հայաստանի բնակչության 46.6-ը, ատամնաբուժարան 37.5%-ը, դիագնոստիկ կենտրոն՝ 13.2%-ը, հիվանդանոց՝ 25.3%-ը:**



Գծապատկեր 58. Առողջապահական հիմնարկների ֆինանսական մատչելիությունը, բոլոր հարցվողների թվից, 2016 թ.

Տարբեր տիպի բուժհիմնարկների ֆինանսական մատչելիությունը 2011-2016 թթ. ընթացքում ուսումնասիրվել է հետևյալ հարցի կիրառմամբ՝ «**Եթե վերջին տարվա ընթացքում Դուք անձամբ դիմել եք հետևյալ առողջապահական հաստատությունները, ապա որքանո՞վ է Ձեզ համար ֆինանսապես դրանցում բուժում ստանալը**», որից հետո հարցվողին ներկայացվել է բուժհաստատությունների ցանկը: Յուրաքանչյուր բուժհաստատության ֆինանսական մատչելիությունը գնահատվել է առանձին:

2011 թ. գյուղերում առանձին էր գնահատվել և՛ բուժկետի, և՛ ամբուլատորիայի ֆինանսական մատչելիությունը, սակայն սկսած 2012 թ.-ից հարցը տրվել է տվյալ գյուղական համայնքում առկա բուժհաստատության վերաբերյալ, որը մի դեպքում կարող էր լինել բուժկետ, իսկ մյուս դեպքում՝ ամբուլատորիա:
Աղյուսակ 28-ում ներկայացված է տարբեր բուժհիմնարկների մատչելիությունը՝ հետազոտվող տարվա ընթացքում տվյալ բուժհիմնարկը դիմած անձանց քանակից: Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ.

- **2016 թ.-ին 2015 թ. համեմատ բուժհաստատությունների ֆինանսական մատչելիությունը՝ այդ բուժհիմնարկները դիմած անձանց գնահատականներով աճել է:**
- **Առողջապահական հիմնարկ դիմածների համար առավել մատչելի են պոլիկլինիկաները և ծննդատները: Ամենացածր մատչելիությունն ունեն հիվանդանոցները:**

Բուժիմնարկ	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Բուժկետ/ամբուլ. (գյուղերում)	81.0%	68.3%	71.5%	68.7%	66.3%	
Պոլիկլինիկա	66.8%	69.3%	65.4%	71.4%	73.3%	
Ատամնաբուժարան	46.8%	40.4%	37.2%	31.8%	55.2%	
Մասնավոր բժշկական կենտրոն	28.1%	24.8%	-	-		
Դիագնոստիկ կենտրոն	32.0%	29.8%	24.7%	26.2%	44.6%	
Հիվանդանոց	31.2%	28.9%	25.0%	26.8%	42.4%	
Ծննդատուն (միայն կանայք)	75.8%	64.4%	68.2%	72.0%	71.8%	

Աղյուսակ 28. Առողջապահական հիմնարկների ֆինանսական մատչելիության ընկալումը տվյալ բուժիմնարկ դիմած անձանց շրջանում, 2012-2016 թթ.

Բավարարվածությունը բուժիմնարկների ծառայություններից. Աղյուսակ 29-ում ներկայացված են բուժիմնարկների ծառայություններից բավարարվածության գնահատականների միտումները 2011-2016թթ. ընթացքում: Տոկոսները հաշվարկված են տվյալ բուժհաստատությունը դիմած անձանց քանակից:

- **Ընդհանուր առմամբ բնակչության բավարարվածությունը բուժիմնարկների ծառայությունների որակից գտնվում է գնահատականների շատ բարձր և բարձր տիրույթում:**
- **Առավել բարձր է բավարարվածությունը ատամնաբուժարանների և դիագնոստիկ կենտրոնների ծառայություններից:**
- **Համեմատաբար ավելի ցածր է բավարարվածությունը պոլիկլինիկաների հիվանդանոցների ծառայություններից:**
- **2016 թ.-ին նվազել է գյուղական բուժկետերի/ամբուլատորիաների ծառայություններից բավարարված անձանց քանակը:**

Բուժիմնարկ	2011	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Բուժկետ/ամբուլատորիա (գյուղերում)	-	86.4%	85.2%	81.9%	86.2%	77.0%	
Պոլիկլինիկա	71.0%	67.6%	70.5%	63.4%	69.3%	68.7%	
Ատամնաբուժարան	81.8%	79.7%	83.5%	79.5%	83.0%	86.0%	
Մասնավոր բժշկական կենտրոն*	79.6%	76.2%	72.4%	-	-	-	
Դիագնոստիկ կենտրոն	79.0%	79.3%	77.5%	74.0%	79.7%	84.0%	
Հիվանդանոց/Բժշկական կենտրոն	74.2%	71.8%	72.8%	74.3%	73.1%	71.4%	
Ծննդատուն (միայն կանայք)	86.4%	72.6%	89.8%	85.9%	88.2%	77.8%	

* - 2014թ.-ին «Բժշկական կենտրոն» բուժիմնարկի տիպի մասին հարցը տրվել է «Հիվանդանոցի» հետ համատեղ:

Աղյուսակ 29. Բավարարվածությունն առողջապահական հիմնարկի ծառայություններից, 2011-2016 թթ.

6.5. Կրթության ֆինանսական մատչելիություն

Կրթական հաստատություններից օգտվող ընտանիքների բաշխումները 2010-2016 թթ. ընթացքում ներկայացված են Աղյուսակ 30-ում:

- **2016 թ.-ին մանկապարտեզից օգտվում էր Հայաստանի բնակչության 15.0%-ը, հիմնական դպրոցից (1-9 դասարան)՝ 34.9%-ը, պետական բուհերից՝ 14.3%-ը:**
- **2016 թ.-ին նվազել է պետական բուհերում սովորող ունեցող ընտանիքների քանակը, սակայն աճել է մանկապարտեզներից օգտվող ընտանիքների քանակը:**

Կրթական հաստատություն	2011	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Պետական մանկապարտեզ	9.8%	11.9%	12.6%	12.0%	12.3%	15.0%	
Հիմնական դպրոց (1-9 դասարաններ	31.9%	29.4%	33.4%	31.6%	35.6%	34.9%	
Ավագ դպրոց (10-12 դասարաններ)	9.9%	11.0%	10.6%	8.8%	7.4%	8.4%	
Մասնավոր դպրոց, վարժարան, ճեմա	5.0%	1.5%	1.7%	1.5%	1.1%	1.2%	
Ուսումնարան, քոլեջ	1.8%	6.2%	5.3%	5.0%	5.0%	5.0%	
Պետական բուհ	18.0%	17.4%	15.6%	14.0%	17.1%	14.3%	
Մասնավոր բուհ	2.4%	2.1%	1.7%	1.5%	1.2%	1.3%	

Աղյուսակ 30. Ընտանիքները, որոնց անդամներն օգտվում են ուսումնական հաստատություններից, 2011-2016 թթ.

Ուսումնական հաստատությունների ֆինանսական մատչելիությունը, հաշվարկված դրանցից օգտվող ընտանիքների քանակից ներկայացված է Աղյուսակ 31-ում:

- **Եթե 2011-2015 թթ. ընթացքում կրթական հիմնարկների ֆինանսական մատչելիությունն ուներ նվազման միտումներ, ապա 2016 թ.-ին դրանց ֆինանսական մատչելիությունն աճել է:**
- **Բնակչությունն առավել մատչելի է համարում պետական մանկապարտեզները (այն մատչելի են համարել դրանցից օգտվողների 61.7%--ը), առավել դժվարամատչելի են պետական բուհերը (28.9%):**
- **Հարկ է նշել, որ հիմնական դպրոցների ֆինանսական մատչելիությունը պետք է համարել անբավարար, այն ֆինանսապես մատչելի են համարել այդ դպրոցներում սովորող աշակերտներ ունեցող ընտանիքների կեսից պակասը՝ 44.5%-ը:**

Կրթական հաստատություն	2011	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Պետական մանկապարտեզ	74.7%	66.1%	64.2%	67.0%	53.5%	61.7%	
Հիմնական դպրոց (1-9 դասարաններ	62.7%	43.7%	42.8%	47.9%	37.2%	44.8%	
Ավագ դպրոց (10-12 դասարաններ)	64.9%	47.5%	44.2%	43.1%	23.5%	40.5%	
Ուսումնարան, քոլեջ	58.6%	50.4%	33.7%	34.0%	33.3%	44.0%	
Պետական բուհ	42.3%	29.2%	23.3%	27.2%	22.5%	28.9%	

Այն ուսումնական հաստատությունները, որոնցից օգտվող ընտանիքների քանակն ընտրանքում փոքր էր չեն ընդգրկված աղյուսակում, մասնավորապես՝ Մասնավոր մանկապարտեզ՝ 8, Մասնավոր դպրոց՝ 5, Մասնավոր վարժարան կամ ճեմարան՝ 7, Մասնավոր բուհ՝ 9

Աղյուսակ 31. Ուսումնական հաստատություններում ուսման ծախսերի ֆինանսական մատչելիությունը՝ այդ ուսումնական հաստատություններից օգտվողների քանակից (այն ընտանիքների տոկոսը, ովքեր համարում են, որ ուսման ծախսերը հոգալը «բոլորովին դժվար չէ» կամ «այնքան էլ դժվար չէ»), 2011-2016 թթ.

6.6. Շրջակա միջավայր

Զեկույցում շրջակա միջավայրի ուսումնասիրված խնդիրներն են՝ օդի, ջրի և հողի աղտոտվածությունը, տուժածների քանակը բնական աղետներից, մասնավորապես՝ սողանքներից, վարարումներից/ջրհեղեղներից և թափառող և վնասակար կենդանիների առկայությունը բնակարանների շրջակայքում:

Շրջակա միջավայրն աղտոտող բաղադրիչները

Շրջակա միջավայրի աղտոտվածությունը որպես կյանքի որակի բաղադրիչ դիտարկվել է հետևյալ կերպ.

- **Եթե անձի կողմից ընկալվում է որևէ էկոլոգիական խնդիր, ապա այն նվազեցնում է նրա կյանքի որակը**:[8]

Բացի դրանից, զեկույցում ենթադրություններ չեն կատարվել շրջակա միջավայրն աղտոտող գործոնների համեմատական վտանգավորության աստիճանի վերաբերյալ (օրինակ՝ ո՞րն է ավելի վտանգավոր՝ փոշին, թե՞ արտադրական աղմուկը): Այդ պատճառով, շրջակա միջավայրի վիճակի ուսումնասիրության ընթացքում զեկույցում օգտագործվող գնահատականների գերակայությունների սանդղակավորում չի կիրառվել:

Շրջակա միջավայրի խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է. «**Հետևյալ բնապահպանական խնդիրներից որո՞նք են առկա Ձեր տան շրջակայքում**» հարցի միջոցով, երբ հարցվողին ներկայացվել է էկոլոգիական խնդիրների նախասահմանված ցանկը:

Էկոլոգիական խնդիրների **տարածվածությունը Հայաստանում և դրանց փոփոխության դինամիկան** 2012-2016 թթ. ներկայացված է Գծապատկեր 59-ում:

- **2016 թ.-ին Հայաստանում էկոլոգիական խնդիրների տարածվածությունը նվազել է:**
- **Հատկապես նշանակալի է փոշուց օդի աղտոտվածության նվազումը՝ 2015 թ. 56.4%-ից մինչև 38.6% 2016 թ.-ին:**
- **Նվազել է նաև տրանսպորտային աղմուկի, խմելու ջրի աղտոտվածության, ոռոգման ջրի աղտոտվածության ընկալումները և հաղորդումները կենցաղային աղբի կուտակումների մասին:**

[8] Ինչը չի բացառում, որ կարող է գոյություն ունենալ կյանքի որակը նվազեցնող էկոլոգիական խնդիր, որը չի ընկալվում անձի (հարցվողի) կողմից:



Գծապատկեր 59. Էկոլոգիական խնդիրների տարածվածությունը, Հայաստան, 2012-2016 թթ.: Տրված է տվյալ խնդրի առկայությունն ընկալող բնակչության քանակը

Թափառող և վնասակար կենդանիներ

Շրջակա միջավայրի վտանգների շարքում են նաև թափառող և վնասակար կենդանիները, մասնավորապես՝ փողոցային շները, առնետները ու մկները, կարիճներն ու թունավոր միջատները, օձերն ու այլ սողունները, ինչպես նաև գիշատիչ կենդանիները:

2011-2016 թթ. ընթացքում գնահատվել է այդ կենդանիների, սողունների և միջատների առկայությունը հարցվողի բնակարանի տան շրջակայքում: Տվյալները ներկայացված են Գծապատկեր 60-ում:

Գծապատկերի ընդհանուր պատկերը և տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանում 2011-2016 թթ. ընթացքում նկատվում է թափառող կենդանիների, սողունների և թունավոր միջատների առկայության նվազման միտում:**
- **Շարունակում է ամենից բարձր և շատ բարձր մնալ թափառող շների առկայությունը, որն իր տան/շենքի շրջապատում տեսնում է Հայաստանի բնակչության 70%-ը:**
- **Իր տարածվածությամբ երկրորդն են առնետներն ու մկները: Դրանք իրենց տան կամ շենքի շրջապատում տեսնում է Հայաստանի բնակչության 50%-ը:**
- **Կարիճներ, այլ թունավոր միջատներ և օձեր իր տան կամ շենքի շրջապատում ընկալում է Հայաստանի բնակչության 19-20%-ը:**



Գծապատկեր 60. Թափառող կենդանիների առկայությունը, 2011-2015, Հայաստան

Թափառող կենդանիների, թունավոր սողունների ու միջատների և կրծողների տարածվածությունն ըստ բնակավայրի տիպերի տրված է Աղյուսակ 34-ում:



Աղյուսակ 32. Թափառող կենդանիների առկայությունն ըստ բնակավայրի տիպի, 2011-2016 թթ., Երևան



Աղյուսակ 33. Թափառող կենդանիների առկայությունն ըստ բնակավայրի տիպի, 2011-2016 թթ., քաղաքներ



Աղյուսակ 34. Թափառող կենդանիների առկայությունն ըստ բնակավայրի տիպի, 2011-2016 թթ., գյուղեր

Աղյուսակների տվյալները ցույց են տալիս, որ.

- **2016 թ.-ին թափառող կենդանիների, սողունների և թունավոր միջատների առկայության ընկալումները նվազել են բնակավայրի բոլոր տիպերում:**

- **Թափառող շների առկայությունը համեմատաբար ավելի բարձր է գյուղերում և քաղաքներում (73-75%), քան Երևանում (65%):**
- **Առնետների և մկների առկայությունը համեմատաբար ավելի բարձր է գյուղերում (66%), քան քաղաքներում (40%) և Երևանում (41%):**
- **Կարիճների և այլ թունավոր միջատների առկայությունը համեմատաբար ավելի բարձր է Երևանում (21%) և գյուղերում (22%), քան քաղաքներում (13%):**
- **Օձերի առկայությունն ավելի բարձր գյուղերում (41%), քան քաղաքներում (11%) և Երևանում (8%):**
- **Գիշատիչ կենդանիների առկայության մասին են հայտնել գյուղական բնակիչների 25%-ը:**

Բավարարվածությունը իշխանությունների բնապահպանական գործունեությունից

2015 և 2016 թթ.-ին դիտարկվել է բնակչության բավարարվածության աստիճանը պետական և տեղական իշխանությունների բնապահպանական գործունեությունից: Այն գնահատվել է հետևյալ հարցի միջոցով. «**Ձեր կարծիքով, պետությունը և տեղական իշխանությունները բավարա՞ր չափով են ուշադրություն դարձնում շրջակա միջավայրի պահպանությանը**»:

- **2016 թ.-ին բնապահպանական խնդիրներին պետության ուշադրության գնահատականը նշանակալիորեն աճել է** (Գծապատկեր 61) **22.5%-ից հասնելով՝ 29.9%-:**
- **Այնուամենայնիվ այդ գնահատականը գտնվում է «ցածր» գնահատականների տիրույթում:**



Գծապատկեր 61. Բավարարվածությունը իշխանությունների բնապահպանական գործունեությունից

6.7. Ժամանց

Ազատ ժամանց

Աղյուսակ 35-ում ներկայացված է ժամանցի տարբեր ձևերի տարածվածությունը Հայաստանում: Տրված է ժամանցի տվյալ ձևն «ամեն օր» կամ «շաբաթը մի քանի անգամ» օգտագործող մարդկանց քանակը: 2015 թ.-ից ժամանցի դիտարկվող ձևերին ավելացվել է «**տանը հեռուստացույց դիտում**» ժամանցի ձևը:

Վերջին տարիներին ՀՀ Առողջապահության նախարարության նախաձեռնությամբ Հայաստանում քարոզվում է առողջ ապրելակերպը, որն իր մեջ ներառում է «**դրսում՝ առողջության համար զբաղվում մարմնամարզությամբ, թեթև քայլով, թեթև վազքով**» ժամանցը: 2016 թ.-ից հետազոտության ընթացքում դիտվել է նաև այդ ժամանցի ձևը:

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանում մարդկանց ժամանցի առավել տարածված ձևն է մնում տանը հեռուստացույցի դիտումը, որը ժամանցի ձև է հարցվածների 90.5%-ի համար:**
- **Առավել տարածված ժամանցի ձևերի երկրորդ խումբն են խումբ են կազմում՝**
  - **շենքի բակում կամ թաղում հարևանների հետ շփվելը՝ 71.7%,**
  - **գյուղամիջում համագյուղացիների հետ շփվելը՝ 68.5%:**
- **Հատկանշական է, որ դրսում՝ առողջության համար զբաղվում մարմնամարզությամբ, թեթև քայլով, թեթև վազքով զբաղվում է հարցվածների 27.3%-ը:**

Ժամանցի ձևեր	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Տանը հեռուստացույց դիտում	-	-	-	94.3%	90.5%	
Շենքի բակում կամ թաղում շփվում հարևանների և ընկերների հետ	72.7%	67.6%	71.8%	72.6%	71.7%	
Գյուղամեջում շփվում համագյուղացիների հետ (միայն գյուղերում)	55.3%	55.5%	64.0%	69.7%	68.5%	
Դրսում՝ առողջության համար զբաղվում մարմնամարզությամբ, թեթև քայլով, թե	-	-	-	-	27.3%	
Գեղարվեստական տպագիր գիրք կարդում	18.0%	16.5%	16.7%	18.9%	15.4%	
Տպագիր թերթ կամ ամսագիր կարդում	30.0%	24.0%	19.9%	21.0%	14.2%	
Սրճարան, բար այցելում	7.9%	6.2%	7.4%	5.4%	6.0%	
Ռեստորան այցելում	1.8%	1.6%	2.5%	1.8%	1.5%	
Թատրոն, օպերա կամ բալետ այցելում	1.1%	0.8%	0.6%	0.7%	0.7%	
Համերգ այցելում	-	-	0.5%	0.4%	0.5%	
Ցուցահանդես կամ թանգարան այցելում	-	0.4%	0.4%	0.8%	0.3%	

Աղյուսակ 35. Ժամանցի տարածվածությունը: Ներկայացված է ժամանցի ձևն «ամեն օր» կամ «շաբաթը մի քանի անգամ» օգտագործողների քանակը

Աղյուսակ 36-ում տրված է ժամանցի ձևերի օգտագործման ինտենսիվությունը, ինչպես նաև տվյալ ժամանցի ձևը չօգտագործելու պատճառները 2016 թ.-ին:

- **Ֆինանսական պատճառը ժամանցի տարբեր ձևերի օգտագործումից մարդկանց զրկող ամենատարածված պատճառն է: Դրա հետևանքով է, որ մարդիկ առավելապես չեն օգտվում՝ թատրոն, համերգ, ցուցահանդես, թանգարան, սրճարան, բար և ռեստորան:**
- **Ժամանակի սղությունը՝ երկրորդ տարածված պատճառն է: Դրա հետևանքով է, որ մարդիկ գիրք, տպագիր թերթ, ամսագիր չեն կարդում, դրսում չեն զբաղվում մարմնամարզությամբ, ցուցահանդես, թանգարան, համերգ, թատրոն չեն հաճախում:**

- Համայնքում տվյալ ժամանցի հնարավորության բացակայության պատճառը իր տարածվածությամբ երրորդն է, որի հետևանքով մարդիկ զրկվում են թատրոն, համերգ, ցուցահանդես հաճախելուց:
- Դրսում մարմնամարզությամբ չզբաղվելու բավական տարածված պատճառ է սովորություն չունենալը կամ համայնքում ընդունված չլինելը:
- Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում թատրոն և համերգ չեն հաճախում մարդկանց 78%-ը, ցուցահանդես կամ թանգարան չեն հաճախում՝ 82%-ը:
- Տարվա ընթացքում տպագիր թերթ չեն կարդում մարդկանց 59%-ը:

Ժամանցի ձևեր	Օգտվում են	Չեն օգտվում						ԴՊ	Ընդ.
		Ֆին. պատ-ճառով	Հեռու է/ համայն-քում չկա	Ժամա-նակ չունեն	Չեն ցանկա-նում	Սովորու-թյուն չու-նեն, ընդուն-ված չէ	Տանը չունեն		
Հեռուստացույց դիտում	93%	0%	0%	1%	3%	1%	1%	0%	100%
Գյուղամեջում շփվում համագյուղացիների հետ	86%	0%	0%	6%	4%	5%	0%	0%	100%
Շենքի բակում կամ թաղում շփվում հարևանների և ընկերների հետ	88%	0%	0%	5%	3%	4%	0%	0%	100%
Գեղարվեստական տպագիր գիրք կարդում	37%	0%	0%	32%	19%	10%	1%	1%	100%
Տպագիր թերթ կամ ամսագիր կարդում	31%	2%	2%	24%	24%	15%	1%	1%	100%
Թատրոն հաճախում	22%	28%	21%	16%	7%	5%	1%	0%	100%
Համերգ հաճախում	22%	30%	19%	16%	8%	5%	1%	0%	100%
Ցուցահանդես կամ թանգարան այցելում	18%	28%	19%	19%	10%	6%	1%	0%	100%
Սրճարան, բար այցելում	39%	35%	10%	7%	5%	4%	1%	0%	100%
Ռեստորան այցելում	42%	37%	7%	6%	5%	3%	1%	0%	100%
Դրսում՝ առողջության համար զբաղվում մարմնամարզությամբ, թեթև քայլով, թեթև վազքով	37%	2%	1%	22%	21%	17%	0%	1%	100%

Աղյուսակ 36. Ժամանցի ձևերն օգտագործողները և չօգտագործելու պատճառները

Մարմնամարզություն և մարմնի խնամք

Կյանքի որակի կարևոր բնութագրեր են մարմնամարզությամբ զբաղվելը և արտաքին տեսքի խնամքը: Տվյալ դեպքում՝ նկատի ունենք մասնագիտացված դահլիճներում մարմնամարզությամբ զբաղվելը:

2012-2016 թթ. հետազոտություններում դիտարկվել է այն հարցը, թե Հայաստանի չափահաս բնակչության ո՞ր հատվածներն են հաճախում տարբեր տիպի մարմնամարզական խմբակներ կամ օգտվում արտաքին տեսքի խնամքի հետ կապված ծառայություններից, մասնավորապես. 1. լողավազանից, 2. սպորտային խմբակից, 3. ֆիթնես մարզասրահից, 4. մերսումների սրահից, 5. մատնահարդարումից, 6. դիմահարդարումից և 7. պեդիկյուրից:

Ընդ որում՝ 1-4 հարցերը տրվել են միայն մինչև 50 տարեկան անձանց, իսկ 5-7 հարցերը՝ միայն մինչև 50 տարեկան կանանց:

Տվյալները ցույց են տալիս, որ.

- Եթե 2012-2015 թթ. ընթացքում Հայաստանում աստիճանաբար աճում էր **մասնագիտացված (որոնք բացարձակ մեծամասնությամբ վճարովի են)** օբյեկտներից (լողավազան, մերսումների սրահ, ֆիթնես մարզասրահ), օգտվողների թիվը, ապա 2016 թ.-ին այդ ցուցանիշը նվազել է (Գծապատկեր 62-Ա): Չի բացառվում, որ դա կապված է **դրսում հանրային կամ՝ անվճար օգտագործման համար նախատեսված մարմնամարզական հնարավորությունների աճի** հետ (տես՝ Աղյուսակ 35, «Դրսում առողջության համար մարմնամարզությամբ զբաղվողների» թիվը):
- **2012-2016 թթ. ընթացքում մոնոտոն աճել է մատնահարդարումից, դիմահարդարումից և պեդիկյուրից օգտվող մինչև 50 տարեկան կանանց թիվը:**
- **Մյուս կողմից, նվազել է ինչպես լողավազանից, մերսումների սրահից, ֆիթնես սրահից, այնպես էլ մատնահարդարումից, դիմահարդարումից և պեդիկյուրից ինտենսիվ կերպով (ամեն օր կամ շաբաթը մի քանի անգամ) օգտվողների թիվը** (Գծապատկեր 62-Բ)**:**



Գծապատկեր 62. Մարմնամարզության կամ մարմնի խնամքի ծառայություններից օգտվողները և ինտենսիվ օգտվողները 2012-2016 թթ. (Տոկոսները հաշվարկված են 18-50 տարեկանների քանակից: մատնահարդարումը, պեդիկյուրը և դիմահարդարումը հաշվարկվել է միայն կանանց շրջանում)

- **Լողավազանից, մերսումների սրահից, մարզասրահից և սպորտային խմբակներից տղամարդիկ օգտվում են շատ ավելի ինտենսիվ, քան կանայք (Աղյուսակ 37 և**

Աղյուսակ 38): Այդ տարբերությունն առավել զգալի է սպորտային խմբակներից օգտվելու տեսակետից:

Եթե 2015 թ.-ին սպորտային խմբակներ էին հաճախում 18-50 տարեկան տղամարդկանց 8.3%-ը, ապա կանանց դեպքում այդ ցուցանիշը 2.6% էր:

Օգտվում են ընդամենը	Արական			Իգական		
	2014	2015	2016	2014	2015	2016
Լողավազան	23.7%	24.3%	17.5%	7.1%	6.8%	6.1%
Մերսումների սրահ	3.0%	4.5%	2.7%	2.3%	1.6%	1.6%
Ֆիթնես ակումբ/մարզասրահ	8.2%	10.5%	6.2%	2.7%	5.6%	3.6%
Սպորտային խմբակ	3.7%	8.3%	4.5%	1.7%	2.6%	1.9%
Մատնահարդարում	-	-	-	28.6%	28.7%	33.3%
Դիմահարդարում	-	-	-	20.9%	25.2%	27.8%
Պեդիկյուր	-	-	-	15.8%	19.8%	20.1%

Աղյուսակ 37. Օգտվում են ընդամենը՝ ըստ սեռի, 2014-2016 թթ.

Օգտվում են ամեն օր կամ շաբաթը մի քանի անգամ	Արական			Իգական		
	2014	2015	2016	2014	2015	2016
Լողավազան	3.2%	2.8%	0.16%	0.9%	1.2%	0.00%
Մերսումների սրահ	0.2%	0.8%	0.00%	0.4%	0.4%	0.00%
Ֆիթնես ակումբ/մարզասրահ	2.7%	3.6%	0.32%	0.9%	2.5%	0.15%
Սպորտային խմբակ	1.2%	3.2%	0.64%	0.7%	1.6%	0.15%
Մատնահարդարում	-	-	-	2.0%	2.5%	0.00%
Դիմահարդարում	-	-	-	0.9%	1.7%	0.15%
Պեդիկյուր	-	-	-	0.7%	1.6%	0.00%

Աղյուսակ 38. Օգտվում են ամեն օր կամ շաբաթը մի քանի անգամ, ըստ սեռի, 2014-2016

Ուսումնասիրվել է այն հարցը, թե որոնք են մարմնամարզական խմբակներից և մարմնի խնամքի ծառայություններից չօգտվելու պատճառները: Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Մարմնամարզական և մարմնի խնամքի ծառայություններից չօգտվելու ամենատարածված պատճառը 2014-2016 թթ. Ընթացքում եղել է ֆինանսական անմատչելիությունը** (Աղյուսակ 39 - Աղյուսակ 41)**:**
- **Երկրորդ ամենատարածված պատճառն է եղել՝ ցանկություն կամ սովորություն չունենալը:**

Տարի 2014	Լողավազան	Մերսումների սրահ	Ֆիթնես ակումբ/մարզասրահ	Սպորտային խմբակ	Մատնահարդարում	Դիմահարդարում	Պեդիկյուր
Օգտվում են	14.5%	2.6%	5.2%	2.6%	28.6%	20.9%	15.8%
Չեն օգտվում, այդ թվում՝	85.5%	97.4%	94.8%	97.4%	71.4%	79.1%	84.2%
Ֆինանսական պատճառով	27.4%	40.3%	39.5%	32.6%	31.4%	33.0%	32.3%
Չեն ցանկանում, սովորություն չունեն, ընդունված չէ	25.3%	29.9%	25.9%	30.4%	21.6%	28.3%	33.0%
Հեռու է կամ համայնքում չկա	15.9%	13.8%	13.9%	12.1%	2.3%	2.0%	2.0%
Ժամանակ չունեն	10.9%	8.9%	11.7%	16.5%	5.7%	3.4%	3.8%
Չեն օգտվում այլ պատճառներով	6.0%	4.5%	3.8%	5.7%	10.4%	12.4%	13.0%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Աղյուսակ 39. Մարմնամարզության կամ մարմնի խնամքի ծառայություններից չօգտվելու պատճառները, 2014 թ.

Տարի 2015	Լողավազան	Մերսում-ների սրահ	Ֆիթնես ակումբ/ մարզասրահ	Սպորտային խմբակ	Մատնահարդարում	Դիմահարդարում	Պեդիկյուր
Օգտվում են	14.4%	2.9%	7.8%	5.1%	28.7%	25.2%	19.8%
Չեն օգտվում, այդ թվում՝	85.6%	97.1%	92.2%	94.9%	71.3%	74.8%	80.2%
Ֆինանսական պատճառով	32.9%	38.9%	35.5%	34.8%	34.2%	36.2%	33.8%
Չեն ցանկանում, սովորություն չունեն, ընդունված չէ	23.5%	30.6%	29.0%	31.9%	24.7%	27.5%	34.7%
Հեռու է կամ համայնքում չկա	14.5%	13.5%	12.9%	11.5%	3.9%	3.8%	3.9%
Ժամանակ չունեն	12.1%	12.4%	13.3%	14.7%	5.4%	3.6%	4.2%
Չեն օգտվում այլ պատճառներով	2.5%	1.9%	1.5%	2.0%	3.1%	3.6%	3.6%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Աղյուսակ 40. Մարմնամարզության կամ մարմնի խնամքի ծառայություններից չօգտվելու պատճառները, 2015 թ.

Տարի 2016	Լողավազան	Մերսում-ների սրահ	Ֆիթնես ակումբ/ մարզասրահ	Սպորտային խմբակ	Մատնահարդարում	Դիմահարդարում	Պեդիկյուր
Օգտվում են	11.5%	2.1%	4.9%	3.1%	33.3%	27.8%	20.1%
Չեն օգտվում, այդ թվում՝	88.1%	97.6%	94.8%	96.5%	66.7%	72.2%	79.9%
Ֆինանսական պատճառով	34.0%	39.0%	36.9%	35.5%	33.2%	35.6%	35.4%
Չեն ցանկանում, սովորություն չունեն, ընդունված չէ	19.6%	27.0%	26.3%	28.4%	23.7%	27.4%	34.6%
Հեռու է կամ համայնքում չկա	16.8%	15.6%	14.7%	13.9%	3.4%	4.0%	3.8%
Ժամանակ չունեն	15.3%	14.2%	14.9%	16.6%	5.6%	4.3%	5.3%
Չեն օգտվում այլ պատճառներով	2.4%	1.8%	1.9%	2.1%	0.9%	1.0%	0.7%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Աղյուսակ 41. Մարմնամարզության կամ մարմնի խնամքի ծառայություններից չօգտվելու պատճառները, 2016 թ.

Հանգիստ և տուրիզմ

Հետազոտությամբ ուսումնասիրվել է, թե Հայաստանի բնակչության, որ հատվածն է իր կամ՝ իր ընտանիքի հանգիստն անցկացրել իր բնակավայրից դուրս: Այդ ոլորտը ուսումնասիրվել է հետևյալ հարցի կիրառմամբ. «**Վերջին մեկ տարվա ընթացքում հետևյալ ճանապարհորդություններից որո՞նք եք իրականացրել Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները»:** Դիտարկվել են հետևյալ հանգստի ձևերը.

1. Հանգստանալ Հայաստանի/Արցախի հանգստյան տներում,
2. Հանգստանալ Վրաստանում՝ ծովափին,
3. Հանգստանալ արտասահմանում,
4. Արշավ բնության միջավայրում:

2011-2016 թթ. տվյալները ներկայացված են Աղյուսակ 42-ում:

Աղյուսակի տվյալներից բխում է, որ.

- **Հայաստանի կամ Արցախի հանգստյան տներում հանգստացած անձանց քանակը մնում է շատ ցածր՝ հանգստի այդ ձևերից օգտվել է Հայաստանի ընտանիքների 10.8%-ը:**

- **Հարկ է նշել, որ Վրաստանում՝ ծովափին հանգստացողները և արտասահմանում հանգստացողները բնակչության տարբեր խմբեր են: Բնակչության միայն 0.7%-ն է հանգստացել և Վրաստանում, և՛ արտասահմանում:**
- **Հետևաբար, Հայաստանի բնակչության մոտավորապես 9.9%-ը վերջին տարվա ընթացքում հանգստացել է արտասահմանում՝ Վրաստանում կամ այլ երկրում և 10.8%-ը՝ Հայաստանի կամ Արցախի հանգստյան տներում: Այսինքն՝ Հայաստանյան հանգստյան տների օգտագործումը մնում է շատ ցածր մակարդակի վրա:**
- **Եթե 2011-2015 թթ. ընթացքում նկատվում էր հանգստի և տուրիզմի բոլոր դիտարկված ձևերի տարածվածության նվազում, ապա 2016 թ.-ին այդ նվազման միտումը դադարել է:**
- **Առավել տարածված է «արշավ բնության գրկում» հանգստի ձևը, որից օգտվել են հարցվածների կամ նրանց ընտանիքների 18.5%-ը:**

Հանգստի/ճանապարհորդության ձև	2011	2012	2013	2014	2015	2016	Տրենդ
Հանգստանալ Հայաստանի/Արցախի հանգստյան տներում	25.5%	17.2%	18.6%	11.6%	10.3%	10.8%	
Հանգստանալ Վրաստանում՝ ծովափին	-	6.7%	5.4%	6.5%	5.5%	5.2%	
Հանգստանալ արտասահմանում	9.6%	5.3%	4.8%	4.5%	4.3%	4.1%	
Արշավ բնության միջավայրում	24.5%	26.6%	25.2%	21.7%	18.2%	18.5%	

Աղյուսակ 42. «Վերջին մեկ տարվա ընթացքում հետևյալ ճանապարհորդություններից որո՞նք եք իրականացրել Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները», 2011-2016 թթ.

6.8. Կյանքի որակի սոցիալ-հոգեբանական դետերմինանտները

Սոցիալական հավասարություն

Ինչպես Կյանքի որակի տեսակետից, այնպես էլ հասարակության կայունության տեսակետից ներկա աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում կարևոր նշանակություն ունի հասարակությունում սոցիալական հավասարության ընկալումները: Սոցիալական մեծ անհավասարությունը խաթարում է հասարակության սոցիալ-հոգեբանական վիճակը և ունակ է առաջացնելու տարաբնույթ սոցիալական խնդիրներ, այդ թվում նաև սուր կոնֆլիկտներ:

2016 թ. Կյանքի որակի հետազոտությունում գնահատվել է սոցիալական հավասարության/անհավասարության ընկալումները Հայաստանի հասարակությունում մի շարք տեսակետներից, այդ թվում.

- Դպրոցում լավ կրթություն ստանալու տեսակետից,
- Բարձրագույն կրթություն ստանալու տեսակետից,
- Պոլիկլինիկայում որակյալ բուժօգնություն ստանալու տեսակետից,
- Հիվանդանոցում որակյալ բուժօգնություն ստանալու տեսակետից,
- Բանակում ծառայելու տեսակետից,
- Բիզնես սկսելիս,
- Ազգային Ժողովի պատգամավոր ընտրվելու տեսակետից,
- Համայնքի ղեկավար ընտրվելու տեսակետից,

- Պետական պաշտոններում առաջընթացի տեսակետից,
- Խոշոր ձեռնարկություններում պաշտոնի կամ մասնագիտական առաջընթացի տեսակետից,
- Դատարանում՝ սեփական շահերը պաշտպանելիս,
- Ոստիկանության հետ հարցեր առաջանալիս,
- Պետության հետ հարցեր առաջանալիս:

Դիտարկված տեսակետներից Հայաստանում մարդկանց հնարավորությունները հավասար համարող անձանց քանակը տրված է Գծապատկեր 63-ում:



Գծապատկեր 63. Սոցիալական հավասարության ընկալումները Հայաստանի հասարակությունում: «Հավասա՞ր են արդյոք այսօր Հայաստանում մարդկանց հնարավորությունները հետևյալ տեսակետներից»: Տրված է «Այո» (հավասար են) պատասխանների տոկոսը:

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանի բնակչությունը մարդկանց հնարավորությունների հավասարությունը դիտարկված 13-ից տեսակետներից 9-ում գնահատում է «շատ ցածր», 3-ի տեսակետից՝ «ցածր» և միայն մեկ տեսակետից՝ (դպրոցում լավ կրթություն ստանալու տեսակետից) «միջին»:**

Այսինքն՝

- **Հայաստանում սոցիալական անհավասարությունը շատ լուրջ խնդիր է:**
- **Առավել մեծ է սոցիալական անհավասարության ընկալումը հետևյալ տեսակետներից (ցանկը տրված է անհավասարության նվազման կարգով).**
  - **Ազգային Ժողովի պատգամավոր ընտրվելու հնարավորության,**
  - **Պետական պաշտոններում առաջընթացի**
  - **Բիզնես սկսելիս**
  - **Պետության հետ հարցեր առաջանալիս,**
  - **Համայնքի ղեկավար ընտրվելիս,**
  - **Դատարանում սեփական շահերը պաշտպանելիս,**
  - **Ոստիկանության հետ հարցեր առաջանալիս,**
  - **Խոշոր ձեռնարկություններում պաշտոնի բարձրացման տեսակետից,**
  - **Հիվանդանոցում որակյալ բուժում ստանալու տեսակետից:**

Սոցիալական պաշտպանվածություն

Կյանքի որակի 2012-2016 թթ. հետազոտություններում հետազոտվել է այն հարցը, թե ինչ վտանգներ են ընկալում Հայաստանի քաղաքացիները, որոնք սպառնում են նրանց անձին, ընտանիքին կամ գույքին: Այն ուսումնասիրվել է հետևյալ հարցախմբի միջոցով. «**Որքանո՞վ եք հավանական համարում, որ կարող է տեղի ունենալ հետևյալը ...»:** Որից հետո հարցվողին ներկայացվել են դիտարկվող դեպքերը՝ առանձին-առանձին: Դիտարկվող դեպքերն էին.

1. Հիվանդանալու դեպքում չեք կարողանա ստանալ անհրաժեշտ բուժում,
2. Կարող եք մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների,
3. Պետությունը կարող է խլել կամ զավթել Ձեր սեփականությունը,
4. Որևէ հզոր անձ կարող է խլել կամ զավթել Ձեր սեփականությունը,
5. Ձեզնից կաշառք կպահանջեն՝ Ձեզ հասանելիքի կամ իրավունքի պաշտպանության դիմաց,
6. Դատարանում Ձեր նկատմամբ անարդար վերաբերմունքի,
7. Կհանդիպեք ոստիկանության անարդարացի ճնշումների,
8. Կարող են ձեզանից ինչ, որ բան գողանալ,
9. Կարող է բռնության ենթարկվել Ձեր երեխան՝ փողոցում կամ դպրոցում,
10. Գիշերը փողոցում կարող եք բռնության կամ այլ տհաճ միջադեպի ենթարկվել,
11. Ցերեկը փողոցում կարող եք բռնության կամ այլ տհաճ միջադեպի ենթարկվել,
12. Կարող են լինել հասարակական անկարգություններ և բռնություններ,
13. Կարող է պատերազմ սկսվել:

Գնահատման սանդղակն էր՝ «ընդհանրապես հավանական չէ», «ավելի շուտ հավանական չէ», «ավելի շուտ հավանական է», «միանշանակ հավանական է»:

Ակնհայտ է, որ 1 և 2 վտանգները արտահայտում են անձի **սոցիալական վտանգների** զգացողությունը, 3 և 4-ը՝ **սեփականության ուղղված վտանգները**, 5-7-ը՝ **իրավական պաշտպանվածության վտանգները**, 8-11-ը՝ **ֆիզիկական վտանգները** և 12-13-ը՝ **ներքին և արտաքին վտանգների** զգացողությունը:

Գծապատկեր 64-ում տրված է դիտարկվող վտանգները «միանշանակ հավանական» կամ «ավելի շուտ հավանական» համարող անձանց քանակը 2016 թ.-ին, իսկ Գծապատկեր 65-ում՝ այդ ընկալումների դինամիկան 2012-2016 թթ. ընթացքում:

Գծապատկերների տվյալների վերլուծությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին:

- **Հայաստանի հասարակությունում արտաքին և ներքին հասարակական վտանգների, ֆիզիկական վտանգների, իրավական վտանգների և սոցիալական վտանգների զգացողությունը բարձր են:**
- **Մյուս կողմից, եթե 2012-2015 թթ. ընթացքում հասարակությունում բոլոր դիտարկված վտանգների զգացողություններն աճում էին, ապա 2016 թ.-ին դիտարկված 13 վտանգներից 6-ի դեպքում նկատվել է դրանց տեղի ունենալու հավանականության ընկալման փոքրիկ նվազում:**
- **Ինչպես և 2015 թ.-ին, 2016 թ.-ին և՝ ամենաբարձր հավանականությամբ վտանգն է եղել պատերազմի վերսկսման վտանգը, որը հավանական են համարել բնակչության 77%-ը: Նշենք, որ 2012 թ.-ին այդ վտանգը հավանական եր համարել բնակչության միայն 22%-ը:**
- **Երկրորդ ամենաբարձր հավանականությամբ վտանգը բնակչությունը համարել է հասարակական անկարգությունների և բռնությունների վտանգը (63%): Նշենք, սակայն, որ այդ վտանգի հավանականության ընկալումը 2015 թ. համեմատ նվազել է 5%-ով:**



Գծապատկեր 64. Սոցիալական վտանգների հավանականությունների ընկալումները, 2016 թ.: Տրված է տվյալ սոցիալական վտանգը հավանական համարող անձանց քանակը



Գծապատկեր 65. Տարբեր վտանգներից պաշտպանվածության ընկալումների դինամիկան Հայաստանում, 2012-2016 թթ.: Տրված է տվյալ սոցիալական վտանգը հավանական համարող անձանց քանակը

Սոցիալական լարվածություններ

Կյանքի որակի ուսումնասիրության 2012-2016 թթ. հետազոտություններում դիտարկվել են Հայաստանի հասարակությունում մի շարք սոցիալական լարվածությունների ընկալումները: Դրանք ուսումնասիրվել են հետևյալ հարցի միջոցով՝ «**Տարբեր երկրներում հաճախ մարդկանց խմբեր տարբեր շահեր են ունենում, միմյանց չեն վստահում կամ չեն սիրում: Ձեր կարծիքով կա՞ հարաբերությունների նման լարվածություն հետևյալ խմբերի միջև**»: Լարվածության ինտենսիվությունը չափվել է հետևյալ սանդղակով՝ 1. միանշանակ չկա, 2. ավելի շուտ չկա, 3. ավելի շուտ կա, 4. միանշանակ կա:

Դիտարկվել են հետևյալ տիպի լարվածությունները.

- **Դասակարգային լարվածություն**, որը դիտարկվել է, որպես լարվածության ընկալում.
  - Հարուստների և աղքատների միջև
  - Աշխատավոր մարդկանց և ձեռնարկությունների տերերի միջև և
  - Աշխատողի ու նրա անմիջական ղեկավարի կամ վերահսկողի միջև
- **Էթնո-մշակութային լարվածություն**
  - Հայաստանի և Ղարաբաղի հայերի միջև
- Քաղաքական լարվածություն.
  - Պետության և աշխատավոր ժողովրդի միջև
  - Իշխանության և ընդդիմության միջև:

Գծապատկեր 66-ում տրված է սոցիալական լարվածությունների ընկալումները 2016 թ.-ին, իսկ Գծապատկեր 67-ում՝ դրանց դինամիկան 2012-2016 թթ. ընթացքում:



Գծապատկեր 66. Սոցիալական լարվածությունների ընկալումները Հայաստանում 2016 թ., Տրված է սոցիալական լարվածությունը «Միանշանակ կա» և «ավելի շուտ կա» պատասխանների տոկոսը



Գծապատկեր 67. Սոցիալական լարվածությունների ընկալումները Հայաստանի հասարակությունում (հաշվարկներում ներառված են նաև Դժվարանում եմ պատասխանել և Հրաժարվում եմ պատասխանել տարբերակները)

Տվյալներից բխում են հետևյալ եզրակացությունները.

- **Սոցիալական լարվածությունների ընկալումները շատ բարձր են:**
- **Քաղաքական լարվածությունների տեսակետից՝ պետության և աշխատավորների միջև լարվածություն է ընկալում բնակչության 81.1%-ը, իսկ իշխանության և ընդդիմության միջև՝ 76.8%-ը:**
- **Դասակարգային լարվածության տեսակետից՝ հարուստների ու աղքատների միջև լարվածություն է ընկալում բնակչության 75.8%-ը, աշխատավորների և ձեռնարկատերերի միջև՝ 78.5%-ը, աշխատողների և նրանց անմիջական ղեկավարների միջև՝ 74.6%-ը:**
- **Հայաստանում բարձր է երկու հայկական պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հայ ազգի երկու էթնոմշակութային խմբերի միջև լարվածության ընկալումը (60.2%):**

- **Մյուս կողմից, հարկ է նշել, որ եթե 2012-2014 թթ. նշված լարվածություններն ունեին աճի միտումներ, ապա 2014-2016 թթ. ընթացքում դրանք սկսել են նվազել:**

Քանի, որ պետության և ժողովրդի միջև լարվածության ընկալումը և դրա նվազեցումը կարևոր նշանակություն ունի հասարակական անդորրի պահպանման տեսակետից, դիտարկվել է այդ լարվածության դիրքավորվածությունը սոցիալ-ժողովրդագրական խմբերում (Գծապատկեր 68):



Գծապատկեր 68. Պետության և ժողովրդի միջև լարվածության ընկալումը սոցիալ-ժողովրդագրական խմբերում: «Տարբեր երկրներում հաճախ մարդկանց խմբեր տարբեր շահեր են ունենում, միմյանց չեն վստահում կամ չեն սիրում: Ձեր կարծիքով կա՞ հարաբերությունների նման լարվածություն հետևյալ խմբերի միջև Հայաստանում»: Տրված է «Միանշանակ կա» և «Ավելի շուտ կա» պատասխանների տոկոսը:

Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ.

- **Քաղաքական լարվածության ընկալումը հասարակության տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերում շատ բարձր է:**
- **Այն համեմատաբար ավելի բարձր է Երևանում, որտեղ այդ լարվածություն ընկալում է բնակչության 87.8%-ը:**

Սոցիալական կապիտալ

Ձեկույցում **սոցիալական կապիտալ** հասկացությունը կիրառված է նեղ իմաստով՝ ա) որպես հասարակությունում մարդկանց միջև վստահության մակարդակ, և բ) որպես մարդու սոցիալական կապերի ամբողջություն: Առաջինը կարելի է համարել որպես ֆոն, որտեղ կենսագործում է անձի սոցիալական կապերի ամբողջությունը:

Սոցիալական կապիտալը մի կողմից ուղղակիորեն ազդում է մարդու հոգեվիճակի վրա, մասնավորապես, որքան ավելի մեծ է սոցիալական կապիտալը, այնքան մարդն իրեն ավելի

վստահ է զգում կյանքում, իսկ մյուս կողմից, սոցիալական կապիտալն ունակ է փոխակերպվելու կապիտալի այլ տեսակների (ֆինանսական, ֆիզիկական, մարդկային, քաղաքական և այլն) և բարելավելու մարդու ոչ միայն սոցիալ-հոգեբանական միջավայրը, այլ նրա կենսամակարդակի և գործունեության բնութագրերը: Մասնավորապես, որքան ավելի մեծ է մարդու սոցիալական կապիտալը, այնքան ավելի մեծ են նրա հնարավորությունները դիմակայելու կյանքում հանդիպող տարբեր դժվարություններին և հաղթահարելու խոչընդոտները:

Սոցիալական կապիտալը ընդհանուր հասարակական մակարդակում

2016 թ. Կյանքի որակի հետազոտությունում ուսումնասիրվել են հասարակության մասշտաբով սոցիալական կապիտալի երկու բնութագիր, որոնք ուղեկցվել են մարդու ընդհանուր ինքնազգացողության և բնակչության շրջանում հոգեբանական յուրահատուկ բնութագրի՝ կառավարման լոկուսի նկարագրությունը:

Կառավարման լոկուսը հոգեբանական բնութագիր է, որը ցույց է տալիս, թե որքանով է անձն իր հաջողություններն ու անհաջողությունները վերագրում իր գործունեությանն ու կամքին կամ՝ արտաքին հանգամանքներին:

Այդ նպատակով կիրառվել է չորս հարց.

1. Ընդհանուր վստահությունը մարդկանց նկատմամբ՝ գնահատվել է.
   - **«Ի՞նչ եք կարծում՝ Հայաստանում մարդկանց մեծամասնությանը որքանով կարելի է վստահել»** հարցով:
2. Մարդկանց ընդհանուր արդարամտության գնահատականը, գնահատվել է.
   - **«Ընդհանուր առմամբ, Հայաստանում մարդիկ որքանո՞վ են արդար են միմյանց նկատմամբ»** հարցով:
3. Ընդհանուր բավարարվածությունը իր կյանքով, գնահատվել է.
   - «**Ընդհանուր առմամբ ներկայումս որքանո՞վ եք բավարարված Ձեր կյանքով**» հարցով
4. Կառավարման լոկուսը, գնահատվել է.
   - **«Ձեր կյանքի ընթացքը կախվա՞ծ է Ձեզնից, թե տարբեր հանգամանքներից»** հարցով:

Կոնցեպտները չափվել են 0-10 սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է ամենացածր գնահատականը, իսկ 10-ը՝ ամենաբարձր: Կառավարման լոկուսի դեպքում 10-ը նշանակել է կյանքի ընթացքի լիակատար կախվածությունը հարցվողից:

1-ին և 2-րդ հարցերը գնահատում են սոցիալական կապիտալի ընդհանուր մակարդակը հասարակությունում: 3-րդը՝ հասարակության ընդհանուր սոցիալ-հոգեբանական վիճակը, որը ֆունկցիա է սոցիալական կապիտալի մակարդակից (ինչպես նաև բազմաթիվ այլ գործոններից), իսկ 4-րդը՝ նկարագրում է հասարակությունում կառավարման լոկուսի բաշխումը:

Այդ բնութագրերը ներկայացված են միասին Գծապատկեր 69-ում, իսկ դրանց արժեքները սոցիալ-ժողովրդագրական խմբերում՝ Աղյուսակ 43-ում:



Գծապատկեր 69. Սոցիալական ինքնազգացողության բնութագրերը Հայաստանում, 2016 թ.: Տրված են բնութագրերի միջին արժեքները: Չափման սանդղակները՝ 0-10:

Գծապատկեր 69-ի տվյալները կարելի է մեկնաբանել նույն սկզբունքով, ինչ 0-100 միջակայքում փոփոխվող ինդեքսները: Այսինքն՝ [0; 2] միջակայքը համարել շատ ցածր գնահատականների տիրույթ, (2; 4] միջակայքը՝ ցածր գնահատականներ, (4; 6] միջակայքը՝ միջին գնահատականների, (6; 8] միջակայքը՝ բարձր գնահատականների և [(8; 10] միջակայքը՝ շատ բարձր գնահատականների տիրույթ:

Այդ դեպքում, ստացված տվյալները մեկնաբանվում են հետևյալ կերպ.

- **Հայաստանի հասարակությունը որպես ամբողջություն կամ միասնականություն, կիսով չափ է բավարարված իր կյանքով:**
- **Հայաստանի հասարակությունում առկա է մարդկանց (միմյանց) նկատմամբ վստահության դեֆիցիտ:**
- **Հայաստանի հասարակությունում մարդիկ միմյանց համարում են ոչ արդարամիտ:**
- **Հայաստանի հասարակությունում բնակչության կառավարման լոկուսը գտնվում է համարյա ուղիղ միջին արժեքի վրա, այսինքն՝ «Հայաստանի հասարակությունը», որպես մեկ ամբողջություն, համարում է, որ իր կյանքի ընթացքը «հավասարապես» կախված է և՛ իրենից, և՛ տարբեր հանգամանքներից:**

Աղյուսակ 43-ում յուրաքանչյուր բնութագրի սյունում կանաչ գույնով են ներկված երկու առավել բարձր գնահատականները պարունակող վանդակները, իսկ կարմիրով՝ երկու առավել ցածր գնահատականները պարունակող վանդակները: Աղյուսակի ներքևի տողում տրված են յուրաքանչյուր բնութագրի (սյան) արժեքների գրաֆիկները: Սյան ամենավերևի արժեքը (բնութագրի միջին արժեքը Երևանում) համապատասխան գրաֆիկում տրված է ձախից: Սյան ամենաներքևի արժեքը՝ աջից (այն ունի կարմիր գույն և համապատասխանում է բնութագրի միջին արժեքին ամբողջ հասարակությունում): Բոլոր չորս սյուներին համապատասխանող գրաֆիկներում բոլոր սյուները համադրելի են միմյանց հետ:

Բնութագիր	Բավարարվածու-թյունը կյանքով	Վստահությունը մարդկանց	Մարդկանց արդարամտությունը միմյանց նկատմամբ	Կառավարման լոկուս
Բնակավայր				
Երևան	4.88	3.53	3.14	4.76
Քաղաք	4.99	3.39	2.96	4.91
Գյուղ	4.72	3.35	2.87	5.03
Տարիք				
18-29	5.85	3.70	3.16	5.16
30-45	4.91	3.30	2.95	4.78
46-60	4.39	3.45	2.91	4.79
60+	3.84	3.15	2.93	4.94
Բարեկեցություն				
Ցածր	4.16	3.15	2.71	4.68
Միջին	5.38	3.70	3.29	5.09
Բարձր	6.21	3.82	3.35	5.26
Կրթություն				
Միջնակարգ	4.75	3.30	2.80	5.14
Միջին մասն.	4.46	3.16	2.82	4.75
Բարձրագույն	5.43	3.90	3.51	4.61
Սեռ				
Իգական	4.95	3.48	3.05	4.46
Արական	4.74	3.36	2.93	5.41
Ընդամենը	**4.85**	**3.42**	**2.99**	**4.90**
Գրաֆիկներ				

Աղյուսակ 43. Սոցիալական ինքնազգացողության գնահատականների միջին արժեքները սոցիալ-ժողովրդագրական խմբերում:

Աղյուսակ 43-ից երևում է, որ.

- **Բարձր բարեկեցության խմբում երկու ամենաբարձր գնահատականների շարքում են բոլոր չորս բնութագրերը՝ բավարարվածությունը կյանքով, վստահությունը մարդկանց նկատմամբ, մարդկանց արդարամտության գնահատականը և կառավարման լոկուսը:**
- **Ցածր բարեկեցության խմբում երկու ամենացածր գնահատականների շարքում են բավարարվածությունը կյանքով, վստահությունը մարդկանց նկատմամբ և մարդկանց արդարամտության գնահատականը:**
- **Բարձր կրթամակարդակով խմբում երկու ամենաբարձր գնահատականների շարքում են վստահությունը մարդկանց նկատմամբ և մարդկանց արդարամտության գնահատականները և երկու ամենացածր գնահատականների խմբում է կառավարման լոկուսը**
- **Ամենաերիտասարդների խմբում երկու ամենաբարձր գնահատականների խմբում է կյանքով բավարարվածության գնահատականը, իսկ ամենատարեցների խմբում՝ կյանքով բավարարվածության և մարդկանց նկատմամբ վստահության ամենացածր գնահատականները:**

Սոցիալական կապիտալը անձի մակարդակում

Այս կոնցեպտը գնահատվել է հետևյալ հարցախմբի միջոցով. «**Եթե, ծանր վիճակում հայտնվեք, ապա կստանա՞ք անշահախնդիր օգնություն [սուբյեկտ]**», որից հետո հարցվողին ներկայացվել է սոցիալական խմբերի հետևյալ ցանկը.

1. հարևաններից,
2. ընկերներից,
3. ընտանիքի անդամներից,
4. բարեկամներից,
5. աշխատակիցներից
6. քիչ ծանոթ մարդկանցից:

Այդ հարցերին տրված պատասխանների կիրառմամբ կազմավորվել է անձի **սոցիալական փոխօգնության խմբերում ընդգրկվածության ինդեքսը,** որը ցույց է տալիս, թե դիտարկված վեց խմբերից քանիսում է ընդգրկված հարցվողը: Ինդեքսը փոխվում է [0; 6] միջակայքում: Եթե հարցվողը ընդգրկված չէ դիտարկված վեց խմբերից ոչ մեկում, ապա նրա համար ինդեքսի արժեքը հավասար է 0-ի, իսկ եթե ընդգրկված է բոլոր վեց խմբերում, ապա՝ 6-ի:

Ստացված տվյալները ամբողջ հասարակության համար ներկայացված են Գծապատկեր 70-ում, իսկ ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի՝ Աղյուսակ 44-ում:

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանում սոցիալական փոխօգնության խմբերում ընդգրկվածությունը շատ բարձր է: Մասնավորապես, բնակչության մոտ 10%-ը ընդգրկված է բոլոր վեց սոցիալական փոխօգնության խմբերում, 36.4%-ը՝ 5 և ավելի խմբերում, 63.8%-ը՝ չորս և ավելի խմբերում, 78.5%-ը՝ երեք և ավելի խմբերում** (Գծապատկեր 71)**:**
- **Բնակչության միայն 1.8%-ն է, որն ընդգրկված չէ ոչ մի սոցիալական փոխօգնության խմբում և 8.4%-ն է ընդգրկված միայն մեկ սոցիալական փոխօգնության խմբում: Այսինքն, Հայաստանի բնակչության մոտ 10%-ն է, որը չունի կամ ունի միայն մեկ փոխօգնության խումբ կամ՝ ունի սոցիալական կապիտալի տրված սահմանման շրջանակներում դրա «ցածր» մակարդակ:**
- **Հայաստանում ամենատարածված սոցիալական փոխօգնության խումբը ընտանիքն է՝ որը նշել է բնակչության 97%-ը** (Գծապատկեր 70)**:**
- **Երկրորդ և երրորդը՝ բարեկամները և ընկերները, որոնք նշել է բնակչության համապատասխանաբար՝ 79.3% և 75.7%-ը:**



Գծապատկեր 70. Սոցիալական փոխօգնության խմբեր: «Եթե, ծանր վիճակում հայտնվեք, ապա կստանա՞ք անշահախնդիր օգնություն [սուբյեկտ]»: Տրված է «Այո» պատասխանների տոկոսը՝ բոլոր հարցվածների թվից:



Գծապատկեր 71. Սոցիալական փոխօգնության խմբերում ընդգրկվածության ինդեքսի բաշխումը: Տվյալները ցույց են տալիս, թե բնակչության, որ տոկոսն է ընդգրկված ինդեքսի արժեքին համապատասխան սոցիալական փոխօգնության խմբում:

Բնութագիր	Հարևաններից	Ընկերներից	Ընտանիքի անդամներից	Բարեկամներից	Աշխատակիցներից	Քիչ ծանոթ մարդկանցից
Բնակավայր						
Երևան	62.4%	77.2%	97.0%	77.3%	64.8%	31.0%
Քաղաք	62.5%	74.7%	96.7%	79.1%	72.0%	34.2%
Գյուղ	68.2%	75.0%	97.2%	81.5%	73.7%	39.4%
Բարեկեցություն						
Ցածր	62.0%	69.8%	95.4%	75.8%	63.6%	33.1%
Միջին	66.5%	80.5%	98.7%	82.3%	72.5%	38.6%
Բարձր	68.9%	86.7%	99.0%	85.4%	75.3%	33.7%
Տարիք						
18-29	67.9%	87.9%	99.2%	83.4%	68.5%	37.8%
30-45	67.7%	79.3%	97.7%	82.6%	71.2%	38.7%
46-60	60.8%	68.7%	97.1%	76.3%	69.8%	33.4%
60+	58.3%	59.1%	90.5%	70.1%	58.1%	23.2%
Կրթություն						
Միջնակարգ	66.9%	74.9%	97.3%	78.1%	67.0%	36.9%
Միջին մասն.	61.7%	69.6%	96.5%	77.7%	68.3%	32.3%
Բարձրագույն	62.8%	83.1%	96.8%	83.1%	71.5%	33.8%
Սեռ						
Իգական	65.7%	71.2%	97.4%	79.4%	70.6%	34.5%
Արական	63.1%	80.9%	96.5%	79.2%	68.0%	35.4%
Ընդամենը	**64.5%**	**75.7%**	**97.0%**	**79.3%**	**69.1%**	**34.9%**
Գրաֆիկներ						

Աղյուսակ 44. Եթե, ծանր վիճակում հայտնվեք, ապա կստանա՞ք անշահախնդիր օգնություն ...: Տոկոսները բոլոր հարցվածներից, բացի «Աշխատակիցներից» սյան, որտեղ տոկոսները հաշվարկված են աշխատողների քանակից:

Դիտարկված սոցիալական փոխօգնության խմբերի տարածվածությունը սոցիալ-ժողովրդագրական խմբերում ներկայացված է Աղյուսակ 44-ում, որտեղ յուրաքանչյուր բնութագրի սյունում կանաչ գույնով են ներկված երկու առավել բարձր գնահատականները պարունակող վանդակները, իսկ կարմիրով՝ երկու առավել ցածր գնահատականները պարունակող վանդակները: Աղյուսակի ներքևի տողում տրված են յուրաքանչյուր բնութագրի (սյան) արժեքների գրաֆիկները: Սյան ամենավերևի արժեքը (բնութագրի միջին արժեքը Երևանում) համապատասխան գրաֆիկում տրված է ձախից: Սյան ամենաներքևի արժեքը՝ աջից (այն ունի կարմիր գույն և համապատասխանում է բնութագրի միջին արժեքին ամբողջ հասարակությունում): Բոլոր չորս սյուներին համապատասխանող գրաֆիկներում բոլոր սյուները համադրելի են միմյանց հետ:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ.

- **Սոցիալական փոխօգնության խմբերում ամենաբարձր ընդգրկվածությունը ունեն բարձր բարեկեցությամբ անձինք: Նրանց շրջանում ընդգրկվածությունը երկու ամենաբարձր արժեքներն ունի՝ հարևաններ, ընկերներ, ընտանիքի անդամներ, բարեկամներ և աշխատակիցների խմբերի դեպքում:**

- **Երկրորդ առավել բարձր ընդգրկվածությամբ խումբն է 18-29 տարեկանների խումբը, որոնց շրջանում բարձր է ընկերների, բարեկամների և ընտանիքի անդամների փոխօգնության խմբերում ընդգրկվածությունը:**
- **Ամենացածր ընդգրկվածությունը ունեն՝ 60 և ավելի տարեկանների և ցածր բարեկեցությամբ անձանց խմբերը:**
- **Հայաստանում ընտանիքի ամրությունը կոմպենսացնում է սոցիալական անբարվոք սոցիալական վիճակը, հետևաբար, ընտանիքի ամրության բարձր մակարդակի պահպանումը պետք լինի Հայաստանի սոցիալական քաղաքականության առաջին գերակայությունը:**

Հարկ է նշել, որ սոցիալական ընդգրկվածության և բարեկեցության միջև փոխազդեցությունը երկկողմանի է: Այստեղ անշուշտ ազդեցության ուղղությունն, ընդհանուր դեպքում, երկկողմանի է՝ առավել բարձր բարեկեցությունն ապահովում է առավել բարձր ընդգրկվածություն փոխօգնության խմբերում, իսկ բարձր ընդգրկվածությունը այդ խմբերում նպաստում է անձի բարեկեցության աճին:

Հայտնի է, որ սոցիալական կապիտալը ունի ֆինանսական և տնտեսական կապիտալի փոխակերպվելու հատկություն:

Լավատեսությունը ապագայի նկատմամբ

Կյանքի որակի հետազոտությունում ապագայի նկատմամբ լավատեսությունը գնահատվել է մի քանի հարթություններում, մասնավորապես, տես՝ «Ընտանիքի բարեկեցության փոփոխության ընկալումներ» պարագրաֆը, էջ - 86 - և «Ընտանիքի բարեկեցության փոփոխության սպասումները» պարագրաֆը, էջ՝ - 89 - :

Լավատեսության գնահատվել է նաև հետևյալ հարցերի միջոցով.

«**Համաձա՞յն եք արդյոք, որ Ձեր երեխաները Հայաստանում կապրեն ավելի լավ, քան՝ Դուք**», որը ներկայացնում է «հեռու» ապագայում ընդհանուր լավատեսության դիրքորոշումը (Գծապատկեր 72):

«**Ձեր կարծիքով, ինչպե՞ս կփոխվի Հայաստանի ընդհանուր վիճակը Հաջորդ մեկ տարվա ընթացքում / Հաջորդ 5 տարիների ընթացքում / 10 տարի հետո»** (Գծապատկեր 73):

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Ընդհանուր լավատեսության մակարդակը Հայաստանում գտնվում է միջին մակարդակի ներքին տիրույթում՝ 43.4% և վերահաստատում են, որ.**
- **Լավատեսությունը աճում է բարեկեցության աճին զուգընթաց և ավելի բարձր է առավել երիտասարդ տարիքային խմբերում:**

Մեկ/հինգ/տաս տարի հետո ապագայի սպասումները գծապատկերը ցույց է տալիս, որ որքան ավելի հեռու է ապագան, այնքան ավելի է աճում դրա վերաբերյալ անորոշությունը: Եթե մեկ տարվա հեռանկարում հարցվածների միայն 12%-ն է դժվարացել պատասխանել կբարելավվի, թե՞ կվատանա իրավիճակը Հայաստանում, ապա հինգ տարվա հեռանկարում այդ անձանց թիվն աճել է մինչև 28%, իսկ 10 տարվա հեռանկարում՝ մինչև 37%:

Համապատասխանաբար նվազում են և՛ լավատեսական, և՛ վատատեսական դիրքորոշումների հարաբերական քանակը: Գնահատելու համար թե ինչպես է փոխվում լավատեսությունը

հեռանկարի աճի դեպքում, հաշվարկվել է «լավատեսների» թվի հարաբերությունը «վատատեսների» թվին (Գծապատկեր 74): Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ առավել հեռու հեռանկարում իրավիճակի լավատեսական գնահատականները հակված են աճելու: Այսպես, եթե հաջորդ տարվա իրավիճակի փոփոխությունը գնահատելիս «լավատեսների» թիվը 1.52 անգամ էր գերազանցում «վատատեսների» թվին, ապա հինգ տարվա հեռանկարները գնահատելիս, այդ հարաբերությունն աճում է մինչև 1.7, իսկ տաս տարվա հեռանկարը գնահատելիս՝ մինչև 1.73:



Գծապատկեր 72. «Համաձա՞յն եք արդյոք, որ Ձեր երեխաները Հայաստանում կապրեն ավելի լավ, քան՝ Դուք»



Գծապատկեր 73. Ապագայի սպասումները մեկ, հինգ, տաս տարիների ընթացքում



Գծապատկեր 74. Օպտիմիզմի ինդեքսը մեկ, հինգ և տաս տարիների հեռանկարում

6.9. Արտագնա աշխատանքներ և արտագաղթ

Հայաստանում **արտագնա աշխատանքի** մեկնելու հնարավորությունը էականորեն մեղմում է Հայաստանի աշխատաշուկայի լարվածությունը և բարձրացնում է արտագնա աշխատողի ընտանիքի բարեկեցության մակարդակը:

Մյուս կողմից, **արտագաղթը** Հայաստանից մնում է Հայաստանի հասարակության առավել սուր հարցերից մեկը:

Կյանքի որակի հետազոտության 2012-2016 թթ. զեկույցներում շարունակաբար ուսումնասիրվել է ինչպես արտագնա աշխատանքի, այնպես էլ բնակչության արտահոսքի հետ կապված հարցերը:

Արտագնա աշխատանքներ

2012-2016 թթ. Հայաստանում **արտագնա աշխատող ունեցող ընտանիքների քանակը** տատանվել է 20.5-22.0% միջակայքում (Գծապատկեր 75):

- **2016 թ.-ին արտագնա աշխատող է ունեցել Հայաստանի ընտանիքների 20.4%-ը:**

Արտագնա աշխատանքների հիմնական երկիրը Ռուսաստանն է, ուր ըստ 2014 թ. հետազոտության տվյալների արտագնա աշխատանքի են մեկնել արտագնա աշխատանքի մեկնողների 96.4%-ը:

Հատկանշական է, որ արտագնա աշխատանքների մեկնողների հարաբերական քանակը չի նվազել նույնիսկ 2014-2015 թթ., երբ Ռուսաստանում միջազգային պատժամիջոցների հետևանքով տնտեսական ճգնաժամ էր և տեղի էր ունեցել ռուսական ռուբլու փոխարժեքի մոտ 50% անկում:

- **Արտագնա աշխատող ունեցող ընտանիքների հարաբերական քանակը համեմատաբար ավելի մեծ է գյուղերում՝ 27.5%** (2016 թ.)**, քաղաքներում այդ թիվը 20.7% է, իսկ Երևանում՝ 12.2%** (Գծապատկեր 76)**:**

- **Արտագնա աշխատող ունեցող ընտանիքների քանակն ըստ բարեկեցության խմբերի էականորեն չի տարբերվում: Մի փոքր ավելի ցածր է այդ ցուցանիշը ցածր բարեկեցությամբ ընտանիքներում՝ 19.1%:**



Գծապատկեր 75. Արտագնա աշխատող ունեցող տնային տնտեսությունների քանակը



Գծապատկեր 76. Արտագնա աշխատող ունեցող տնային տնտեսությունների քանակն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության, 2016 թ.

Արտագնա աշխատանքների ազդեցությունը կյանքի որակի բաղադրիչների վրա

2013-2016 թթ. հետազոտություններում գնահատվել է ընտանիքում արտագնա աշխատողի առկայության ազդեցությունը հանրապետական և ընտանիքի մակարդակում կյանքի որակի բաղադրիչների վրա:

- **Ընտանիքում արտագնա աշխատողի առկայությունը համակարգային կերպով բարձրացնում էր բավարարվածությունը հանրապետական մակարդակում կյանքի որակի համարյա բոլոր բաղադրիչներից: Ընդ որում՝ 2016 թ.-ին այդ դրական ազդեցությունն ավելի մեծ է եղել, քան 2013-2015 թթ.-ին (Աղյուսակ 45):**
- **Ընտանիքում արտագնա աշխատողի առկայությունը համակարգային կերպով բարձրացնում է ընտանիքի մակարդակում կյանքի որակի բաղադրիչներից բավարարվածության մակարդակը: (Աղյուսակ 46):**

Կյանքի որակի մակրո մակարդակի բաղադրիչ	2013	2014	2015	2016
Դոլարի կուրսի կայունությունը	1.4%	5.4%	-0.4%	7.0%
Երկրում տնտեսական զարգացման տեմպերը	2.3%	4.4%	2.4%	5.7%
Աշխատողի իրավունքների պաշտպանվածությունը	2.2%	5.9%	-2.3%	5.6%
Ժողովրդի ընդհանուր կենսամակարդակը	3.0%	5.5%	3.2%	6.3%
Բնակարանային վարկերի մատչելիությունը	4.1%	6.3%	1.9%	1.3%
Թոշակների մակարդակը (2010 աշխատավարձ)	5.3%	6.7%	-0.3%	4.5%
Աշխատատեղերի առկայությունը	-0.2%	1.3%	-2.1%	-1.0%
Գների մակարդակը	0.7%	2.0%	1.3%	3.3%
Հայաստանի պաշտպանվածությունը պատերազմի վտանգից	-2.6%	4.1%	2.4%	5.7%
Երկրի պաշտպանվածությունը զանգվ. անկարգություններից	-1.8%	1.5%	-0.7%	3.1%
Կրթության որակը	7.6%	10.8%	7.0%	12.7%
Առողջապահության որակը	7.4%	4.9%	5.0%	12.9%
Հանգստի/ժամանցի բազմազանությունը	-2.1%	2.0%	-8.1%	2.0%
Սննդամթերքի որակը	5.6%	5.8%	4.9%	7.9%
Սպառողների իրավունքների պաշտպանվածությունը	2.1%	6.1%	2.2%	5.6%
Առողջապահության մատչելիությունը	2.4%	5.3%	1.6%	3.0%
Դեղերի գների մատչելիություն	2.8%	4.9%	3.2%	3.3%
Բանկային ծառայությունների որակը	10.9%	12.3%	1.0%	8.9%
Ինտերնետի որակը	5.3%	12.7%	-0.1%	6.7%
Առևտրում սպասարկման որակը	2.0%	3.7%	-2.4%	-0.4%
Հայաստանից դեպի դուրս ավտոբուսային գների մատչելիությունը	11.6%	8.6%	4.6%	16.6%
Միջքաղաքային տրանսպորտի աշխատանքի որակը	5.1%	4.2%	-0.7%	6.0%
Երկաթուղու տոմսերի մատչելիությունը	4.1%	1.5%	9.4%	4.0%
Միջքաղաքային ճանապարհների վիճակը	0.1%	5.4%	-2.4%	5.3%
Ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը	7.3%	7.5%	6.6%	11.6%
Քաղաքացիական ազատությունների աստիճանը	9.6%	8.9%	10.7%	2.3%
Տեղական իշխանությունների գործունեությունը	3.3%	3.2%	2.8%	5.9%
Դատավորների արդարության աստիճանը	7.3%	6.8%	0.1%	3.3%
Մարդու իրավունքների պաշտպանվածությունը	5.3%	8.3%	3.4%	4.3%
Կառավարության գործունեությունը	3.1%	-0.4%	0.1%	2.4%
Երկրում օրենքների կիրառելիությունը	3.4%	6.8%	2.7%	3.6%
Ընտրությունների արդարության մակարդակը	1.0%	0.6%	0.3%	1.7%
Երկրում կարիերայի հնարավորությունները	-0.2%	3.0%	1.3%	4.9%
Կաշառակերության դեմ պայքարը	4.8%	5.9%	1.3%	4.6%
Լրատվամիջոցների ազատության աստիճանը	-	-	-	3.6%

Աղյուսակ 45. Ընտանիքում արտագնա աշխատողի առկայության ազդեցությունը կյանքի որակի հանրապետական մակարդակի բաղադրիչների վրա, 2013-2016 թթ.: Թվերը նշանակում են, թե որքանով է աճում կյանքի որակի տվյալ բաղադրիչից բավարարված անձանց քանակը՝ ընտանիքում արտագնա աշխատողի առկայության դեպքում: Դրական թիվը (երկնագույն սյուներ) նշանակում է տվյալ բաղադրիչից բավարարված անձանց քանակի աճը, իսկ բացասական թիվ՝ նվազումը:

Կյանքի որակի անձի/ընտանիքի մակարդակի բաղադրիչ	2013	2014	2015	2016
Ձեր ընտանիքի անվտանգությամբ	3.6%	1.8%	2.6%	6.8%
Ձեր ներկա կենսամակարդակով, ապրելակերպով	6.6%	7.5%	1.4%	6.2%
Ձեր տան ունեցվածքով՝ կահույք, կենցաղ. տեխնիկա, խոհանոց. տեխնիկա	-1.3%	9.0%	-1.6%	6.2%
Ձեր ֆիզիկական առողջության վիճակով	1.1%	4.4%	-1.2%	5.7%
Ձեր ունեցվածքով՝ բնակարան, հողամաս, ավտոմեքենա, ավտոտնակ	3.2%	6.8%	-0.7%	4.8%
Ձեր հասարակական կյանքին մասնակցելու հնարավորությամբ	4.8%	4.9%	1.4%	4.5%
Ընկերների հետ ժամանակ անցկացնելու հնարավորությամբ	3.0%	5.5%	4.6%	4.3%
Ձեր հասարակական դիրքով	1.8%	6.4%	4.2%	4.1%
Ընտանիքում ժամանակ անցկացնելու հնարավորությամբ	4.6%	10.9%	1.6%	4.1%
Ձեր ընդհանուր հոգեվիճակով	0.0%	4.8%	0.7%	3.2%
Կյանքում հասած հաջողություններով	1.3%	2.8%	1.2%	2.8%
Ձեր թաղի կամ համայնքի հարցերի լուծմանը մասնակցելու հնարավորությամբ	-0.4%	1.4%	3.1%	2.5%
Ընտանիքի ֆինանսական վիճակով	-	-	-	2.4%
Ձեր ներկա աշխատանքով	-1.3%	-4.8%	-1.0%	2.0%
Ձեր բնակարանի վիճակով	1.1%	4.2%	0.3%	0.3%
Ձեր ստացած կրթությամբ	-3.3%	3.5%	-2.3%	-1.3%
Տարվա ընթացքում հանգստանալու հնարավորություններով	0.8%	-0.7%	-1.2%	-2.0%

Աղյուսակ 46. Արտագնա աշխատանքի մեկնող ընտանիքի անդամի առկայության ազդեցությունը կյանքի որակի անձի/ընտանիքի մակարդակի բաղադրիչների վրա, 2013-2016 թթ.: Թվերը նշանակում են, թե որքանով է աճում կյանքի որակի տվյալ բաղադրիչից բավարարված անձանց քանակը՝ ընտանիքում արտագնա աշխատողի առկայության դեպքում: Դրական թիվը (երկնագույն սյուներ) նշանակում է տվյալ բաղադրիչից բավարարված անձանց քանակի աճը, իսկ բացասական թիվ՝ նվազումը:

Արտագաղթի դիրքորոշումներ

2010-2016 թթ. ընթացքում Հայաստանում սահմանահատումների սալդոն (Հայաստան մուտք գործած և մեկնածների տարբերությունը) կազմել է միջին հաշվով 42,600 անձ (Գծապատկեր 77):



Գծապատկեր 77. Հայաստանի սահմանահատումների սալդոն (Հայաստան մուտք գործած և Հայաստանից մեկնածների տարբերությունը) և գումարային սալդոն 2010-2016 թթ.: Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

Այդ տարիներին Հայաստանից անվերադարձ հեռացել է մոտ 300,000 անձ: Արտագաղթի նման տեմպերի դեպքում 2020 թվականին Հայաստանի բնակչությունը կկազմի 2 միլիոն մարդ[9]: Այդքան բնակչություն ուներ Հայաստանը 1960-ականների սկզբին:

Հետազոտական տվյալները համահունչ են ներկայացված փաստացի տվյալներին: Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումները 2012-2016 թթ. Կյանքի որակի ինդեքսի հետազոտություններում, գնահատվել են միևնույն հարցի միջոցով՝ «**Հնարավորության դեպքում ընդմիշտ կմեկնեի՞ք Հայաստանից դուրս բնակվելու**»: Պատասխանների տարբերակներն էին՝ «Միանշանակ ոչ», «Ավելի շուտ՝ ոչ», «Ավելի շուտ՝ այո», «Միանշանակ այո»: Այն հարցվածներին, ովքեր ունեին արտագաղթելու դիրքորոշումներ հարց է տրվել. «**Ինչ-որ քայլեր կատարու՞մ եք այդ ուղղությամբ**»:

Հետազոտությունները տվյալները ցույց են տալիս, որ 2012-2014 թթ. ընթացքում Հայաստանից արտագաղթելու դիրքորոշում ունեցողների քանակը կրճատվում էր և 49.6%-ից նվազել է մինչև 42.4%: Սակայն 2014-2016 թթ. ընթացքում այդ թիվը մնացել է մոտավորապես նույն մակարդակի վրա՝ 2016 թ.-ին կազմելով՝ 43.2% (Գծապատկեր 78):

Արտագաղթելու ուղղությամբ ինչ-որ քայլեր ձեռնարկող անձանց քանակը նույնպես ուներ նվազելու միտում 2012-2014 թթ. ընթացքում: Սակայն 2014-2016 թթ. ընթացքում այդ մարդկանց քանակը դանդաղորեն աճել է և 2016 թ.-ին կազմել է ամբողջ չափահաս բնակչության 12.4%-ը: (Գծապատկեր 78): Այսպիսով.

- **Արտագաղթի դիրքորոշումները Հայաստանում և այդ ուղղությամբ ինչ, որ քայլեր կատարողների քանակը մնում է շատ բարձր:**



Գծապատկեր 78. Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշում ունեցողները և այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկածները (հաշվարկված են ամբողջ բնակչության թվից), 2012-2015 թթ.:

[9] Մանուկյան Ս. Ա.. Հարությունյան Գ. Ա. Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն (հետազոտական ծրագիր), ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՄԱԿ-Ի Բնակչության հիմնադրամ, «Նորավանք» ԳԿՀ: Երևան, 2014թ. 218 էջ:

Արտագաղթի հակված անձանց հարաբերական քանակը սոցիալ-ժողովրդագրական խմբերում 2014-2016 թթ. ներկայացված է Գծապատկեր 79-ում: Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Ըստ տարիքի 2016 թ.-ին ըստ տարիքի արտագաղթի դիրքորոշումն ամենից բարձրն է եղել 30-45 տարեկանների խմբում՝ 50.5%: Նվազելու միտում ունի արտագաղթի դիրքորոշումը 18-29 տարեկանների խմբում, մյուս կողմից՝ աճում է այդ դիրքորոշումը 40-60 տարեկանների խմբում:**
- **Ըստ կրթամակարդակի ամենից բարձրն է արտագաղթի դիրքորոշումը միջնակարգ կրթությամբ անձանց շրջանում՝ 47.5%:**
- **Ըստ բարեկեցության ամենաբարձրն է արտագաղթի դիրքորոշումը ցածր բարեկեցությամբ (46.0%) և միջին բարեկեցությամբ (44.3%) խմբերում:**
- **Ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի արտագաղթի դիրքորոշումն ամենից բարձրն է գործազուրկների շրջանում՝ 49.8%:**
- **Ըստ բնակավայրի տիպի և ըստ սեռի արտագաղթի դիրքորոշումների տարբերությունները փոքր են:**

Արտագաղթելու ուղղությամբ ինչ-որ քայլեր կատարող անձանց բաշխումները ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի ներկայացված է Գծապատկեր 80-ում: Տվյալները հաշվարկված են ամբողջ բնակչության թվից:

Տվյալներից երևում է, որ, եթե ամբողջ բնակչության կազմում արտագաղթելու ուղղությամբ ինչ-որ քայլեր ձեռնարկող անձինք 12.4% են, ապա այդ անձինք հարաբերականորեն ավելի մեծ թիվ են կազմում.

- Տղամարդկանց (15.7%), 18-29 տարեկանների (16.8%), 30-45 տարեկանների (15.0%), միջին բարեկեցության (14.8%), գործազուրկների (15.0), շրջանում:

Արտագաղթելու ուղղությամբ ինչ-որ քայլեր ձեռնարկած անձանց քանակն ըստ զբաղվածության կարգավիճակների հարաբերականորեն ավելի մեծ թիվ է կազմում.

- **Ծառայությունների և արհեստների ոլորտում ինքնազբաղվածները (19.6%), մասնավոր ձեռնարկություններում վարձու աշխատողների (17.9%), գործատուների (16.7%), գործազուրկների (15.0%) և բուհի ուսանողների (14.9%) շրջանում:**



Գծապատկեր 79. Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումները սոցիալ-ժողովրդագրական խմբերում, 2014-2015 թթ. (Տրված է մեկնելու նկատմամբ «Միանշանակ այո» և «Հավանաբար այո» պատասխանների տոկոսը):



Գծապատկեր 80. Հայաստանից ընդմիշտ մեկնելու ուղղությամբ ինչ-որ քայլեր ձեռնարկող անձինք, 2016 թ.



Գծապատկեր 81. Արտագաղթելու ուղղությամբ ինչ-որ բան ձեռնարկած անձինք ըստ զբաղվածության կարգավիճակների

Արտագաղթի պատճառները

Ուսումնասիրվել են ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշման դրդապատճառները: Դրա համար յուրաքանչյուր հարցվողի, ով նշել էր, որ հնարավորություն ունենալու դեպքում «միանշանակ» կամ «ավելի շուտ» կմեկներ ընդմիշտ Հայաստանից դուրս բնակվելու, հարց է տրվել, թե ինչու է նա հակված արտագաղթելու:

2012-2014 թթ. այդ պատճառները հավաքագրվել են բաց հարցի միջոցով, այսինք հարցվողին պատասխաններ չեն հուշվել, այլ հավաքագրվել են նրանց ինքնաբերաբար տրված պատասխանները: Հավաքագրվել են մինչև երեք պատճառ: Իսկ 2015 և 2016 թթ. հարցվողին մեկնելու պատճառները հուշվել են՝ նրանց ներկայացվել են այն առավել հաճախ հանդիպող պատճառները, որոնք հավաքագրվել են 2012-2014 թթ. ընթացքում:

Արտագաղթի պատճառներն ընդհանրացված տեսքով ներկայացված են Գծապատկեր 82-ում: Պատճառներն ընդհանրացվել են երեք խմբում՝ տնտեսական պատճառներ, սոցիալ-հոգեբանական պատճառներ և այլ պատճառներ:



Գծապատկեր 82. Հայաստանից ընդմիշտ մեկնելու ընդհանրացված պատճառները: Տոկոսները հաշվարկված են մեկնելու դիրքորոշում ունեցող անձանց քանակից: 2012-2016 թթ.: 2012-2014 թթ. պատճառները հավաքագրվել են բաց հարցի միջոցով: 2015 և 2016 թթ.-ին մեկնելու պատճառները ներկայացվել է են բացահայտորեն:

Գծապատկերի տվյալներից երևում է, որ.

- **Արտագաղթելու տնտեսական պատճառները՝ անկախ դրանց հավաքագրելու եղանակից մնացել են մոտավորապես նույն և շատ բարձր մակարդակի վրա դրանք 2012-2016 թթ. ընթացքում նշել են հարցվածների 82-88%-ը:**
- **Սոցիալ-հոգեբանական պատճառների տարածվածությունը բաց հարցով հավաքագրելիս, 2012-2014 թթ. ընթացքում աճել է 7%-ից մինչև 22.5%: Իսկ հուշումով հավաքագրելիս 2015 թ. կազմել են 82.4% իսկ 2016 թ.-ին՝ 92.7%:**

Սա նշանակում է, որ արտագաղթի պատճառները համակարգային են և ընդգրկում են հավասարապես տնտեսական և սոցիալ-հոգեբանական ոլորտները: Սակայն տնտեսական պատճառներն մարդկանց գիտակցությունում գտնվում են ավելի «վերին» մակարդակում և սպոնտան հավաքագրման և սահմանափակ ընտրություն դեպքում ճնշում են սոցիալ-հոգեբանական պատճառներին:

Գծապատկեր 83-ում ներկայացված են 2015-2016 թթ. հավաքագրված արտագաղթի պատճառների տարածվածությունը: Տոկոսները հաշվարկվել են արտագաղթի հակված անձանց թվից:

Գծապատկերի տվյալներից ընդհանուր եզրակացությունն այն է, որ.

- **Հայաստանում 2016 թ.-ին 2015 թ. համեմատ կտրուկ աճել է սոցիալ-հոգեբանական պատճառների տարածվածությունը:**



Գծապատկեր 83. Արտագաղթի պատճառների տարածվածությունը:

Արտագաղթի պատճառների տարածվածություն սոցիալ-ժողովրդագրական խմբերում ներկայացված է Աղյուսակ 47-ում, իսկ ըստ աշխատանքային կարգավիճակների՝ Աղյուսակ 48-ում:

Բնութագիր	Կատե-գորիա	Լավ աշխատանք ու բարեկեցիկ կյանք ունենալու համար	Իմ կամ երեխաներիս ավելի լավ ապագայի համար	Բարեկիրթ և կարգ ու կանոն ունեցող երկրում ապրելու համար	Ցանկանում եմ ավելի արդար երկրում բնակվել	Հայաստանի իշխանությունների ու վատ կառավարման պատճառով	Միավորվելու ընտանիքիս անդամների հետ կամ ամուսնանալու	Ինձ դուր չեն գալիս այստեղի մարդիկ
Բնակավայր	Երևան	84.2%	82.6%	75.0%	73.4%	68.8%	16.9%	11.5%
	Քաղաք	91.6%	81.0%	68.5%	67.7%	65.6%	17.9%	10.5%
	Գյուղ	89.5%	82.0%	69.7%	69.5%	60.0%	16.6%	11.9%
Տարիք	18-29	89.2%	75.4%	70.2%	63.6%	58.3%	14.0%	16.5%
	30-45	89.7%	87.3%	67.9%	70.2%	63.4%	13.4%	7.9%
	46-60	89.2%	82.8%	76.5%	77.2%	71.6%	23.6%	12.3%
	60+	73.8%	75.4%	72.1%	70.5%	68.9%	23.0%	6.6%
Բարեկ.	Ցածր	90.5%	82.7%	71.3%	70.4%	66.6%	18.7%	12.0%
	Միջին	84.9%	81.7%	70.0%	70.5%	62.1%	13.8%	11.6%
	Բարձր	86.5%	79.2%	74.0%	69.1%	61.7%	18.1%	7.4%
Կրթություն	Միջ.	89.6%	81.7%	71.9%	70.9%	64.4%	17.7%	12.6%
	Մ. մաս.	87.8%	81.5%	67.1%	69.8%	63.5%	19.8%	11.7%
	Բար.	85.6%	83.1%	74.3%	69.5%	66.5%	12.3%	8.0%
Սեռ	Իգական	87.0%	82.9%	69.6%	67.8%	59.9%	17.0%	13.1%
	Արական	89.7%	80.9%	73.0%	73.2%	70.0%	17.2%	9.4%
Ընդամենը		88.3%	82.0%	71.2%	70.3%	64.6%	17.1%	11.4%

Աղյուսակ 47. Արտագաղթի պատճառների տարածվածությունը սոցիալ-ժողովրդագրական խմբերում

Աղյուսակների տվյալները ցույց են տալիս, որ.

- **Բարեկեցիկ կյանքի համար են հակված արտագաղթելու առավելապես՝ ցածր բարեկեցությամբ խմբում և քաղաքներում:**
- **Երեխաների լավ ապագայի համար՝ 30-45 տարեկանների և բարձրագույն կրթությամբ խմբում:**
- **Բարեկիրթ երկրում բնակվելու համար՝ Երևանում և 40-60 տարեկանների և բարձրագույն կրթությամբ խմբում:**
- **Արդար երկրում են ցանկանում ապրել առավելապես՝ 46-60 տարեկանները, տղամարդիկ և երևանաբնակները:**
- **Վատ կառավարումից առավելապես դժգոհ են 46-60 տարեկանները և տղամարդիկ:**
- **Ընտանիքի հետ միավորվելու նպատակով են ցանկանում արտագաղթել առավելապես՝ 46-60 և 60-ից բարձր տարիքի մարդիկ:**
- **Հասարակական բարքերից առավելապես օտարվածություն զգում 18-29 տարեկանները և կանայք:**

Ըստ աշխատանքային կարգավիճակների արտագաղթի պատճառների դիտարկումը ցույց է տալիս, որ.

- **Բարեկեցիկ կյանքի համար դրդապատճառը համեմատաբար ավելի է տարածված բուհի ուսանողների և ոչ ֆորմալ սեկտորի վարձու աշխատողների շրջանում:**
- **Իր կամ երեխաների ապագայի ապահովումը՝ տնային տնտեսություն վարողների և մասնավոր ձեռնարկություններում վարձու աշխատողների շրջանում:**
- **Բարեկիրթ երկրում ապրելը՝ տնային տնտեսուհիների և բուհի ուսանողների շրջանում:**
- **Արդար երկրում բնակվելը՝ ոչ ֆորմալ սեկտորի վարձու աշխատողների և ինքնազբաղվածների շրջանում:**
- **Վատ կառավարման պատճառը՝ ինքնազբաղվածների և գյուղական ինքնազբաղվածների շրջանում:**
- **Ընտանիքների հետ վերամիավորումը՝ թոշակառուների և պետական սեկտորի վարձու աշխատողների շրջանում:**
- **Հասարակությունից օտարվածությունը՝ տնային տնտեսուհիների և ոչ ֆորմալ սեկտորում վարձու աշխատողների շրջանում:**

Կատեգորիա	Լավ աշխատանք ու բարեկեցիկ կյանք ունենալու համար	Իմ կամ երեխաներիս ավելի լավ ապագայի համար	Բարեկիրթ և կարգ ու կանոն ունեցող երկրում ապրելու համար	Ցանկանում եմ ավելի արդար երկրում բնակվել	Հայաստանի իշխանությունների ու վատ կառավարման պատճառով	Միավորվելու ընտանիքիս անդամների հետ կամ ամուսնանալու	Ինձ դուր չեն գալիս այստեղի մարդիկ
Վարձու աշխատող պետական ձեռնարկությունում	85.6%	82.9%	70.6%	71.8%	65.1%	22.9%	10.1%
Պայմանագրով վարձու աշխատող մասնավոր ձեռնարկությունում	85.9%	87.5%	74.6%	76.1%	68.1%	12.7%	8.5%
Առանց պայմանագրի վարձու աշխատող մասնավոր ձեռնարկությունում	92.6%	84.6%	68.0%	80.8%	65.4%	20.0%	12.5%
Ինքնազբաղված մասնագետ՝ իրավաբան, բժիշկ, հաշվապահ, ճարտարապետ և այլն	90.0%	60.0%	60.0%	40.0%	50.0%	20.0%	10.0%
Ինքնազբաղված՝ արհեստավոր, առևտուր, տաքսի սերվիս, վարսավիր և այլն	88.6%	84.3%	75.4%	76.8%	72.1%	13.2%	10.3%
Ինքնազբաղված՝ գյուղատնտեսությունում	89.7%	83.9%	75.9%	71.3%	71.3%	14.9%	8.0%
Տնային տնտեսություն վարող	89.4%	87.3%	77.5%	74.6%	70.4%	16.9%	17.6%
Բուհի ուսանող	96.7%	66.7%	76.7%	53.3%	53.3%	13.8%	10.0%
Թոշակառու	80.7%	80.7%	75.4%	66.7%	66.7%	22.8%	8.8%
Չեմ աշխատում՝ աշխատանք չեմ փնտրում	86.5%	81.3%	55.2%	62.5%	52.1%	19.8%	11.5%
Չեմ աշխատում՝ աշխատանք եմ փնտրում	90.3%	77.6%	68.9%	69.5%	61.0%	14.7%	11.0%

Աղյուսակ 48. Արտագաղթի պատճառների տարածվածությունն ըստ աշխատանքային կարգավիճակների

Արտագաղթի պատճառների գործոնային կառուցվածքը

Ուսումնասիրվել է այն հարցը, թե ինչպե՞ս են միմյանց հետ շաղկապված արտագաղթի դիտարկված պատճառները: Դրա համար իրականացվել է այդ պատճառների գործոնային վերլուծություն: Արտագաղթի պատճառների Գործոնային վերլուծությունը ցույց տվեց, որ լավագույն մոդելներ են.

- Եռագործոն մոդելը, որը բացատրում է 7 փոփոխականների ընդհանուր դիսպերսիայի 62%-ը և որի կազմում են հետևյալ գործոնները.
  - **Գ1. «Վատ կառավարման գործոնը»:** Այն իր մեջ ներառում է «Ցանկանում եմ ավելի արդար երկրում բնակվել», «Հայաստանի իշխանությունների ու վատ կառավարման պատճառով, «Բարեկիրթ և կարգ ու կանոն ունեցող երկրում ապրելու համար» և, մասնակիորեն, «Իմ կամ երեխաներիս ավելի լավ ապագայի համար» փոփոխականները
  - Գ2. «**Օտարման գործոնը**»: Այն իր մեջ ներառում է «Ինձ դուր չեն գալիս այստեղի մարդիկ», «Միավորվելու ընտանիքիս անդամների հետ կամ ամուսնանալու» փոփոխականները:
  - Գ3. «**Տնտեսական գործոնը**», որն իր մեջ ներառում է «Լավ աշխատանք ու բարեկեցիկ կյանք ունենալու համար» փոփոխականը:
- Քառագործոն մոդելը, որը բացատրում է 7 փոփոխականների ընդհանուր դիսպերսիայի 74%-ը և որի կազմում են եռագործոն մոդելի գործոնները.

- Գ1. «**Վատ կառավարման գործոնը**»
- Գ2. «**Օտարման գործոնը**»,
- Գ3. «**Տնտեսական գործոնը**»
- Գ4. «**Ապագայի գործոնը**»: Այն իր մեջ ներառում է «Իմ կամ երեխաներիս ավելի լավ ապագայի համար» փոփոխականը, որը դուրս է եկել Գ1-ի կազմից:

Գործոնային մոդելների կառուցվածքները տրված են Աղյուսակ 49 և Աղյուսակ 50-ում:

Փոփոխականներ	Գործոններ		
	Գ1	Գ2	Գ3
Ցանկանում եմ ավելի արդար երկրում բնակվել	**0.789**	0.159	-0.008
Հայաստանի իշխանությունների ու վատ կառավարման պատճառով	**0.743**	0.207	0.068
Բարեկիրթ և կարգ ու կանոն ունեցող երկրում ապրելու համար	**0.741**	0.145	0.160
Իմ կամ երեխաներիս ավելի լավ ապագայի համար	**0.564**	-0.222	0.052
Ինձ դուր չեն գալիս այստեղի մարդիկ	0.063	**0.760**	-0.021
Միավորվելու ընտանիքիս անդամների հետ կամ ամուսնանալու	0.097	**0.731**	0.052
Լավ աշխատանք ու բարեկեցիկ կյանք ունենալու համար	0.129	0.022	**0.986**

Աղյուսակ 49. Արտագաղթի պատճառների եռագործոն մոդելը

Փոփոխականներ	Գործոններ			
	Գ1	Գ2	Գ3	Գ4
Ցանկանում եմ ավելի արդար երկրում բնակվել	**0.824**	0.078	-0.012	0.097
Հայաստանի իշխանությունների ու վատ կառավարման պատճառով	**0.790**	0.123	0.065	0.063
Բարեկիրթ և կարգ ու կանոն ունեցող երկրում ապրելու համար	**0.768**	0.073	0.156	0.105
Միավորվելու ընտանիքիս անդամների հետ կամ ամուսնանալու	0.060	**0.792**	0.048	0.134
Ինձ դուր չեն գալիս այստեղի մարդիկ	0.137	**0.743**	-0.023	-0.122
Լավ աշխատանք ու բարեկեցիկ կյանք ունենալու համար	0.129	0.019	**0.986**	0.043
Իմ կամ երեխաներիս ավելի լավ ապագայի համար	0.181	0.004	0.045	**0.967**

Աղյուսակ 50. Արտագաղթի պատճառների քառագործոն մոդելը

Կյանքի որակի ինդեքսների ազդեցությունն ընդմիշտ արտագաղթի դիրքորոշման վրա

Հետազոտությունները ցույց են տվել, որ Կյանքի որակի ինդեքսները նշանակալի ազդեցություն ունեն Հայաստանից ընդմիշտ արտագաղթի դիրքորոշումների վրա: Գծապատկեր 84-ի տվյալները պատկերացում են տալիս այդ ազդեցության չափի մասին: Այստեղ տրված են կյանքի որակի հանրապետական, համայնքային և ընտանեկան մակարդակի ինդեքսների և ենթաինդեքսների արժեքները արտագաղթի հակված և արտագաղթի չհակված անձանց խմբերում:

- **Արտագաղթի հակված անձանց խմբում Կյանքի որակի բոլոր ինդեքսների և ենթաինդեքսների միջին արժեքներն ավելի ցածր են, քան արտագաղթի չհակված անձանց խմբում:**



Գծապատկեր 84. Կյանքի որակի ինդեքսների միջին արժեքները արտագաղթի հակված և արտագաղթի չհակված անձանց խմբերում, 2016 թ.: Բոլոր միջինների տարբերությունները վիճակագրորեն հավաստի են:

6.10. Ինֆորմացիոն վարք

Ինֆորմացիայի հիմնական աղբյուրները

Հայաստանում ինֆորմացիայի առավել տարածված աղբյուրների դինամիկան տրված է Գծապատկեր 85-ում: Այդ տվյալները ստացվել են հետևյալ հարցի միջոցով. «**Ի՞նչ աղբյուրներից եք հիմնական ծանոթանում նորություններին: Նշեք միայն առաջին և երկրորդ ամենակարևոր աղբյուրները**»: Գծապատկերի տվյալները ցույց են տալիս հարցվածների քանակը, ովքեր տվյալ ինֆորմացիայի աղբյուրը նշել որպես իրենց համար առաջին կամ երկրորդ աղբյուր:



Գծապատկեր 85. Ինֆորմացիայի աղբյուրների տարածվածությունը, 2013-2016 թթ.: «Ի՞նչ աղբյուրներից եք հիմնական ծանոթանում նորություններին: Նշեք միայն առաջին և երկրորդ ամենակարևոր աղբյուրները»: Տրված է տվյալ ինֆորմացիայի աղբյուրը որպես առաջին կամ երկրորդ նշած հարցվածների տոկոսը բոլոր հարցվածների քանակից:

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանում հեռուստատեսությունը մնում է որպես ինֆորմացիայի ստացման առավել տարածված աղբյուրը: 2016 թ.-ին այն որպես առաջին կամ երկրորդ առավել կարևոր աղբյուր նշել են բոլոր հարցվածների մոտ 85%-ը: Այդ ցուցանիշը 2013-2016 թթ. ընթացքում մնացել է գործնականում անփոփոխ:**
- **2013-2016 թթ. ինտերնետի՝ որպես առաջին կամ երկրորդ առավել տարածված ինֆորմացիայի աղբյուրի առավել տարածվածությունն աճել է 10%-ով՝ 49%-ից մինչև 59%:**
- **Միևնույն ժամանակ նվազել է միջանձնական շփումների նշանակությունը՝ 28.5%-ից մինչև 20.9%:**
- **Շարունակաբար նվազել է նաև լրագրերի և ամսագրերի՝ առանց այն էլ ցածր տարածվածությունը՝ 2013 թ.-ին 7.6%-ից՝ մինչև 4.7% 2016-ին:**

Գծապատկեր 86-ում ներկայացված է 2016 թ.-ին տարիքային խմբերում հեռուստատեսության, ինտերնետի և ռադիոյի տարածվածությունը որպես ինֆորմացիայի ստացման առավել կարևոր աղբյուր:

- **Հեռուստատեսությունը ինֆորմացիայի ստացման առավել կարևոր աղբյուրներ է ի թվում է 60-ից բարձր տարիքի անձանց 96.9%-ի համար, ապա 18-29 տարեկանների համար այն առաջին կարևոր ինֆորմացիայի աղբյուրների շարքում է միայն 73,5%-ի համար:**
- **Մյուս կողմից՝ ինտերնետն առաջին կամ երկրորդ ինֆորմացիայի աղբյուրն է 18-29 տարեկանների 84.2%-ի համար և որպես այդպիսին արդեն գերազանցում է հեռուստացույցին:**
- **Ռադիոն առաջին կամ երկրորդ ինֆորմացիայի աղբյուրն է 60 և ավելի տարեկանների 8.7%-ի, իսկ 18-29 տարեկանների ընդամենը՝ 2.6%-ի համար:**



Գծապատկեր 86. Հեռուստացույցը, ինտերնետը և ռադիոն որպես ինֆորմացիայի ստացման առաջին և երկրորդ ամենակարևոր աղբյուր տարիքային խմբերում: «Ի՞նչ աղբյուրներից եք հիմնական ծանոթանում նորություններին: Նշեք միայն առաջին և երկրորդ ամենակարևոր աղբյուրները»:, 2015 և 2016:

Հեռուստադիտումներ

Գծապատկեր 87-ում տրված է հեռուստադիտումներ օրական միջին ժամանակը՝ ժամերով:

- **Հայաստանում այն անձինք, ովքեր դիտում են հեռուստացույց օրական դրան են տրամադրում միջինը 3 ժամ 50 րոպե:**
- **Օրական ամենից երկար ժամանկ են միջին հաշվով հեռուստացույց դիտում 60 և ավելի տարեկանները՝ օրական միջինը 5 ժամ 25 րոպե, ցածր բարեկեցությամբ անձինք՝ 4 ժամ 10 րոպե, միջնակարգ և միջին մասնագիտական կրթությամբ անձինք, համապատասխանաբար՝ մոտ 4 ժամ և 4 ժամ 15 րոպե և գյուղաբնակները՝ 4 ժամ:**

Առավել դիտվող հեռուստաալիքներն են.

- **Արմենիան, որը որպես առաջին կամ երկրորդ առավել դիտվող հեռուստաալիք են նշել հարցվածների 62.3%-ը, Շանթը՝ 58.3%, Հ1-ը՝ 18.7%:**

- **Առավել դիտվող հեռուստաալիքների երկրորդ խումբն են կազմում՝ Կենտրոնը՝ 8.5% և ռուսաստանյան ОРТ Первый канал հեռուստաալիքը՝ 8.2%** (Գծապատկեր 88):



Գծապատկեր 87. Հեռուստադիտումների միջին ժամանակը



Գծապատկեր 88. Առավել դիտվող հեռուստաալիքները: («Ո՞ր հեռուստաալիքներն եք առավել հաճախ դիտում»: Ընդունվել է մինչև երկու պատասխան):

Ուսումնասիրվել է այն հարցը, թե ինչ տիպի հաղորդումներ են դիտում հեռուստադիտողները: Այն ուսումնասիրվել է հետևյալ հարցի կիրառմամբ. «**Հետևյալ հեռուստատեսային**

հաղորդումների տեսակներից որո՞նք եք գերադասում դիտել»: Հարցվողին՝ հեռուստահաղորդումների տրված ցուցակից թույլ տրվել ընտրել առավելագույնը երկու պատասխան: Ստացված արդյունքները ստորաբաժանված ըստ տարիքային խմբերի ներկայացված են Աղյուսակ 51-ում:

Հաղորդումների տեսակներ	18-29	30-45	46-60	60+	Ընդամենը
Սերիալներ, ժամանակակից ֆիլմեր	50.2%	44.9%	43.0%	40.8%	45.0%
Զվարճալի հաղորդումներ, շոուներ, ժամանակակից երաժշտություն	51.4%	33.3%	23.3%	13.0%	31.6%
Սովետական ժամանակի և դասական ֆիլմեր	10.6%	14.4%	18.7%	17.9%	15.3%
Լուրեր	51.1%	72.4%	78.0%	76.7%	69.7%
Սպորտային հաղորդումներ	17.0%	13.7%	13.6%	16.4%	14.8%
Մշակութային և կրոնական հաղորդումներ, դասական երաժշտություն	7.8%	9.3%	8.2%	13.4%	9.2%
Քաղաքական թեմաներով հաղորդումներ	3.0%	6.2%	9.4%	14.1%	7.6%

Աղյուսակ 51. Առավել դիտվող հեռուստահաղորդումները: Տոկոսները ցույց են տալիս տվյալ տիպի հեռուստահաղորդումներ դիտող անձանց քանակը: («Հետևյալ հեռուստատեսային հաղորդումների տեսակներից որո՞նք եք գերադասում դիտել»: Երկու պատասխան):

Տվյալները ցույց են տալիս, որ.

- **Բնակչությունն առավելապես դիտում է հեռուստատեսային լուրերը: Դրանք որպես առաջին կամ երկրորդ պատասխան նշել է հարցվածների 69.7%-ը:**
- **Հաջորդ առավել տարածված հեռուստահաղորդումը սերիալները և ժամանակակից ֆիլմերն են (45.0%),**
- **Երրորդը՝ զվարճալի հաղորդումները, շոուները և ժամանակակից երաժշտությունը (31.6%):**
- **Դրանց հետևում են՝ սովետական շրջանի և դասական ֆիլմերը (15.3%) և սպորտային հաղորդումները (14.8%):**

Հարկ է նշել, որ այս տվյալներն արտահայտում են ոչ այնքան հեռուստադիտողների նախասիրությունները, որքան հեռուստաալիքների ծրագրերը, հատկապես՝ հեռուստադիտումների առավել ինտենսիվ դիտման ժամանակահատվածում՝ 19-00-ից մինչև 23-00-ն:

Ինտերնետի օգտագործումը

Գծապատկեր 89-ում ներկայացված է տանը ինտերնետ ունեցող հարցվողների քանակը:

- **Տանն ինտերնետ ունի Հայաստանի բնակչության 75.7%-ը:**
- **Տանն ինտերնետ ունեցողների շրջանում հատկապես բարձր տոկոս է կազմում բարձր բարեկեցությամբ խումբը՝ 94.5%, բարձրագույն կրթությամբ անձինք՝ 89.3% և 18-29 տարեկանների խումբը՝ 86.9%:**
- **Հարկ է նշել, որ ինտերնետը տարածված է նաև ցածր բարեկեցությամբ բնակչության շրջանում՝ 63.1%:**

- **Բավական մեծ է նաև ինտերնետի առկայությունը Երևանի (83.2%) և գյուղաբնակների շրջանում (68.8%):**



Գծապատկեր 89. Ինտերնետ օգտագործողները 2016 թթ.

Ինտերնետի օգտագործման նպատակները

Ուսումնասիրվել է, թե Հայաստանի բնակչության շրջանում ի՞նչ նպատակներով են այն կիրառում: Գծապատկեր 92-ում ներկայացված է 2014-2016 թթ. ընթացքում տարբեր նպատակներով ինտերնետն օգտագործող հարցվածների քանակը: Իսկ Գծապատկեր 93-ում՝ ինտերնետը տվյալ նպատակներով՝ ինտենսիվ օգտագործող բնակչության քանակը: Զեկույցում **ինտենսիվ օգտագործում է** սահմանված տվյալ նպատակով ինտերնետն **ամեն օր կամ շաբաթական մի քանի անգամ** օգտագործումը:

Տվյալները ցույց են տալիս, որ բնակչությունն կողմից ինտերնետի օգտագործման առավել տարածված ուղղություններն են.

- **Նորությունների և անձին հետաքրքրող տեղեկությունների ընթերցանությունը: Այդ նպատակով 2016 թ.-ին ինտերնետ են օգտագործել հարցվածների 65.9%-ը:**
- **Ինտերնետով երաժշտության ունկնդրումը (61.4%):**
- **Շփումն արտասահմանում բնակվող հարազատների ու բարեկամների հետ (60.5%):**
- **Այդ նպատակներին մի փոքր զիջում է ինտերնետով շփումն ընկերների հետ (53.7%):**
- **Կինոֆիլմի դիտումը (50.8%):**

2016 թ.-ին ուսումնասիրվել է ինտերնետի ևս երկու յուրահատուկ ուղղություն.

- **Ինտերնետով գնումների կատարում, որով զբաղվում է հարցվածների 8.7%-ը:**
- **Եվ, ինչը պետք է անհանգստացնող լինի՝ ինտերնետով խաղադրույքների կատարումը՝ 2.0%:**



Գծապատկեր 90. Ինտերնետից օգտվելու նպատակները: Տրված է տվյալ նպատակով ինտերնետ օգտագործողների տոկոսը բնակչության ամբողջ քանակից, 2016 թ.

- **2014-2016 թթ. ընթացքում աճել է: Մասնավորապես՝ արագ է աճել նորությունների և հետաքրքրող նյութերի փնտրումը՝ 57%-%-ից մինչև՝ 66%,**
- **Երաժշտություն լսելը՝ 51%-ից մինչև 61%,**
- **Կինոֆիլմերի դիտումը՝ 43%-ից մինչև 51%:**

Ինտերնետն ինտենսիվ օգտագործում են.

- **Նորությունների և հետաքրքրող նյութերի փնտրման համար՝ 2016 թ.-ին 61.5%, ինչը շատ քիչ է զիջում այդ նպատակով ինտերնետի օգտագործմանն ընդհանրապես, և**
- **Ինտերնետով երաժշտություն լսելու համար՝ 53.5%:**



Գծապատկեր 91. Ինտերնետից օգտվելու նպատակները (Տրված է այդ նպատակով ինտերնետ օգտագործողների տոկոսը՝ բնակչության ամբողջ քանակից, 2014-2016 թթ.)



Գծապատկեր 92. Ինտերնետի ինտենսիվ օգտագործումն ըստ նպատակների, 2014-2015 թթ.: Տրված է «ամեն օր» կամ «շաբաթը մի քանի անգամ» տվյալ նպատակով ինտերնետ օգտագործողների քանակը բոլոր հարցվածների թվից

Ինտերնետային սոցիալական ցանցերի օգտագործումը

- **Սոցիալական ցանցերից օգտվողների քանակը 2015-2016 թթ. ընթացքում աճել է՝ 46.3%-ից մինչև 52.9%** (Գծապատկեր 93)**:**
- **Ընդ որում ինտենսիվ աճ՝ 6-8% տեղի է ունեցել բոլոր տարիքային խմբերում, բացի 60+ ավելի տարիքային խմբից:**

ում է բնակչության 46.3%-ը: Ընդ որում, 18-29 տարեկանների 78.4%-ը, իսկ 60-ից ավելի տարիքով անձանց 12.6%-ը:



Գծապատկեր 93. Սոցիալական ցանցերից օգտվողները, 2015-2016 թթ.

Առանձին սոցիալական ցանցերից օգտվողների քանակի դինամիկան ներկայացված է Գծապատկեր 94-ում, իսկ առանձին սոցիալական ցանցերից ինտենսիվ օգտվողների (ամեն օր կամ շաբաթական մի քանի անգամ) թվի աճը՝

- **2014-2016 թթ. ընթացքում առավել ինտենսիվ է աճել Facebook սոցիալական ցանցից օգտվողների քանակը՝ 28%-ից մինչև 39%: Այդ ցանցը ներկայում առավել տարածվածն է Հայաստանում և գերազանցում է երկրորդ տեղում ընթացող Одноклассники ցանցին 6.5%-ով:**
- **Одноклассники ցանցից օգտվողների և ինտենսիվ օգտվողների քանակն այդ տարիներին մնացել է մոտավորապես նույն մակարդակի վրա՝ 2016 թ.-ին կազմելով համապատասխանաբար՝ 32.7% և 27.3%:**
- **Աճի միտումներ են ունեցել ВКонтакте և Linkdin ցանցերից օգտվողների քանակը, համապատասխանաբար՝ 4.4%-ից 6.1% և 3.4%-ից 5.1%:**
- **Շատ թույլ տեմպերով աճել է նաև Twitter-ից օգտվողների քանակը՝ 1.2%-ից մինչև 1.5%:**



Գծապատկեր 94. Սոցիալական ցանցերից օգտվողները 2014-2016 թթ.



Գծապատկեր 95. Սոցիալական ցանցերից ինտենսիվ օգտվողները 2014-2016 թթ.: Ինտենսիվ օգտվող են համարվել ամեն օր 2 ժամից ավելի, ամեն օր 2 ժամից պակաս և շաբաթական մի քանի անգամ օգտվողները:

Քանի, որ սոցիալական ցանցերի օգտագործումն առավել տարածված է երիտասարդների շրջանում և այդ ցանցերն հաճախ կիրառվում են երիտասարդական լսարանի հետ հաղորդակցման և դրա կառավարման նպատակով, նպատակով, դիտարկվել է 18-29 տարեկանների խմբում Facebook-ից և Одноклассники ցանցից օգտվողների բաշխումները ըստ ինտենսիվության (Գծապատկեր 96, Ա, Բ):

- **Գծապատկերներից երևում է, որ 18-29 տարեկան երիտասարդների շրջանում Facebook-ի օգտագործումը աստիճանաբար ավելի է գերակշռում Одноклассники ցանցի օգտագործմանը:**
- **2016 թ.-ին Facebook-և ամեն օր 2 ժամից ավելի օգտագործող 18-29 տարեկանների քանակը հասել է 42%-ի, իսկ ամեն օր օգտագործողների քանակը՝ 61%-ի, այն դեպքում, երբ Одноклассники ցանցն ամեն օր 2 ժամից ավելի օգտագործող 18-29**

տարեկան երիտասարդների քանակը ենթադրաբար նվազել է և 2016 թ.-ին կազմել է 15%, իսկ ամեն օր օգտագործողների քանակը՝ 27%:





Գծապատկեր 96. Facebook և Одноклассники ցանցերի օգտագործումը 18-29 և 30-45 տարեկանների խմբերում

6.11. Քաղաքական մշակույթ

Հասարակական-քաղաքական մասնակցության հիմնական բնութագրերը

Հետազոտությամբ դիտարկվել են Հայաստանի բնակչության հասարակական-քաղաքական մասնակցության մի քանի հանգուցային բնութագրերը, այդ թվում կուսակցական անդամության քանակը, հասարակական կազմակերպություններին անդամակցողների քանակը և հասարակական նախաձեռնություններին աջակցողների կամ մասնակցողների քանակը (Գծապատկեր 97):

Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ.

- **2014-2016 թթ. ընթացքում հասարակական կազմակերպությունների անդամների քանակն ունեցել է աճի միտում և 2016 թ.-ին կազմել է 3.5%:**
- **2016 թ.-ին 2015 թ. համեմատ աճել է նաև հասարակական նախաձեռնություններին աջակցող կամ մասնակցող անձանց քանակը և կազմել է 10.2%:**
- **Նույնպիսի միտում է ունեցել նաև որևէ կուսակցության անդամակցողների քանակը և կազմել է 12.1%:**



Գծապատկեր 97. Հասարակական-քաղաքական մասնակցության հիմնական տարրերը, 2014-2016թթ.

Քաղաքական լոյալությունը

Հասարակության լոյալությունը պետության քաղաքական կուրսի նկատմամբ ուսումնասիրվել է «**Ձեր կարծիքով Հայաստանը ընթանում է ճի՞շտ ուղղությամբ, թե՞ սխալ ուղղությամբ**» հարցի կիրառմամբ (Գծապատկեր 98):



Գծապատկեր 98. Հասարակության ընդհանուր լոյալությունը քաղաքական կուրսի նկատմամբ, 2016թ.

- **Հասարակության ընդհանուր լոյալությունը Հայաստանի քաղաքական կուրսի նկատմամբ գտնվում է ցածր մակարդակի վրա և 2016 թ.-ին կազմել է 18.6%:**
- **Ընդ որում, եթե 2013-2015 թթ. ընթացքում այն ունեցել է թեթև աճի միտում, ապա 2016 թ.-ին նորից անկում է ունեցել:**
- **Ընդհանուր լոյալությունը շատ ցածր է բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերում** (Գծապատկեր 99)**:**
- **Այն համեմատաբար ավելի ցածր է 18-29 տարեկանների, Երևանի բնակչության, բարձրագույն կրթությամբ անձանց և ցածր բարեկեցությամբ անձանց շրջանում:**

Գծապատկեր 100-ում ներկայացված է ընդհանուր քաղաքական լոյալության գնահատականներն ըստ աշխատանքային կարգավիճակների:

- **Ընդհանուր քաղաքական լոյալությունը համեմատաբար ավելի ցածր է ինքնազբաղված մասնագետների (իրավաբան, բժիշկ, ճարտարապետ և այլն, այդ խմբում 78.9%-ը համարում է, որ Հայաստանն ընթանում է սխալ ուղղությամբ), ստվերային տնտեսություն աշխատող վարձու բանվորները՝ 74.2%, վարձու աշխատողները մասնավոր ձեռնարկություններում՝ 73.2%, գործատուները՝ 72.7%:**
- **Ընդհանուր քաղաքական լոյալությունը համեմատաբար ավելի բարձր է՝ պետական ձեռնարկություններում վարձու աշխատողների շրջանում՝ 63.9% և գյուղատնտեսությունում ինքնազբաղվածների շրջանում՝ 66.2%:**



Գծապատկեր 99. Հասարակության ընդհանուր լոյալությունը քաղաքական կուրսի նկատմամբ սոցիալ-ժողովրդագրական խմբերում, 2016թ.



Գծապատկեր 100. Հասարակության ընդհանուր լոյալությունը քաղաքական կուրսի նկատմամբ ըստ աշխատանքային կարգավիճակների, 2016թ.

Աշխարհամակարգային գիտակցություն

Աշխարհամակարգային վերլուծության մակրոսոցիոլոգիական տեսությունը սահմանում է, որ կապիտալիստական հասարակարգում գերակայությունները բաշխված են հետևյալ կերպ՝ կենտրոնը կամ հեգեմոնիան խոշոր կապիտալի սեփականատերերի դասակարգն է, կիսածայրամասը՝ պետական բյուրոկրատիան, իսկ ծայրամասը՝ փոքր բիզնեսը, ինքնազբաղվածները և վարձու աշխատողները: Ընդորում՝ բյուրոկրատիան միաժամանակնաև

բուֆեր է կենտրոնի և ծայրամասի միջև՝ պաշտպանելով հեգեմոնիայի շահերը՝ նաև մեղմացնում է նրա և ծայրամասի միջև հակասությունները[10]:

Հետազոտության ընթացքում վեր է հանվել, թե որքանով է Հայաստանի հասարակական գիտակցությունը ադեկվատ աշխարհամակարգային վերլուծության դրույթներին:

Դրա համար կիրառվել են հետևյալ հարցերը.

- «**Ձեր կարծիքով, ո՞ւմ է պատկանում իշխանությունը Հայաստանում**»:
- «**Ո՞ւմ շահերն է առաջին հերթին պաշտպանում պետությունը**»:

Երկու դեպքում էլ հարցվողին ներկայացվել է քաղաքական սուբյեկտների ցանկը. մեծահարուստներին/կուսակցությունների առաջնորդներին ու առաջին դեմքերին/պետական բարձրաստիճան պաշտոնյաներին/փոքր բիզնեսին, առևտրականներին /վարձու աշխատողներին/ գյուղացիներին/ ամբողջ ժողովրդին: Հարցվողը կարող էր նշել մինչև երկու պատասխան:

- «**Ձեր կարծիքով, այսօր Հայաստանում պետությո՞ւնն է իր կամքը թելադրում մեծահարուստներին, թե՞ մեծահարուստները՝ պետությանը**»:

Ստացված արդյունքները ներկայացված են Գծապատկեր 101 Ա և Բ-ում և Գծապատկեր 102-ում:

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ.

- **Հայաստանի հասարակությունը ադեկվատ է ընկալում կապիտալիստական համակարգի (արդի աշխարհամակարգի) կառուցվածքն ու քաղաքական սուբյեկտների միջև գերակայությունների բաշխումը: Այսպես.**
- **Համարում են, որ իշխանությունը Հայաստանում պատկանում է մեծահարուստներին՝ հարցվածների 58%-ը, իսկ պետական բարձրաստիճան պաշտոնյաներին և կուսակցական առաջնորդներին՝ 17-ական տոկոսը:**
- **Համարում են, որ պետությունն առաջին հերթին պաշտպանում է մեծահարուստների շահերը՝ հարցվածների 54%-ը, իսկ պետական պաշտոնյաներինը՝ 26%-ը, կուսակցական առաջնորդներինը՝ 9%-ը:**
- **Համարում են, որ մեծահարուստներն են իրենց կամքը թելադրում պետությանը՝ հարցվածների 71%-ը, իսկ, որ պետությունն էիր կամքը թելադրում մեծահարուստներին՝ 17%-ը: Ընդ որում, հարցվածների 7.3%-ը ինքնաբերաբար պատասխանել է, որ. «Դրանք նույնն են»:**

[10] Валлерстайн И. Миросистемный анализ: Введение / пер. Н. Тюкиной, М.: Издательский дом «Территория будущего», 2006, - 248 ст.





Գծապատկեր 101. Աշխարհամակարգային գիտակցություն



Գծապատկեր 102. «Ձեր կարծիքով, այսօր Հայաստանում պետությո՞ւնն է իր կամքը թելադրում մեծահարուստներին, թե՞ մեծահարուստները՝ պետությանը»:

Հայաստանի կարևորագույն խնդիրները

Հայաստանի կարևորագույն խնդիրների գերակայությունները ուսումնասիրվել է հետևյալ հարցի միջոցով. «**Հետևյալ խնդիրներից ըստ առաջնահերթության ո՞ր երեք խնդրին պետք է ուշադրություն դարձնել Հայաստանում՝ նշել ըստ կարևորության**»: Հարցվողին քարտի միջոցով ներկայացվել է գնահատվող խնդիրների ցուցակը (Գծապատկեր 103):



Գծապատկեր 103. Հայաստանի առաջնահերթ խնդիրները

- **Հայաստանի առաջնահերթ խնդիրներն են առողջապահության մատչելիությունը, որը որպես երեք առաջնահերթությունների շարքում նշել է բնակչության 55%-ը, իսկ որպես առաջին առաջնահերթություն՝ 31%-ը:**
- **Բանակի հզորացումը՝ համապատասխանաբար՝ 52% և 16.4%:**
- **Երրորդ առաջնահերթություն է՝ արդար ընտրությունների իրականացումը՝ համապատասխանաբար 34% և 14%:**

Ստացված առաջնահերթությունները հաղորդակցում են հանրապետական մակարդակում կյանքի որակի կարևորագույն բաղադրիչների և սոցիալական վտանգների ընկալումների հետ: Առաջնահերթությունների ընկալումը սոցիալ-ժողովրդագրական խմբերում տրված է Աղյուսակ 52-ում:

Խնդիր	Տարիք					Բնակավայր			Կրթություն			Սեռ		Բարեկ.			ՀՀ
	18-24	25-29	30-45	46-60	60 +	Երևան	Քաղաք	Գյուղ	Միջ	Մ. մաս.	Բար.	Իգ.	Ար.	Ցածր	Միջին	Բարձր	
Առողջապահության մատչելիությանը	47.3%	45.9%	56.9%	59.7%	51.7%	55.4%	53.9%	53.1%	53.0%	60.3%	50.1%	63.5%	43.2%	56.6%	53.1%	47.6%	54.1%
Բանակի հզորացմանը	51.9%	44.9%	51.4%	51.6%	57.7%	50.5%	53.7%	50.4%	52.8%	50.1%	50.1%	49.9%	53.2%	50.1%	54.4%	49.8%	51.4%
Արդար ընտրությունների իրականացմանը	34.5%	33.7%	30.5%	34.5%	36.2%	35.0%	33.0%	32.1%	31.9%	34.6%	35.0%	33.5%	33.3%	31.3%	35.2%	36.9%	33.4%
Թոշակառուների ու հաշմանդամների վիճակին	26.1%	27.1%	22.0%	29.1%	47.5%	28.7%	33.3%	25.1%	30.2%	33.1%	21.8%	32.0%	25.0%	34.3%	22.3%	22.3%	28.7%
Մեծահարուստներին ու իշխանավորներին օրենքին ենթարկելուն	25.8%	33.3%	22.2%	25.5%	18.1%	30.5%	24.0%	19.6%	20.5%	25.1%	32.2%	21.8%	28.2%	23.4%	27.1%	24.9%	24.8%
Արդյունաբերության զարգացմանը	19.7%	19.8%	23.9%	24.4%	21.9%	25.7%	25.4%	17.2%	20.5%	21.7%	27.3%	20.0%	25.6%	24.1%	18.2%	26.2%	22.6%
Գյուղատնտեսության զարգացմանը	17.0%	25.4%	24.9%	23.5%	17.7%	13.6%	14.7%	37.9%	27.6%	20.1%	15.8%	18.3%	27.5%	20.8%	26.2%	21.7%	22.6%
Ազատ առևտրի զարգացմանը	22.3%	25.7%	17.9%	14.5%	7.2%	18.8%	14.9%	17.5%	17.8%	13.2%	20.2%	12.5%	22.7%	15.0%	19.5%	20.7%	17.2%
Կրթության որակին	23.5%	18.2%	20.5%	11.6%	7.5%	13.9%	16.8%	18.1%	14.8%	14.7%	20.2%	18.7%	13.3%	14.6%	16.9%	20.4%	16.2%
Գիտության զարգացմանը	23.1%	14.5%	13.4%	9.6%	13.6%	14.7%	12.6%	13.6%	13.2%	12.4%	16.0%	14.7%	12.6%	13.1%	14.0%	15.2%	13.7%
Ընտանեկան բռնության հարցերին	3.0%	3.0%	3.7%	2.4%	3.0%	2.6%	3.7%	2.9%	3.7%	2.9%	1.9%	4.3%	1.5%	3.5%	2.2%	2.9%	3.0%
ԴՊ	0.0%	0.3%	1.5%	1.5%	0.8%	1.2%	0.9%	1.0%	1.1%	0.8%	1.1%	1.0%	1.1%	1.2%	1.0%	0.6%	1.0%

Աղյուսակ 52. Հայաստանյան խնդիրների կարևորությունը սոցիալ-ժողովրդագրական խմբերում: Կարմիր են յուրաքանչյուր տողի 5 ամենաբարձր, և կանաչեն՝ 5 ամենացածր արժեքները

Խնդիր	Վարձու աշխատող պետական ձեռնարկությունում	Դայմանագրով վարձու աշխատող մասնավոր ձեռնարկությունում	Առանց պայմանագրի վարձու աշխատող մասնավոր ձեռնարկությունում	Ինքնազբաղված մասնագետ՝ իրավաբան, բժիշկ, հաշվապահ, ճարտարապետ և այլն	Ինքնազբաղված՝ արհեստավոր, առևտրական, տաքսի սերվիս, վարսավիր և այլն	Ինքնազբաղված՝ գյուղատնտեսությունում	Գործատու	Տնային տնտեսություն վարող	Բուհի ուսանող	Թոշակառու	Չեմ աշխատում՝ աշխատանք չեմ փնտրում	Չեմ աշխատում՝ աշխատանք եմ փնտրում	Ընդամենը
Ազատ առևտրի զարգացմանը	15.2%	16.5%	31.7%	15.8%	22.4%	19.1%	33.3%	15.5%	15.9%	6.9%	14.1%	23.3%	17.2%
Առողջապահության մատչելիությանը	58.1%	42.4%	41.3%	47.4%	42.3%	48.0%	58.3%	64.3%	47.8%	58.1%	64.1%	52.3%	54.1%
Արդար ընտրությունների իրականացմանը	31.6%	29.7%	39.7%	47.4%	39.7%	27.0%	41.7%	33.6%	30.4%	30.9%	41.7%	32.6%	33.4%
Արդյունաբերության զարգացմանը	23.2%	31.6%	20.6%	21.1%	26.9%	18.6%	16.7%	16.3%	29.0%	23.0%	20.3%	23.9%	22.6%
Բանակի հզորացմանը	58.1%	48.7%	49.2%	63.2%	44.2%	49.5%	41.7%	44.9%	59.4%	54.8%	46.9%	55.0%	51.4%
Գիտության զարգացմանը	14.2%	22.8%	14.3%	5.3%	10.3%	12.7%	0.0%	13.8%	23.2%	9.2%	10.9%	14.5%	13.7%
Գյուղատնտեսության զարգացմանը	17.7%	15.2%	12.7%	26.3%	25.6%	56.4%	33.3%	21.6%	11.6%	18.9%	16.1%	19.3%	22.6%
Ընտանեկան բռնության հարցերին	1.9%	1.9%	1.6%	10.5%	1.3%	1.5%	0.0%	6.0%	1.4%	2.8%	1.6%	5.1%	3.0%
Թոշակառուների ու հաշմանդամների վիճակին	26.5%	22.8%	28.6%	21.1%	25.6%	20.1%	8.3%	33.9%	23.2%	51.2%	22.4%	27.5%	28.7%
Կրթության որակին	18.7%	15.8%	15.9%	5.3%	10.3%	13.2%	8.3%	19.1%	30.4%	7.4%	25.5%	14.5%	16.2%
Մեծահարուստներին ու իշխանավորներին օրենքին ենթարկելուն	25.2%	42.4%	36.5%	31.6%	32.1%	14.7%	50.0%	23.3%	21.7%	18.4%	21.4%	23.3%	24.8%
ԴՊ	1.3%	0.6%	1.6%	0.0%	1.3%	2.0%	0.0%	1.1%	0.0%	1.4%	1.6%	0.0%	1.0%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

Գծապատկեր 104. Կարևորագույն խնդիրները աշխատանքային կարգավիճակներում: Կարմիր են յուրաքանչյուր տողի 3 ամենաբարձր, և կանաչ են՝ 3 ամենացածր արժեքները